



ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՎԱԶԱՆԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Ծրագիր No BSB-1145



Տարածաշրջանային գործողությունների ծրագրեր

ՍԱԵ-ում մշակույթի և ժառանգության վրա հիմնված փորձառական զբոսաշրջության
զարգացման համար

COMMON BORDERS. COMMON SOLUTIONS.



**ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՎԱԶԱՆԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՉՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ**

Ծրագիր No BSB-1145

Տարածաշրջանային գործողությունների ծրագրեր

ՍԱԵ-ում մշակույթի և ժառանգության վրա հիմնված փորձառական զբոսաշրջության
զարգացման համար

Մարտ 2021 թ.



Չեղինակներ և երախտիքներ

Վառնայի մենեջմենթի համալսարանին (ՎԱՐ)

ՏԳԾ՝ ՍԱԵ տարածաշրջանի համար

Արիստոտելի Սալոնիկի համալսարանին (ԱՍՐ)

ՏԳԾ՝ Հունաստանի համար

City_Space_Flux հետազոտական խումբ

Աթինա Յաննակու, ԱՍՐ պրոֆեսոր

Անգելինա Ապոստոլու, ԱՍՐ գիտաշխատող

Վասիլիկի Բիրու-Աթանասիու, ԱՍՐ գիտաշխատող

Ապոստոլոս Պապագիաննակիս, ԱՍՐ դոցենտ, PRO-EXTOUR ծրագրի համակարգող

Հաշվետվության պատրաստմանն աջակցել են՝

ԱՍՐ գիտաշխատող Կոնստանտինա Դիմիտրա Սալատան

ԱՍՐ ասիստենտ Աթինա Վիտոպուլուն

Վրաստանի արվեստի և մշակույթի կենտրոնին (ՎԱՄԿ)

ՏԳԾ՝ Վրաստանի համար

Լելա Խարտիշվիլի, ՎԱՄԿ PRO-EXTOUR ծրագրի զբոսաշրջության փորձագետ/գիտաշխատող

Մարիամ Դվալիշվիլի, ՎԱՄԿ PRO-EXTOUR ծրագրի ղեկավար

Նաթիա Տրապաիձե, ՎԱՄԿ PRO-EXTOUR ծրագրի համակարգող

Մարիամ Կախնիաշվիլի, ՎԱՄԿ PRO-EXTOUR ծրագրի օգնական

Երևանի պետական համալսարանին (ԵՊՀ)

ՏԳԾ՝ Հայաստանի համար

Գոռ Ալեքսանյան, ԵՊՀ դոցենտ, հետազոտող

Սեյրան Սուվարյան, ԵՊՀ դոցենտ, հետազոտող

Ալեքսանդր Մարկարով, ԵՊՀ պրոֆեսոր, PRO-EXTOUR ծրագրի համակարգող

Խոհարարական արվեստի և հյուրընկալության

առոցիացիային

ՏԳԾ՝ Բուլղարիայի համար



Հեղինակային իրավունք © 2020 PRO EXTOUR PROJECT

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Ամբողջ հրատարակության կամ դրա մասի վերարտադրումը և տարածումը թույլատրվում է, բացառությամբ առևտրային նպատակների համար, պայմանով, որ հղումներում որպես սկզբնաղբյուր նշվի ծրագրի գործընկերությունը:

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրամիության ֆինանսական օժանդակությամբ: Այս հրապարակման բովանդակության համար պատասխանատվություն են կրում բացառապես հեղինակները, և այստեղ որևէ կերպ չեն արտացոլված Եվրամիության տեսակետները:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	7
ՆԱԽԱԲԱՆ.....	8
Տարածաշրջանային գործողությունների ծրագիր՝ ՀԱՅԱՍՏԱՆ	10
Մշակութային ժառանգության վրա հիմնված փորձառական զբոսաշրջության (ՄԺՀՓՁ) անհրաժեշտությունը, տեսլականը և նպատակները ՀՀ-ում	10
ՀՀ մշակութային ժառանգության վրա հիմնված փորձառական զբոսաշրջության զարգացման ՈՒԹՅՎ վերլուծություն	10
Մշակութային ժառանգության վրա հիմնված փորձառական զբոսաշրջության զարգացման թաղաքականության ապահովման հնարավոր ռազմավարական գործողությունները ՀՀ-ում .	15
Եզրակացություններ.....	19
Տարածաշրջանային գործողությունների ծրագիր՝ ԲՈՒՆԱՐԻԱ	20
ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջությունը Բուլղարիայում: ժամանակակից վիճակը և զարգացման ուղիները	20
Երկրի մշակութային ժառանգության վրա հիմնված փորձառական զբոսաշրջության ՈՒԹՅՎ վերլուծությունը	21
Քաղաքականության հնարավոր տարբերակների նախանշումը	27
Եզրակացություններ.....	30
Տարածաշրջանային գործողությունների ծրագիր՝ ՎՐԱՍՏԱՆ	32
ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության զարգացումը Վրաստանում	32
Վրաստանի ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության ՈՒԹՅՎ վերլուծություն	33
Քաղաքականության հնարավոր տարբերակները.....	37
Ռազմավարական տեսլականը, նպատակները և գործողությունների ծրագիրը.....	39
Եզրակացություններ.....	43
Տարածաշրջանային գործողությունների ծրագիր՝ ՀՈՒՆԱՍՏԱՆ.....	44
ժամանակակից վիճակը՝ ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները (սպառնալիքները)	44
Ռազմավարական գերակայությունները, նպատակները և գործողությունները	48
Հնարավոր ֆինանսական ռեսուրսներ և շահառուներ.....	59
Հիմնական շահառուները.....	61
Տարածաշրջանային գործողությունների ծրագիր՝ ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՎԱԶԱՆԻ ԵՐԿՐՆԵՐ	63



Ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջությունը ՍԱԵ տարածաշրջանում: 63

ՍԱԵ տարածաշրջանում ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության ՈԻԹՅՎ վերլուծություն 64

Ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության զարգացման և աճի հնարավոր ռազմավարական գործողությունները ՍԱԵ տարածաշրջանում 69

Եզրակացություններ..... 77

ՕԳՏԱԳՈՐԵՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 78



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՍԱԵ	Սևծովյան ավազանի երկրներ
ԴԿԿ	Դեստինացիաների կառավարման կազմակերպություն
ՎԱՄԿ	Վրաստանի արվեստի և մշակույթի կենտրոն
ՎՁԱԿ	Վրաստանի զբոսաշրջության Ազգային Վարչություն
ՄԺՅՓՁ	Մշակույթի և ժառանգության վրա հիմնված փորձառական զբոսաշրջություն
ԲԳՆ	Վրաստանի բնապահպանության և գյուղատնտեսության նախարարություն
ԿԳՅ	Կարիքների գնահատման հաշվետվություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՊՄՅՅ	Պետություն-մասնավոր հատված համագործակցություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԳՄԾ	Գործողությունների մարզային ծրագիր
ՉՓՁ	Չբոսաշրջության փոքր ձեռնարկություն
ՈՒԹՅՎ	Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների վերլուծություն
ՏՕ	Տուրօպերատոր
ՅՈՒՆԵՍԿՕ	Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն
ՃՁՀԽ	Ճանապարհորդության և զբոսաշրջության համաշխարհային խորհուրդ
ՄԱՅՁԿ	Միավորված ազգերի համաշխարհային զբոսաշրջային կազմակերպություն



ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթղթում համախմբված են 5 տարածաշրջանային գործողությունների ծրագրեր (ՏԳԾ-ներ)՝ ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջությունը մասնավորապես Հայաստանում, Բուլղարիայում, Վրաստանում և Հունաստանում (որպես PRO EXTOUR ծրագրում ներկայացված երկրներ), ինչպես նաև ընդհանուր առմամբ Սևծովյան ավազանի երկրներում խրախուսելու համար: Գործողությունների ծրագրերն ունեն ընդհանուր կառուցվածք և կենտրոնանում են մի շարք ինտեգրված տարրերի վրա, որոնք են՝ ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության զարգացման և կարգավորող ռեժիմների նորագույն իրավիճակի ընդհանուր ակնարկը, ՈւԹՀՎ վերլուծությունները, նախանշված քաղաքականության տարբերակները և բարեփոխումների ուղղությունները, ինչպես նաև ապագա զարգացման տեսլականները:

ՏԳԾ-ները կազմվել են տարածաշրջանային կարիքների ընդլայնված գնահատման հիման վրա, որն իրականացվել է 2020-2021 թվականներին PRO EXTOUR-ի մեջ ներգրավված փորձագետների կողմից և հաշվի են առնում առաջնային և երկրորդային նպատակային հետազոտություններից, ինչպես նաև քաղաքականության վերլուծություններից բխող համապատասխան արդյունքները և եզրակացությունները: Կարիքների գնահատումը բացահայտել է զարգացման բազմաթիվ ընդհանուր մարտահրավերներ, շահառուների առջև ծառայած նմանատիպ դժվարություններ և ՄԺՀՓՁ քաղաքականության մշակման և ռազմավարական պլանավորման նմանատիպ թերություններ: Բարեփոխումների իրագործելի առաջարկություններ ձևավորելու համար փորձագիտական խումբը որոշել է մշակել գործողությունների ծրագրերը ըստ երկրների և այնուհետև առանձին գլխում առանձնացնել հնարավոր տարածաշրջանային գործողությունները: Տարածաշրջանային գործողությունների ծրագրերը մշակելիս դիտարկվել են նաև ուսումնասիրված երկրների միջաահմանային և ներտարածաշրջանային համագործակցության հնարավորություններն ու կանխատեսումները:

Փաստաթղթի վերջին գլուխը ներառում է ամփոփ եզրակացություններ և առաջարկություններ, որոնք համապատասխանում են Սևծովյան ավազանի բոլոր տարաբնույթ տարածքների և տարածաշրջանների առանձնահատկություններին, ինչպես նաև ՄԺՀՓՁ զարգացմանը նպաստող համաձայնեցված գործողությունների քաղաքականության առաջարկներին:

Սույն փաստաթուղթը հասանելի է անգլերեն, հայերեն, բուլղարերեն, վրացերեն և հունարեն լեզուներով:

PRO EXTOUR-ը և ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջությունը

Ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջությունը (ՄԺՀՓՁ) ճանապարհորդության սոցիալական և էկոլոգիական գործողությունների ու ծառայությունների փաթեթ է, որն առաջարկում է ժառանգության և մշակույթի հիշարժան փորձառություն և մեկնաբանությունը, որոնք ճանապարհորդներին հանգեցնում են ինքնաբացահայտման, նոր ներըմբռնման և ոգեշնչման:





ՄԺՀՓԶ շնորհիվ ճանապարհորդներն ընկալում են տեղանքի պատմությունը, մարդկանց և մշակույթը, իսկ տեղի բնակիչները գնահատում են իրենց մշակութային արժեքները: Ուստի այն նպաստում է ժառանգության և կենդանի մշակույթի պահպանմանը, ռեսուրսների կայուն օգտագործմանը, ունի տարածաշրջանային հավելյալ արժեք և օգուտ է բերում հյուրընկալող համայնքին:

PRO EXTOUR ծրագիրը նախատեսված է խթանելու փորձառական զբոսաշրջությունը որպես ՍԱԵ-ում զբոսաշրջության բիզնեսի կայուն զարգացման ուղի՝ արժևորելով բնիկ ժառանգության և մշակույթի ներուժը, նորարարական լուծումները և միջսահմանային համագործակցությունը:



ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Մշակութային ժառանգության վրա հիմնված փորձառական զբոսաշրջության (ՄԺՓՉ) անհրաժեշտությունը, տեսլականը և նպատակները ՀՀ-ում

ՄԺՓՉ վերջին տարիներին, ինչպես ցույց տվեց հետազոտությունը, արագ տեմպերով սկսել է զարգանալ: Նման զարգացումը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ գործոններով, մասնավորապես՝ ՀՀ նկատմամբ միջազգային զբոսաշրջային հետաքրքրությունների ավելացմամբ, այս ոլորտում միջազգային կազմակերպությունների ներդրումներով, զբոսաշրջությունը ՀՀ տնտեսության գերակա ճյուղ հռչակելով, ՀՀ հարուստ նյութական և ոչ նյութական պատմամշակութային ժառանգության արժեքներով:

Ընդհանուր առմամբ, ՄԺՓՉ ՀՀ համար ունի ռազմավարական նշանակություն, քանի որ դրա՝ կայուն զբոսաշրջության սկզբունքների հիման վրա զարգացումն ապահովելու դեպքում, ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգությունը կարող է, միաժամանակ պահպանվելով, դառնալ նաև զբոսաշրջային ռեսուրս և հայկական մշակույթի գլոբալացման նախադրյալ: Վերջինիս արդյունքում ՀՀ կարող է «արտահանել» իր մշակույթը՝ այն տարածականորեն չկտրելով իր իսկ գտնվելու վայրից և ապահովել զբոսաշրջության տարածական համաչափ զարգացումը ՀՀ-ում:

Այսինքն, որպես ՄԺՓՉ զարգացման **տեսլական** կարելի է համարել հետևյալը՝ բարձրացնել ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության միջազգայնացման և հանրայնացման մակարդակը և ՀՀ համար ձևավորել միջազգային զբոսաշրջային մշակութափոխանակում:

Այս տեսլականի շրջանակներում, որպես ՄԺՓՉ զարգացման **նպատակ**, կարելի է համարել հետևյալը՝ նպաստել.

- ՀՀ-ում ոչ նյութական մշակութային ժառանգության կայուն զբոսաշրջային օգտագործմանը,
- ՀՀ զբոսաշրջության ոլորտում ինքնազբաղվածների քանակի ավելացմանը,
- ՀՀ զբոսաշրջության տարածական համաչափ զարգացմանը,
- ՀՀ-ում զբոսաշրջային մշակույթի ձևավորմանը և զարգացմանը:

ՀՀ մշակութային ժառանգության վրա հիմնված փորձառական զբոսաշրջության զարգացման Ուժեղ կերպերը

ՀՀ-ում ՄԺՓՉ զարգացման կարիքների բացահայտման համար իրականացված հետազոտության հիման վրա կարելի է ներկայացնել դրա զարգացման ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները (սպառնալիքները):

Ուժեղ կողմեր

- Վերջին 20 տարիներին ՀՀ զբոսաշրջության առաջանցիկ զարգացումը
- Չբոսաշրջության ՀՀ տնտեսության գերակա ճյուղ լինելը օրենքով
- Չբոսաշրջության համար առանձին օրենք ունենալը



- ՀՀ սահմանակցումը Կրաստանի և Իրանի հետ և տարանցիկ տրանսպորտաաշխարհագրական դիրք ունենալը
- Ձևավորված ներգնա զբոսաշրջային հաստատուն երկրների առկայությունը
- Ներգնա զբոսաշրջային այցելություններով առաջատար երկրներում հզոր հայկական սփյուռքի առկայությունը
- Հայկական մշակութային ժառանգությամբ, սննդով, հյուրընկալությամբ մոտիվացված ներգնա զբոսաշրջային այցելություններում հանգստի և ժամանցի նպատակով այցելությունների գերակշռությունը
- ՀՀ-ի հազարամյակների պատմությունը և հարուստ նյութական ու ոչ նյութական (ազգային ավանդույթները, սովորույթները, ծեսերը, երաժշտությունը, պարերը, գիրն ու գրականությունը, խոհանոցը, հայկական հյուրընկալությունը/հյուրասիրությունը, հայկական ընտանիքը և ընտանեկան հարաբերությունները) մշակութային ժառանգություն ունենալը
- Քրիստոնեությունն առաջինը որպես պետական կրոն ընդունած պետություն լինելը
- ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ներառված նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքներ ունենալը
- ՀՀ մշակութային ժառանգության հենքի վրա ՀՀ միջազգային զբոսաշրջային շուկայում հայտնի դառնալը
- Արդեն իսկ ձևավորված և համեմատաբար զարգացած կրոնական (պատմամշակութային), գինու և խոհանոցային զբոսաշրջությունը
- ՀՀ բազմազան բնակչիմայական պայմանները և դրանց ազդեցությամբ ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության տեղական ձևափոխումները
- ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտի կառավարումը համակարգող պետական կառույցի առկայությունը
- Հանրապետական և տեղական նշանակության զբոսաշրջային հանրային կազմակերպությունների առկայությունը
- ՀՀ զբոսաշրջության ինդուստրիայի քանակական և որակական դրական փոփոխությունները՝ արտահայտված տուրօպերատորական/գործակալական կազմակերպությունների, գիշերակացի և սննդի կազմակերպման ձեռնարկությունների և զբոսաշրջային տրանսպորտային և այլ ենթակառուցվածքների զարգացման տեսքով
- Երևանից դուրս գիշերակացի և սննդի ձեռնարկությունների քանակի ավելացումը
- Միջազգային կազմակերպությունների կողմից ՄԺՀՓՁ զարգացման համար ներդրումային ծրագրերի իրականացումը
- Արդեն իսկ Երևանից դուրս շուրջ 60 ձեռնարկությունների կողմից ՄԺՀՓՁ ծառայություններ առաջարկելը
- Փառատոնային զբոսաշրջության զարգացումը՝ հիմնված նաև ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների վրա
- Մշակութային ժառանգության պահպանման համար առկա համապատասխան օրենսդրական կարգավորումները և պատմամշակութային արգելոցները և արգելոց-թանգարանները
- ՄԺՀՓՁ մեջ ներառված ձեռնարկությունների նաև ընտանեկան լինելը (ձեռնարկատիրական գործունեության երկարաժամկետության ապահովում)
- ՄԺՀՓՁ զարգացումն արդեն իսկ որոշակիորեն կայուն զբոսաշրջության սկզբունքների վրա հիմնված լինելը



Թույլ կողմեր

- ՄԺՅՓՁ զարգացումը համակարգող թե՛ պետական, թե՛ հանրային կառույցների (ասոցիացիաներ, միություններ և այլն) բացակայությունը
- Գիշերակացի ձեռնարկությունների անհավասարաչափ տեղաբաշխվածությունը՝ մեծ մասի գտնվելը Երևանում
- ՀՀ զբոսաշրջության ոլորտի, որպես այդպիսին, կառավարման մեկ միասնական համակարգի բացակայությունը
- ՀՀ զբոսաշրջության ոլորտի կառավարման ներբեկց-վերև մոդելի բացակայությունը
- ՀՀ զբոսաշրջային ոլորտի և ՄԺՅՓՁ շահառուների միջև (պետություն, մասնավոր, կրթություն/գիտություն) թերի համագործակցությունը
- «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ գործող օրենքի չհամապատասխանելը զբոսաշրջության ներկայիս պահանջներին
- ՀՀ զբոսաշրջության ոլորտում գործունեություն իրականացնող միավորների լիցենզավորման բացակայությունը
- ՀՀ զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարության բացակայությունը
- ՀՀ զբոսաշրջության ոլորտի արտաքին թույլ մարքեթինգային քաղաքականությունը
- Ներկայումս ՄԺՅՓՁ առաջարկվող ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերից հայկական ազգային-ավանդական խաղերի թույլ ներառվածությունը
- ՀՀ-ում ՄԺՅՓՁ իմաստի դեռևս մեկ միասնական ընկալման բացակայությունը փորձագիտական և պրակտիկ դաշտերում
- Տեղացիների ՄԺՅՓՁ համապատասխան ծառայություններ կազմակերպելու և մատուցելու հմտությունների ու կարողությունների թերի լինելը
- ՄԺՅՓՁ հետ կապված ձեռնարկատիրական գործունեության ստանդարտների և լիցենզավորման բացակայությունը
- ՄԺՅՓՁ համար պետական մակարդակով միասնական մարքեթինգային քաղաքականության բացակայությունը
- ՄԺՅՓՁ վերաբերյալ համակարգված պետական վիճակագրական տվյալների բացակայությունը
- Հաճախ ՄԺՅՓՁ զբաղվող ձեռնարկությունների կողմից առաջարկվող ծառայությունների գնի և որակի անհամապատասխանությունը
- ՄԺՅՓՁ առաջարկների թերի ներառվածությունը կամ բացակայությունը տեղական զբոսաշրջային օպերատորների/գործակալների տուրփաթեթներում
- Զբոսաշրջության ոլորտի մասնագետներ պատրաստող ՀՀ բուհերում ՄԺՅՓՁ համար նախատեսված կրթական ծրագրերի բացակայությունը
- ՄԺՅՓՁ առաջարկներ ներկայացող ձեռնարկություններում աշխատողների լեզվական հաճախ ոչ բավարար գիտելիքները և հմտությունները
- ՄԺՅՓՁ առաջարկներ ներկայացող ձեռնարկությունների միմյանց և ՀՀ տուրօպերատորական/գործակալական ձեռնարկությունների հետ թույլ համագործակցությունը

- ՄԺՅՓՉ առաջարկներ ներկայացող ձեռնարկությունների թվային տիրույթում թույլ ներկայացվածությունը
- ՄԺՅՓՉ առաջարկներ ներկայացող ձեռնարկությունների համար կովիդի պայմաններում աշխատելու պետական ստանդարտների, ուղեցույցների բացակայությունը
- ՄԺՅՓՉ զարգացման պետական հայեցակարգի, ռազմավարության և ծրագրերի բացակայությունը
- ՄԺՅՓՉ առաջարկներում ներքին զբոսաշրջիկների կարիքների և առանձնահատկությունների գրեթե հաշվի չառնելը
- ՄԺՅՓՉ զբաղվող անձանց համար մասնագիտացված վերապատրաստումների կենտրոնների/կրթական ծրագրերի բացակայությունը
- ՄԺՅՓՉ առաջարկներ ներկայացող ձեռնարկությունների կողմից երեխաների համար նախատեսված ծառայությունների պակասը կամ բացակայությունը

Հնարավորություններ

- Ներգնա զբոսաշրջային այցելություններում բարեկամների, հարազատների տներում (ԲՀՏ) կամ վարձով բնակարաններում գիշերողների թվի գերակշռությունը՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցները, հյուրանոցատիպ հանգրվանները, առողջարանները, հանգստյան տները ևն) գիշերողների համեմատությամբ
- Հայկական մշակույթը կրող հայկական սփյուռքի առկայությունը
- Դեռևս զբոսաշրջային գործունեության մեջ չներառված հայկական ոչ նյութական մշակութային արժեքները
- Հատկապես մարգերում գտնվող փոքր հյուրանոցների կառուցումը նաև՝ ոչ նյութական մշակութային ժառանգությամբ հարուստ գյուղական համայնքներում կամ գյուղական տարածքներում
- ՄԺՅՓՉ գաստրոնոմիական ուղղվածության զբոսաշրջային առաջարկների զարգացումը, պայմանավորված ոչ միայն հարուստ խոհանոցով, այլ նաև Էկոլոգիապես մաքուր սննդամթերքով
- Մշակութային ժառանգության և զբոսաշրջության ոլորտում գործող ՀՀ գիտական և կրթական հաստատությունները
- Հայկական ավանդական հյուրասիրությունը
- Տեղացիների՝ սեփական զբոսաշրջային արտադրանքներով և մարդկային, նյութական ու տեխնիկական ռեսուրսներով համապատասխան ծառայություններ մատուցող ձեռնարկությունների հետ համագործակցելը
- ՀՀ համար ձևավորվող ներգնա նոր զբոսաշրջային ուղղությունները
- ՀՀ ներքին զբոսաշրջիկների կողմից նաև վարպետաց դասերի, ազգային ներկայացումների նախընտրումը
- ՄԺՅՓՉ առաջարկներ ներկայացող ձեռնարկությունների կողմից նորարարական մոտեցումների առկայությունը
- Ռեզինոալ փորձառական զբոսաշրջային առաջարկների զարգացումը
- Ժամանակակից տեղեկատվական և թվային տեխնոլոգիաների զարգացումը



Վտանգներ (Սպառնալիքներ)

- COVID-19-ի համաճարակով ստեղծված իրավիճակը՝ ՄԺՀՓՁ հիմնական շուկա համարվող ներգնա զբոսաշրջային հոսքերի դադարեցման կամ նվազման տեսքով և գործող սահմանափակումներով
- ՀՀ տրանսպորտային և տնտեսական շրջափակումը հարևան երկու երկրների կողմից՝ Թուրքիայի և Ադրբեջան և ՀՀ նկատմամբ դրանց սանձազերծած պատերազմը և միջպետական սահմաններին առկա լարվածությունը
- Տեղական մշակույթի հնարավոր առևտրայնացումը և կոմոդիֆիկացիան ու գաղութացումը
- Մշակութային արժեքների սխալ ներկայացումը և մեկնաբանությունը (համապատասխան գիտելիքների և հմտությունների պակասի պատճառով)
- Չբոսաշրջիկների մշակութային նախասիրությունների փոփոխությունը ժամանակի ընթացքում
- Տեղացիների և այցելուների մշակութային տարբերությունների պատճառով կոնֆլիկտների հավանականությունը
- Սննդային թունավորման հավանականությունը և ֆիզիկական վնասվածքները կոնկրետ փորձառություններին մասնակցելու ժամանակ
- ՄԺՀՓՁ առաջարկներ ներկայացող ձեռնարկությունների կողմից իրականացվող մարքեթինգային քաղաքականության միմյանց հետ չհամաձայնեցման հավանականությունը
- Հնարավոր ոչ արդար շուկայական մրցակցությունը ՄԺՀՓՁ առաջարկներ ներկայացող ձեռնարկությունների շրջանակներում:



Մշակութային ժառանգության վրա հիմնված փորձառական զբոսաշրջության զարգացման քաղաքականության ապահովման հնարավոր ռազմավարական գործողությունները ՀՀ-ում

No	Ռազմավարական գործողություն	Ռազմավարական գործողության նպատակը/ները	Ռազմավարական գործողության հնարավոր վերջնարդյունքները	Ռազմավարական գործողության իրականացման հնարավոր պատասխանատու շահառուները/ռեսուրսները
1.	Մշակել ՄԺՓՉ զարգացման պետական քաղաքականությունը	<ul style="list-style-type: none"> Հստակեցնել ՄԺՓՉ զարգացման պետական քաղաքականությունը ՄԺՓՉ զբաղվող շահագրգիռ կողմերի համար ապահովել պետական մոտեցման հստակություն 	<ul style="list-style-type: none"> ՄԺՓՉ պետական հայեցակարգ, ռազմավարություն և ծրագիր 	<ul style="list-style-type: none"> ՀՀ Կառավարություն ՀՀ Չբոսաշրջության կոմիտե
2.	«Չբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծում ՄԺՓՉ մասին հոդվածների ավելացում	<ul style="list-style-type: none"> Բարձրացնել ՄԺՓՉ իրավական կարգավորման մակարդակը և զարգացնել իրավական հիմքեր 	<ul style="list-style-type: none"> Առավել կանոնակարգված իրավական և շուկայական հարաբերություններ ՄԺՓՉ զբաղվող ձեռնարկությունների համար 	<ul style="list-style-type: none"> ՀՀ Կառավարություն ՀՀ Ազգային ժողով ՀՀ Չբոսաշրջության կոմիտե
3.	ՄԺՓՉ զբաղվող ձեռնարկությունների ազգային ստանդարտների և լիցենզիաների մշակում/ներդնում	<ul style="list-style-type: none"> Բարձրացնել ՄԺՓՉ առաջարկների և ծառայությունների որակը Ապահովել ոչ նյութական մշակութային ժառանգության կայուն օգտագործումը և պահպանությունը 	<ul style="list-style-type: none"> ՄԺՓՉ բարելավված որակ ՄԺՓՉ մասին համակարգված վիճակագրական տվյալներ 	<ul style="list-style-type: none"> ՀՀ Կառավարություն ՀՀ Ազգային ժողով ՀՀ Չբոսաշրջության կոմիտե ՀՀ Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին ՀՀ ԲՈՒՅ-եր
4.	ՄԺՓՉ կրթական ծրագրերի մշակում և ներդնում ՀՀ ԲՈՒՅ-երում	<ul style="list-style-type: none"> Բարձրացնել ՄԺՓՉ մասին առկա գիտելիքների համակարգված ուսուցումը 	<ul style="list-style-type: none"> ՄԺՓՉ ուժեղացված գիտական հիմքեր 	<ul style="list-style-type: none"> ՀՀ Կառավարություն ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Common borders. Common solutions.





Project funded by
EUROPEAN UNION



		<ul style="list-style-type: none"> • Ստեղծել ՄԺՅՓՉ զարգացման կրթական և գիտական հիմքեր 	<ul style="list-style-type: none"> • ՄԺՅՓՉ մասին ձևավորված և տարածված համընդհանուր ընդունելի ընկալումներ • ՄԺՅՓՉ մասին հայերեն բուհական դասագիրք՝ «Փորձառական զբոսաշրջության հիմունքներ» • ՄԺՅՓՉ վերապատրաստման կենտրոն 	ՀՀ ԲՈՒՀ-եր
5.	ՄԺՅՓՉ մեջ ներառված ձեռնարկությունների համար ՄԺՅՓՉ ռիսկերի կառավարման ուղեցույցի մշակում	<ul style="list-style-type: none"> • Բարձրացնել ՄԺՅՓՉ անվատնագության մակարդակը • Նպաստել ՄԺՅՓՉ զբաղվող ձեռնարկությունների գործունեության երկարաժամկետության ապահովմանը • Նպաստել ՄԺՅՓՉ ձեռնարկությունների գործունեության կայունության պահպանմանը ֆորսմաժորային պայմաններում 	<ul style="list-style-type: none"> • Տարատեսակ ռիսկային իրավիճակների մասին մասնագիտացված ուղեցույցներ • ՄԺՅՓՉ զբաղվող ձեռնարկությունների բարձելավված կայունություն 	ՀՀ Կառավարություն ՀՀ Չբոսաշրջության կոմիտե ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ ԲՈՒՀ-եր
6.	Տարածաշրջային փորձառական զբոսաշրջային առաջարկների և նախագծերի կազմում՝ Հայաստանի և Վրաստանի սահմանակցող մարզերում	<ul style="list-style-type: none"> • Բարձրացնել զբոսաշրջության ոլորտում միջտարածաշրջանային համակարգողական մակարդակը • Ստեղծել միջտարածաշրջանային ՄԺՅՓՉ փաթեթներ 	<ul style="list-style-type: none"> • Հայ-վրացական ՄԺՅՓՉ համատեղ ձեռնարկություններ/կազմակերպություններ • Միջտարածաշրջանային զբոսաշրջային ավելացված հոսքեր 	ՀՀ և Վրաստանի կառավարություններ ՀՀ և Վրաստանի զբոսաշրջության պետական գերատեսչություններ ՀՀ և Վրաստանի զբոսաշրջային օպերատորական/գործակալական ձեռնարկություններ
7.	ՄԺՅՓՉ առաջարկների միջազգայնացում Հայկական Սփյուռքի օգնությամբ	<ul style="list-style-type: none"> • Բարձրացնել ՄԺՅՓՉ առաջարկների ճանաչելիության մակարդակը ՀՀ-ից դուրս • Բազմազանեցնել ՀՀ և Հայկական Սփյուռք համագործակցությունը 	<ul style="list-style-type: none"> • Թիրախային զբոսաշրջային շուկաներում (երկրներում) ՀՀ բարձրացված զբոսաշրջային իմիջ և ներգնա զբոսաշրջային ավելացված հոսքեր 	ՀՀ Կառավարություն ՀՀ Չբոսաշրջության կոմիտե ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ

Common borders. Common solutions.





		<ul style="list-style-type: none"> • Հայաստանից դուրս ապրող հայերին պարբերաբար կապել իրենց մշակութային արմատներին 	<ul style="list-style-type: none"> • Հայկական մշակութային արժեքների վերափմաստավորում հայկական գաղթօջախներում 	Հայկական Սփյուռքի կազմակերպություններ ՀՀ դեսպանություններ
8.	Քրիստոնեական մշակութային արժեքների հիման վրա ՄԺՀՓՁ առաջարկների ստեղծում	<ul style="list-style-type: none"> • Բարձրացնել ՀՀ դերակատարությունը քրիստոնեական աշխարհում • ՀՀ զբոսաշրջային արդյունքների մեջ բարձրացնել քրիստոնեական ոչ նյութական մշակութային արժեքների ներգրավվածությունը 	<ul style="list-style-type: none"> • Քրիստոնեական երկրների հետ խորացված համագործակցություն՝ զբոսաշրջության վրա հիմնված նոր առաջարկների տեսքով 	ՀՀ Կառավարություն Հայ առաքելական եկեղեցի ՀՀ Չբոսաշրջության կոմիտե ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ Հայկական Սփյուռքի կազմակերպություններ ՀՀ դեսպանություններ
9.	ՄԺՀՓՁ առաջարկների և ծառայությունների համապատասխանեցում նաև ներքին զբոսաշրջիկների պահանջմունքներին	<ul style="list-style-type: none"> • Նպաստել ներքին զբոսաշրջության զարգացմանը • Նպաստել ՄԺՀՓՁ կախվածության թուլացմանը ներգնա զբոսաշրջային հոսքերից 	<ul style="list-style-type: none"> • Ներքին զբոսաշրջիկների առանձնահատկությունները հաշվի առնող նոր զբոսաշրջային առաջարկներ 	ՀՀ Չբոսաշրջության կոմիտե Փորձառական զբոսաշրջությամբ զբաղվող ձեռնարկություններ
10.	ՄԺՀՓՁ «բայլոլ» փառատոնի կազմակերպում	<ul style="list-style-type: none"> • Նպաստել հայկական զբոսաշրջային արդյունքների բազմազանեցմանը • Խթանել ՄԺՀՓՁ ձեռնարկությունների միջև համագործակցությունը 	<ul style="list-style-type: none"> • Ներգնա և ներքին զբոսաշրջային ավելացված հոսքեր և զբոսաշրջային եկամուտների աշխարհագրական վերաբաշխում • ՄԺՀՓՁ նոր առաջարկներ 	ՀՀ Կառավարություն ՀՀ Չբոսաշրջության կոմիտե Մարզպետարաններ ՏԻՄ-եր Փառատոնների կազմակերպմամբ զբաղվող մասնավոր/հանրային կառույցներ
11.	«Հայկական ՄԺՀՓՁ առցիցիայի» ստեղծում	<ul style="list-style-type: none"> • Բարձրացնել ՄԺՀՓՁ զբաղվող ձեռնարկությունների միջև համագործակցության մակարդակը • Բարձրացնել ՄԺՀՓՁ զբաղվող ձեռնարկությունների միջազգայացման մակարդակը 	<ul style="list-style-type: none"> • Ներազգային և միջազգային համագործակցության նոր որակների և հարթակների առաջացում 	ՀՀ Չբոսաշրջության կոմիտե Փորձառական զբոսաշրջությամբ զբաղվող ձեռնարկություններ

Common borders. Common solutions.





Project funded by
EUROPEAN UNION



12.	«Նորարարական փորձառական զբոսաշրջություն» ամենամյա սեմինարի/աշխատաժողովի կազմակերպում	<ul style="list-style-type: none"> • Բարձրացնել ՄԺՖՉ զբաղվող շահառուների (պետական, մասնավոր, միջազգային, կրթական, գիտական, հասարակական) միջև համագործակցության մակարդակը • Վեր հանել ՄԺՖՉ զարգացման հիմնախնդիրները և հեռանկները 	<ul style="list-style-type: none"> • Համագործակցության նոր ուղղություններ և մակարդակներ 	ՀՀ Չբոսաշրջության կոմիտե
13.	Հայկական ազգային-ավանդական խաղերի և երգ-երաժշտության վրա հիմնված փորձառությունների ստեղծում և զարգացում	<ul style="list-style-type: none"> • Բարձրացնել ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության համալիր ներգրավվածության մակարդակը ՄԺՖՉ մեջ 	<ul style="list-style-type: none"> • Փորձառական նոր զբոսաշրջային առաջարկներ 	ՀՀ Չբոսաշրջության կոմիտե Փորձառական զբոսաշրջությամբ զբաղվող ձեռնարկություններ ՀՀ ԲՈՒՀ-եր և ԳԱԱ
14.	Օտար լեզուներով հայկական ՄԺՖՉ առաջարկների մասին հաղորդումների պատրաստում հեռուստատեսային կամ հեռահաղորդակցման այլ միջոցներում՝ կիսվող տնտեսության մոտեցմամբ	<ul style="list-style-type: none"> • Բարձրացնել ՀՀ զբոսաշրջային միջազգային իմիջը • Բարձրացնել ՀՀ ՄԺՖՉ առաջարկների միջազգայնացումը 	<ul style="list-style-type: none"> • Հայկական խոհանոցի, երգ-երաժշտության, արհեստների, արվեստների և այլն մասին օտարալեզու հաղորդումներ 	ՀՀ Կառավարություն ՀՀ Չբոսաշրջության կոմիտե ՀՀ Հանրային և մասնավոր հեռուստաընկերություններ Թվարկված ոչ նյութական ժառանգության ոլորտում գործող հասարակական կազմակերպություններ, միություններ, ասոցիացիաներ ՀՀ ԲՈՒՀ-եր ՀՀ-ում գործող բլոգերներ
15.	«Լավագույն փորձառական զբոսաշրջային առաջարկ» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպում	<ul style="list-style-type: none"> • Խթանել ՄԺՖՉ զարգացմանը ՀՀ-ում • Մոտիվացնել ՄԺՖՉ զբաղվողներին 	<ul style="list-style-type: none"> • Մոտիվացված փորձառական զբոսաշրջային միջավայր • Նոր համագործակցություն ՄԺՖՉ շահառուների միջև 	ՀՀ Չբոսաշրջության կոմիտե

Common borders. Common solutions.





Եզրակացություններ

ՄԺՅՓՁ ՀՀ համար կարելի է համարել զբոսաշրջության նորարարական մոտեցումներով զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը: Դրա կայուն զարգացման շնորհիվ հնարավոր կլինի ապահովել հատկապես զբոսաշրջության տարածքային համաչափ զարգացումը:

Ներկայումս ՄԺՅՓՁ ՀՀ-ում զարգացնելու համար առանցքային ռազմավարական նշանակություն ունեցող քայլերը պետք է ուղղված լինեն՝

- ✓ ՄԺՅՓՁ պետական քաղաքականության մշակմանը և հստակեցմանը,
- ✓ ՄԺՅՓՁ շահառուների միջև համագործակցությանը նպաստող միջոցառումների կազմակերպմանը,
- ✓ ՄԺՅՓՁ-ում ներառված հայկական մշակութային արժեքների կայուն օգտագործմանը և պահպանմանը,
- ✓ ՄԺՅՓՁ շրջանակներում տարածաշրջային և միջազգային համագործակցությանը և ներդրումային ծրագրերի իրականացմանը,
- ✓ ՄԺՅՓՁ ներառված կողմերի համապատասխան մասնագիտական որակների զարգացմանը,
- ✓ ՄԺՅՓՁ համար համակարգված կրթական և գիտական հիմքերի ստեղծմանը:



ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ՝ ԲՈՒԼՂԱՐԻԱ

Ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջությունը Բուլղարիայում: Ժամանակակից վիճակը և զարգացման ուղիները Բուլղարիան ունի զբոսաշրջության և հյուրընկալության ձևավորված ավանդույթներ, իսկ ճանապարհորդության ոլորտը ճանաչվել է որպես գերակայություն քաղաքականության մշակման օրակարգում: Երկիրն ունի հարուստ ռեսուրսներ և մեծ մշակութային ժառանգություն: Ավելին, Բուլղարիան Եվրոպայում զբաղեցնում է երրորդ տեղը մշակութային և պատմական հուշարձանների քանակով, և երկրի ժառանգության վայրերից 10-ը ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում: Ակնհայտ է, որ երկիրն ունի մշակույթի և ժառանգության վրա հիմնված փորձառական զբոսաշրջության զարգացման հսկայական ներուժ:

Բուլղարիայում ազգային մակարդակում ճանապարհորդության, զբոսաշրջության և հյուրընկալության արդյունաբերությունը ղեկավարվում է Զբոսաշրջության նախարարության կողմից, իսկ Զբոսաշրջության ազգային խորհրդը հանդես է գալիս որպես խորհրդատվական մարմին: Տեղական մակարդակում զբոսաշրջության քաղաքականությունն իրականացնում են մարզերի քաղաքապետարանները: Որոշումների կայացման գործընթացում ներգրավված են նաև մի շարք արհեստավարժ, տարածաշրջանային, քաղաքացիական և հասարակական կազմակերպություններ, ինչպիսիք են Բուլղարիայի զբոսաշրջության պալատը, Տարածաշրջանային զբոսաշրջության պալատները, Բուլղարիայի հյուրանոցների ասոցիացիան, Բուլղարիայի այլընտրանքային զբոսաշրջության ասոցիացիան և այլն: Զբոսաշրջության կառավարման վերաբերյալ ամենակարևոր օրենսդրական փաստաթուղթը զբոսաշրջության մասին օրենքն է (Ivanov & Dimitrova, 2013):

ՄԺՅՓԶ կազմում է կայուն զբոսաշրջության առաջարկի մաս և նախանշվել է որպես Զբոսաշրջության նախարարության գերակա ուղղություն, որի արդյունքում պատրաստվել է 2014-2030 թվականների կայուն զբոսաշրջության զարգացման ազգային ռազմավարությունը և առաջարկվել հանրային քննարկման:

Չնայած ՄԺՅՓԶ հայեցակարգված և սահմանված չէ որպես հատուկ տերմին, ՄԺՅՓԶ նման արտադրանք մշակվել և շուկայում ներկայացվել է շատ վաղուց: Օրինակ՝ զբոսաշրջության մշակութային, գյուղական, բանահյուսական, խոհարարական միջոցառումները և այլ, այսպես կոչված, «այլընտրանքային» ձևերը կարող են համարվել ՄԺՅՓԶ օրինակներ, քանի որ դրանք ընդգծում են նմանատիպ ռեսուրսներ և ուղղված են ընդհանուր նպատակների:

Բազմաթիվ մասնավոր տուր-օպերատորներ արտադրում և առաջարկում են մշակույթի և ժառանգության վրա հիմնված զբոսաշրջության արտադրանք: Քաղաքապետարանները և մարզային իշխանությունները նույնպես ջանքեր են գործադրում ՄԺՅՓԶ զարգացման ուղղությամբ՝ հիմնականում ծրագրերի վրա հիմնված գործողությունների շրջանակներում: Ազգային մակարդակում Զբոսաշրջության նախարարությունը նախագծել և մշակել է 22 երթուղի մշակույթի և ժառանգության զբոսաշրջության համար: Որպես օրինակներ կարելի է նշել «Բուլղարիայի ծովային ամրոցներ» երթուղին, որը տարածվում է Կոստանբուլից հարավ Սև ծովի ափով և ներառում է ավելի քան քսան ժառանգության և տեսարժան վայրեր, կամ «Բուլղարիայի թագավորների և հայրապետների մայրաքաղաքներն ու քաղաքները», որը տեղակայված է երկրի հյուսիսային կենտրոնական մասում: «Վարդերի հովիտը և թրակիացի





արքաները» երթուղին, որը գտնվում է հարավ-արևելքում, մեկ այլ օրինակ է (Ministry of Tourism of the Republic of Bulgaria, 2021):

Չնայած կառավարության կողմից իրականացվող ջանքերին, որոնք ուղղված են ՄԺՅՓՁ գործունեության զարգացումը խթանելուն, շահագրգիռ կողմերի և կառավարման տարբեր մարմինների միջև համագործակցությունը լիարժեք չէ զբոսաշրջության որակի և կայունության վերաբերյալ կայուն և միասնական քաղաքականություն իրականացնելու համար: Ավելին, ՅԿ-ների և պետական կառավարման միջև երկխոսությունը և փոխգործակցությունը հաճախ անարդյունավետ է:

Երկրի մշակութային ժառանգության վրա հիմնված փորձառական զբոսաշրջության ՈՒԹՅՎ վերլուծությունը

Ուժեղ կողմեր

Բուլղարիան ունի մի շարք առավելություններ՝ ՄԺՅՓՁ զբոսաշրջությունը որպես իր զբոսաշրջության առաջարկի մաս զարգացնելու համար (Ministry of Tourism of the Republic of Bulgaria, 2015): Դրանք են՝

- Ժառանգության և մշակույթի վրա հիմնված տուրիստական ռեսուրսների հարստությունը, ինչպիսիք են պատմական, հնագիտական և կրոնական հուշարձանները, անցյալի մնացորդները և արտեֆակտները, ինչպես նաև նպատակային կառուցված ժամանակակից տեսարժան վայրերն ու պուրակները, ոչ նյութական մշակութային ժառանգությունը, ինչպիսիք են ավանդույթները, ծեսերը, ժողովրդական պարերը և խոհանոցը, միջոցառումները, փառատոները, ցուցահանդեսները և այլն:
- ՄԺՅՓՁ մի շարք վայրեր ունեն միջազգային նշանակություն, որոնց թվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո գտնվող մի քանի եզակի վայրեր:
- Եվրամիության անդամակցությունը:
- Բարձր մրցունակությունը: Բուլղարիան եվրոպական ամենաեժան երկրներից մեկն է, որն այցելուների համար ապահովում գնի և արժեքի հիանալի հարաբերակցություն:
- Քաղաքական կայունությունը և կայուն տնտեսական աճը՝ հետ-Covid-19-ից արագ վերականգնման հուսալի կանխատեսումներով:
- Բարենպաստ կլիմայական պայմանները, որոնք հարմար են ՄԺՅՓՁ զբոսաշրջության համար ամբողջ տարվա ընթացքում՝ հաշվի առնելով մեղմ ձմեռները, եղանակի և ջերմաստիճանի հազվադեպ ծայրահեղությունները:
- Հանգստի այլ ռեսուրսների բազմությունը կարելի է համատեղել օգտակար և գրավիչ զբոսաշրջային փաթեթների մեջ: Օրինակ, ՄԺՅՓՁ զբոսաշրջության առաջարկը կարող է համակցվել SPA, սպորտային կամ Էկոտուրիզմի գործողություններով:
- Շահավետ աշխարհագրական դիրքը. տեղակայված լինելով արևմուտքի և արևելքի, հյուսիսի և հարավի խաչմերուկում՝ Բուլղարիան համեմատաբար մոտ է արտադրանք ապահովող շուկաների մեծ մասին:



- Համեմատաբար փոքր տարածքում գտնվող տեսարժան վայրերի մեծ բազմազանությունը, ինչը թույլ է տալիս դրանք հեշտությամբ խմբավորել գրավիչ թեմատիկ ուղևորությունների ժամանակ (Ministry of Tourism of the Republic of Bulgaria, 2014-2020):
- Չբուսաշրջության լավ զարգացած ենթակառուցվածքները և վերնաշենքերը, ներառյալ հյուրանոցային հաստատությունները, ճանապարհները, առողջարանները, թանգարանները, պատկերասրահները, տուրիստական տեղեկատվական կենտրոնները և այլն:
- Որոշ տարածքներում կան ակտիվ տեղական համայնքներ, որոնք աշխատում են իրենց տարածքի գրավչությունը որպես զբոսաշրջային դեստինացիա բարելավելու ուղղությամբ և ձգտում են սերտորեն համագործակցել զբոսաշրջիկների հետ՝ ավելի շատ փորձառական զբոսաշրջության արտադրանք ստեղծելու համար:
- ՄԺՅՓՉ զարգացման համար անհրաժեշտ մի շարք ֆինանսական խթանների և ինստիտուցիոնալ օժանդակության հասանելիությունը, ներառյալ պետական դրամաշնորհները, ԵՄ նախագծերը և այլ միջազգային ռեսուրսները:
- Տրանսպորտային ենթակառուցվածքը համեմատաբար լավ զարգացած և գործունակ է: Կան մի քանի միջազգային օդանավակայաններ, որոնք ընդգրկում են երկրի տարածքի մեծ մասը 200 կմ շառավղով:
- Աջակցող ոլորտները լավ կայացած են՝ ներառյալ առողջապահությունը, ոստիկանությունը, բանկային ծառայությունները, կոմունալ ծառայությունները, կապը և այլն:
- Տեխնիկական անվտանգության և ՏՏ զարգացման բարձր մակարդակը, հուսալի և արագ ինտերնետային կապը, բջջային կապի տարբեր մատակարարների լավ ծածկույթը ամբողջ հանրապետությունում:
- Հյուրընկալության ծառայությունների, ներառյալ գյուղական հյուրատների, փոքր ընտանեկան հյուրանոցների, հյուրատների և այլնի աճող թվով տեղական մատակարարները:
- Օտար լեզուների իմացության բարձր մակարդակը: Բնակչության մեծ մասը խոսում է առնվազն մեկ օտար լեզվով:
- Չբոսաշրջության ոլորտի կրթությունը զարգացած է ինչպես միջնակարգ, այնպես էլ համալսարանական մակարդակով, ինչը երաշխավորում է հմուտ և իրավասու մարդկային ռեսուրսների առկայությունը:

Թույլ կողմեր

Բուլղարիայում ՄԺՅ զբոսաշրջության զարգացման հիմնական մարտահրավերները հետևյալն են՝

- Առաջարկները հիմնականում կենտրոնացած են զանգվածային, առափնյա և հանգստի զբոսաշրջության վրա: Սա հանգեցնում է բազմաթիվ խնդիրների՝ կապված երկրի իմիջի, ռեսուրսների կայուն օգտագործման և ցածր գների մակարդակի հետ, որը խոչընդոտում է զբոսաշրջության այլ այլընտրանքային ձևերի (ներառյալ ՄԺՅՓՉ) զարգացմանը:



- Ժառանգության և մշակութային ռեսուրսների, հատկապես՝ ոչ նյութական, արժևորման անհրաժեշտ մեխանիզմի բացակայությունը:
- Երկրի մարքեթինգի և բրենդինգի ազգային ռազմավարությունը հրատապ վերանայման կարիք ունի: Բուլղարիան պետք է վերատեղակայվի միջազգային շուկայում, ինչը պահանջում է մի շարք ծրագրված միջամտություններ:
- Յստակորեն նախանշված է պահանջարկի սեզոնայնությունը: Կլոր տարվա զբոսաշրջության հնարավորություններ կան, բայց գործնականում տուրիստական գործողությունների մեծ մասը տեղի է ունենում ամռան ամիսներին, ինչը հանգեցնում է հյուրընկալության վերնաշենքերի օգտագործման անհավասարակշռությանը:
- Յյուրանոցային հաստատությունները հիմնականում կենտրոնացած են ծովափնյա շրջանում (այնտեղ է գտնվում հյուրընկալության ոլորտի 2/3-ից ավելին): Սա հանգեցնում է տարածաշրջանային անհավասարակշռության:
- Անբավարար ինստիտուցիոնալ կարողությունը, ներառյալ տեղական, տարածաշրջանային կամ ազգային իշխանությունների բացակայությունը ՄԺՖ զբոսաշրջության ոլորտում:
- Օրենսդրության հիմքերի սակավությունը: Օրենսդրության և կանոնակարգերի բացակայությունը կենսական նշանակության այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են մշակութային ժառանգության պաշտպանությունն ու ընդլայնումը:
- Ռազմավարական պլանավորման բացակայությունը ՄԺՖՉ ոլորտում:
- Չբոսաշրջության ոլորտի մոնիտորինգի, վերահսկողության և վերահսկման ցածր մակարդակը: Սա հանգեցնում է մեծ չափի «ստվերային» (չկարգավորվող կամ ապօրինի) զբոսաշրջության գործողությունների, որակի վերահսկողության բացակայության և երկրի իմիջի հետ կապված հնարավոր խնդիրների:
- Տարածքային պլանավորումը դեռ նախնական փուլում է: Չնայած բաշխման տարատեսակ առաջարկներին և մի քանի թեմատիկ դեստինացիաների ձևավորմանը, չի հաջողվել ձեռք բերել համաձայնություն, որը էապես խոչընդոտում է տարածաշրջանի կառավարմանը և առաջխաղացմանը:
- Տեղական բիզնեսը մասնատված է, շփումը միմյանց կամ իշխանությունների հետ հազվադեպ է:
- Առկա են մասնաճյուղային, արտադրանքային և տարածաշրջանային ասոցիացիաներ, բայց դրանք շատ ակտիվ չեն, և անդամների համար տրամադրվող օգուտները սահմանափակ են:
- Միջինստիտուցիոնալ փոխգործակցությունը և համագործակցությունը թույլ են: Սա շատ խնդիրներ է առաջացնում հատկապես ՄԺՖՉ դեպքում, քանի որ ռեսուրսների և դրանց առնչվող գործողությունների մեծ մասը Մշակույթի և Չբոսաշրջության նախարարությունների համատեղ միջամտության կարիքն ունեն:
- Տեղական համայնքները հիմնականում իներտ են և չունեն զբոսաշրջիկների հետ շփվելու մոտիվացիա:
- Չբոսաշրջության տեղեկատվական կենտրոններ կան միայն խոշոր քաղաքներում, բայց դրանց գործառույթները սահմանափակ են, և նրանց կողմից զբոսաշրջիկներին տրվող օժանդակությունը (տպագիր նյութեր, տեղեկատվություն, ամրագրում և այլ ծառայություններ) անբավարար է:



- Տարբեր շահառուների միջև, ինչպիսիք են բիզնեսը, սպառողները, տեղական ինքնակառավարման մարմինները, մշակութային, կրթական և հետազոտական հաստատությունները, տուրիստական ծառայություններ մատակարարող ընկերությունները և այլն, սիներգիան բացակայում է:
- Կայունությունը և էկոլոգիական հայեցակարգերը հիմնականում առաջնային են թղթի վրա և ունեն գործնական կիրառման ցածր մակարդակ. ընդամենը մի քանի հյուրանոցներ են ներդրումներ կատարել վերականգնվող էներգիայի աղբյուրների կամ ցածր ազդեցության և շրջակա միջավայրի համար բարենպաստ այլ լուծումների ու տեխնոլոգիաների մեջ, էկո-նորարարությունները, գրոյական թափոնները կամ շրջանաձև տնտեսությունը զբոսաշրջության ոլորտում գրեթե գոյություն չունեն:
- Հուսալի զբոսաշրջության վիճակագրությունը խնդիր է, որը բացասաբար է անդրադառնում ոլորտում ներդրումային հնարավորությունների վրա:
- Բյուրոկրատիայի բարձր մակարդակը, ինչպես նաև իշխանությունների և ինստիտուտների ճկուն մոտեցման բացակայությունը խոչընդոտում են բիզնեսի գործունեությանը:
- Կռուկացիան խնդիր է զբոսաշրջության կառավարման յուրաքանչյուր մակարդակում: Ցավոք, զբոսաշրջության զարգացմանը (մասնավորապես՝ գյուղական զբոսաշրջությանը) տրամադրված որոշ միջոցներ ենթակա են յուրացման կամ ֆինանսական խարդախության:
- Չբոսաշրջության արդյունաբերությունը կորցնում է իր գրավչությունը որպես երիտասարդների համար աշխատանքի մատակարար՝ ցածր վարձատրության, ծանր աշխատանքի, անկանոն զբաղվածության և այլնի պատճառով: Ակնկալվում է, որ այս միտումը կխորանա Covid-19-ի համաճարակների ընթացքում կամ դրանցից հետո, քանի որ զբոսաշրջությունը և հյուրընկալությունը առավել տուժած ոլորտներից են:
- ՄԺՖՉ համար պահանջվում են որոշակի հմտություններով օժտված, բարձր որակավորում ունեցող աշխատողներ, իսկ դրանց ապահովումը խնդիր կարող է հանդիսանալ:
- Անձնակազմի բարձր շրջանառությունը (պայմանավորված է տարբեր գործոններով, ինչպիսիք են սեզոնայնությունը, ցածր մոտիվացիան), ինչը բացասաբար է անդրադառնում մատուցվող ծառայությունների որակի վրա:
- Որակի կամ կայունության համար որոշ պիտակների տակ սերտիֆիկացված ընկերությունների մասնաբաժինը (ինչպես, օրինակ, «Կանաչ տուն» պիտակը) շատ ցածր է:
- Անբավարար պետական աջակցությունը զբոսաշրջության սկսնակ ձեռնարկություններին (ինկուբատորներ, ֆինանսավորման գործիքներ, մենթորներ և այլն), որը ճնշում է բիզնես ձեռնարկատիրության նախաձեռնությանը, ներառյալ ՄԺՖՉ ոլորտում:
- Որոշ հեռավոր շրջաններում ճանապարհային աղբատ ենթակառուցվածքները: Որքան վայրն ավելի բնորոշ է տեղանքին և «անհայտ», այնքան ավելի քիչ մատչելի է:
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանափակ հասանելիությունը և պայմանները, ներառյալ վերապատրաստված սպասարկող անձնակազմի բացակայությունը:
- Մշակույթի և ժառանգության վրա հիմնված ռեսուրսների թվայնացման ցածր մակարդակը:



- Առցանց բաշխման և վաճառքի ալիքներն արդեն ժողովրդականություն են ձեռք բերում, բայց էլեկտրոնային վճարումները գտնվում են զարգացման սկզբնական փուլում:
- Որոշ ֆինանսական գործիքներ, ինչպիսիք են չեկերը, կտրոնները և բանկային քարտերը, տարածված չեն և լայնորեն չեն կիրառվում:
- Չբուսաշրջության ոլորտում կրթությունը հիմնականում տեսական է: Գործնական դասընթացները, աշխատանքային և գործնական ուսուցումները թերզարգացած են, ինչը խաթարում է մարդկային ռեսուրսների որակը, հատկապես նրանց, ովքեր չունեն մասնագիտական փորձ այդ ոլորտում:
- Չբուսաշրջային ուղիների, տեղանքների և ճանապարհների ազդանշանային նշումները և ցուցանակները թերի են և հաճախ չեն գրված օտար լեզվով:
- Ռեսուրսներն ու տեսարժան վայրերը հաճախ վատ են կառավարվում: Պատմական և մշակութային վայրերի պահպանումը հաճախ խնդիր է հանդիսանում: Ռազմավարությունը, որը մշակվել և իրականացվում է այցելուների կարողությունների կառավարման կամ զբոսաշրջիկների շրջանում տեղանքի պաշտպանություն և պահպանման իրազեկության մակարդակի բարձրացման համար, շատ թերի է:
- Առկա է թանգարանների և պատկերասրահների բարելավման և արդիականացման համար ներդրումների պակաս: Թվայնացման և բարձր տեխնոլոգիական լուծումների, ինչպիսիք են վիրտուալ շրջագայությունները, թվային տուրիստական ուղեցույցները և այլն, օգտագործման մակարդակը շատ ցածր է:
- Իրադարձությունների օրացույցը թերի է և հասանելի չէ: Շատ իրադարձություններ ունեն սահմանափակ լուսաբանում և գովազդ, ինչն ավելի բարձր հաճախելիության խոչնդոտ է հանդիսանում (Ministry of Tourism of the Republic of Bulgaria, 2014-2020):
- Արշավների և ճամբարների համար նախատեսված վայրերը ետընթաց են ապրում: Դրանց կառավարումը հաճախ անտեսվում է, և երբեմն անվտանգության և առողջության հետ կապված խնդիրներ են առաջանում: Առկա է պատշաճ կոմունալ հարմարություններով ժամանակակից ճամբարների կամ ավտոտնակներով հանգստի վայրերի պակաս:
- Ազգային գովազդը բավականին հնացած է և թարմացման կարիք ունի: Բրենդավորումը չափազանց ընդհանուր է և չի արտացոլում երկրի՝ որպես զբոսաշրջային դեստինացիայի ամբողջ ներուժը:
- Միջազգային խոշոր տուրօպերատորներից կախվածության մակարդակը բարձր է, ինչը ճնշում է տեղական բիզնեսին և հանգեցնում նրան, որ բացառիկ, այլընտրանքային արտադրանքի փոխարեն առաջնահերթությունը տրվում է զանգվածային, ստանդարտացված առաջարկներին: Սա նաև վերածվում է ֆինանսական արտահոսքի, քանի որ զբոսաշրջիկների կողմից ստացված եկամուտների մեծ մասը չի մնում դեստինացիայում (կամ երկրում):
- Չբուսաշրջության ռեսուրսների, գրավչության և տեսարժան վայրերի, մատակարարների, միջոցառումների, ներդրումային հնարավորությունների և այլ համապատասխան տեղեկատվության հավաքագրման համար չկա զբոսաշրջության հոլսալի, կենտրոնացված ազգային ռեզիստր:



- Չբուսաշրջության հարացույցի փոփոխությունն զլրբալ մակարդակով՝ սպառողականից դեպի փորձառական, անձակենտրոնից դեպի սոցիալապես շահավետ, հարմարավետությունից և զվարճանքից դեպի իմաստալից և հարստացնող: ՄԺՅՓՁ որպես հայեցակարգ համահունչ է նոր միտումներին:
- Չբուսաշրջային հոսքերի վերաուղղորդում, ներառյալ ներքին զբոսաշրջության աճը կամ հարևան և մերձակա շուկաների պահանջարկի ավելացումը: Այս միտումը հատկապես ակնհայտ կլինի զլրբալ համաճարակային իրավիճակի տեսանկյունից:
- Վիզայի պահանջների մեղմացումը կոյուրացնի որոշ շուկաների մուտքը մեր երկիր:
- Երկրը կարող է ընդլայնել իր անդամակցումը ՄԺՅՓ տարբեր միջազգային կազմակերպություններին՝ համաշխարհային շուկայում իր մրցակցային առավելությունները մեծացնելու համար:
- Կայունության օրակարգը պահանջում է ավելի գիտակցված սպառում, այդ թվում՝ տուրիստական արտադրանքի: Չանգվածային զբոսաշրջության առաջարկները պետք է ետ մղվեն, և առաջնահերթությունը պետք է տրվի զբոսաշրջության կանաչ ձևերին:
- Ավելի շատ ներդրումներ (ներառյալ կառավարական և ծրագրային աջակցությունը) սոցիալապես շահավետ բիզնես նախաձեռնությունների, այդ թվում՝ ՄԺՅՓ համար:
- Համաշխարհային համաճարակը պահանջում է զբոսաշրջային արտադրանքի սպառման նոր ձևեր՝ ավելի անհատականացված, պակաս մարդաշատ, ավելի անձնավորված, այլընտրանքային կացարանների օգտագործմամբ և այլն:
- Միջսահմանային համագործակցություն հարևան երկրների հետ ընդհանուր զբոսաշրջային արտադրանքի համար (օրինակ՝ թեմատիկ երթուղիներ) և մարքեթինգի համատեղ ջանքեր:

Վտանգներ (Սպառնալիքներ)

- Covid-19-ի համաճարակը, որը հանգեցնում է ամբողջ շուկաների փակմանը, զբոսաշրջության պահանջարկի աննախադեպ անկումը, ճանապարհորդության կոշտ սահմանափակումները և կանոնակարգերը, ինչպես նաև սոցիալական մեկուսացման պահանջը (ի հակառակ սոցիալական շփման, որը հանդիսանում է ՄԺՅՓ հիմնական մասը):
- Համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որը հաջորդում է Covid-19-ի համաճարակներին: Եկամտի նվազումը, գործազրկության բարձր մակարդակը, առաջացող ռիսկերի բարձր մակարդակը և շքեղ սպառումները դադարեցնելու պահանջը, ներառյալ տուրիստական արտադրանքի:
- Կլիմայի զլրբալ փոփոխությունը, որը կարող է հանգեցնել անբարենպաստ պայմանների, սաստիկ եղանակի և բնական աղետների:
- Ուժեղ մրցակիցները, հատկապես ի դեմս մեր հարևան երկրների, որոնց հետ մենք ունենք նմանատիպ տուրիստական ռեսուրսներ:
- Չբոսաշրջության շուկաները դառնում են ավելի դինամիկ և դժվար կանխատեսելի, որոնց դժվար է հարմարվել:



- Սպառողների վերաբերմունքի, ընկալման, գնման վարքագծի և նախապատվության փոփոխությունները, որոնք ավելի երկար ժամանակահատվածի համար կարող են լինել դժվար կանխատեսելի:
- Չբոսաշրջության արդյունաբերության կախվածությունը այլ ոլորտներից, ինչպիսիք են սնունդը և գյուղատնտեսությունը, տրանսպորտը, մշակույթը, տնտեսությունը, արտաքին գործերը, կրթությունը և այլն:
- Մարդկանց գլոբալ միգրացիան, ինչը հաճախ հանգեցնում է գյուղական բնակավայրերի մարդաթափ լինելուն, որոնք չունեն մարդկային ռեսուրսներ Չբոսաշրջության զարգացման համար:

Քաղաքականության հնարավոր տարբերակների նախանշումը

Հիմք ընդունելով կարիքների գնահատման զեկույցը, շահառուների կարծիքների ուսումնասիրությունը և նախորդ բաժնում տրված ՈԻԹՅՎ վերլուծության արդյունքները՝ նախանշվել են որոշ անհրաժեշտ միջամտություններ, որոնք ուղղված են ՄԺՓՉ զարգացմանը:

Ստորև ներկայացված Աղյուսակում ամփոփված են այս առումով հնարավոր ռազմավարական գործողությունները, վերջնարդյունքները և ներգրավված շահառուները:

No	Ռազմավարական գործողություն	Ռազմավարական գործողության նպատակը/ները	Ռազմավարական գործողության հնարավոր վերջնարդյունքները	Հնարավոր պատասխանատու շահառուները
1.	Երկրի տեղակայումը համաշխարհային շուկայում՝ որպես ՄԺՓՉ դեստինացիա	Բուլղարիան պետք է հայտնի լինի իր հարուստ մշակույթի և ժառանգության վրա հիմնված ռեսուրսներով, ինչպես նաև որպես դեստինացիա, որն առաջարկում է եզակի և հիշարժան փորձառություններ Չբոսաշրջությունից եկամուտների ավելացումը Չբոսաշրջության կայուն զարգացման խթանումը	Բուլղարիայի՝ որպես տուրիստական դեստինացիայի, մարքեթինգի և կառավարման բարելավումներ: Արտադրանքի ընդլայնված պորտֆոլիո, ներառյալ մի շարք փորձառության վրա կենտրոնացված փաթեթներ: Չբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների աշխատանքի և արդյունավետության բարելավում	Կառավարություն Չբոսաշրջության նախարարություն Չբոսաշրջային բիզնեսներ

			<p>Բրենդինգի ռազմավարության և ՄԺՅՓՉ զբոսաշրջության նոր բրենդի ձևավորում և իրականացում</p> <p>Ավելի շատ և ավելի լավ պլանավորված խթանող գործողություններ, ներառյալ մասնակցությունը միջազգային տոնավաճառներին և ցուցահանդեսներին</p>	
2.	<p>ՄԺՅՓՉ ոլորտի մրցունակության բարձրացումը</p>	<p>Առաջարկել ՄԺՅՓՉ գրավիչ արտադրանք և գործողություններ</p> <p>Մրցակցային գնի վերաբերյալ տրամադրել ուժեղ արժեքի առաջարկ</p> <p>Պահպանել և պաշտպանել ՄԺՅՓՉ ռեսուրսները</p>	<p>Մշակույթի և ժառանգության վրա հիմնված գրավիչ երթուղիների և փաթեթների ստեղծում</p> <p>Ռեսուրսների գնահատում</p> <p>Արտադրանքի և առաջարկների թվայնացում</p> <p>Բարձրորակ ծառայությունների ապահովում, ներառյալ մոնիտորինգ և վերահսկում</p> <p>Որակի ապահովման նպատակով սերտիֆիկացման և պիտակավորման խրախուսում</p> <p>Ստեղծել ավելի շատ նպատակային մշակութային գրավչություններ</p> <p>Մշակութային միջոցառումների նախագծում, խթանում և բեմադրում</p> <p>Բիզնեսի և հաստատությունների միջև</p>	<p>Չբոսաշրջության նախարարություն</p> <p>Մշակույթի նախարարություն</p> <p>Չբոսաշրջության սոցիալական բիզնեսներ</p>

			համագործակցության և սիներգիայի ուժեղացում:	
3.	Աջակցել ՄԺՀՁ զարգացմանը՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ և գործարար միջավայր	<p>ՄԺՀՓՁ ոլորտում բիզնես նախաձեռնությունների խրախուսում</p> <p>Տեխնիկական և ենթակառուցվածքային պայմանների կատարելագործում</p> <p>Չբոսաշրջության կանոնակարգերի բարելավում</p> <p>ՄԺՀՓՁ զարգացման ռազմավարության պլանավորում</p> <p>Մարդկային ռեսուրսների կառավարում</p> <p>Ֆինանսական խթաններ և ներդրումային հնարավորություններ</p> <p>ՄԺՀՓՁ արտադրանքի ստեղծման մեջ տեղական համայնքների ավելի ակտիվ մասնակցության խրախուսում</p>	<p>Տրանսպորտային լավ ենթակառուցվածքի պահպանում, տեսարժան վայրերի հասանելիության բարձրացում</p> <p>Այցելուների կառավարման վերահսկողության սահմանում</p> <p>ՄԺՀՁ վերաբերյալ իրավական կարգավորումների կատարելագործում</p> <p>ՄԺՀՁ ռազմավարական փաստաթղթերի մշակում</p> <p>Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում</p> <p>Համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության հաստատում</p> <p>Միջսահմանային համագործակցություն ընդհանուր զբոսաշրջային արտադրանքի համար</p> <p>Առավել կենտրոնացում ապագա փորձագետների գործնական վերապատրաստման վրա</p> <p>Սկսնակ գործարարների ֆինանսավորում և տեխնիկական աջակցություն</p>	<p>Կառավարություն</p> <p>Չոսաշրջության նախարարություն</p> <p>Չբոսաշրջության նախարարություն</p> <p>Չբոսաշրջության ազգային խորհուրդ</p> <p>Չբոսաշրջության նախարարություն</p> <p>Տեղական իշխանություններ</p> <p>Ուսումնական հաստատություններ</p> <p>Կառավարություն</p> <p>Ֆինանսական հաստատություններ</p> <p>Կառավարություն</p> <p>Քաղաքապետարաններ</p> <p>Կառավարություն</p> <p>Տեղական համայնքներ</p>

			<p>Չբոսաշրջության ոլորտում ներդրումների խթանում</p> <p>Դրամաշնորհները և ֆինանսավորման այլ գործիքները մատչելի դարձնել ավելի փոքր մատակարարների համար</p> <p>Նորարարությունների խրախուսում</p> <p>Հարկային մեղմացումներ և ազատումներ</p> <p>Բիզնեսի գործունեության կարգավորում և վերահսկում և հնարավոր «ստվերային» տնտեսական գործունեության մոնիտորինգ</p> <p>Տեղեկատվական և իրազեկման քարոզարշավ՝ հյուրընկալող բնակչության շրջանում ՄԺՀԶ խթանելու նպատակով</p> <p>Խրախուսել տեղի բնակիչների կամավոր մասնակցությունը փառատոններին, միջոցառումներին և այլ զբոսաշրջիկային գործողություններին</p>	
--	--	--	--	--

Եզրակացություններ

Վերլուծությունը հաստատում է, որ ՄԺՀԶ-ը Բուլղարիայում հետագա զարգացման հսկայական ներուժ ունի և պետք է դիտարկվի որպես առաջնահերթություն՝ տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակներում քաղաքականության մշակելիս: Համապատասխան հաստատությունների, զբոսաշրջության ծառայություններ մատակարարող կազմակերպությունների և տեղական համայնքների համագործակցությամբ պետք է մշակվի գործողությունների ճանապարհային քարտեզ կամ ռազմավարական



բաղաբականության շրջանակ՝ ուղղված ավելի կայուն, թիրախավորված զբոսաշրջային առաջարկներին: Անհրաժեշտ են բոլոր շահառուների համատեղ ջանքերը՝

- երկրի իմիջը զբոսաշրջության համաշխարհային շուկայում բարելավելու և Բուլղարիան գրավիչ և ճանաչելի ՄԺՀ ղեստինացիա դարձնելու համար,
- առաջարկները դիվերսիֆիկացնելու համար՝ ազգային պորտֆոլիոյի մեջ ընդգրկելով հատուկ հետաքրքրություն ներկայացնող զբոսաշրջային արտադրանք,
- մշակութային ժառանգությունը պահպանելու, պաշտպանելու և խթանելու համար, ներառյալ զբոսաշրջության ռեսուրսների արժևորումը,
- ծառայությունների որակը բարձրացնելու համար, դրանով իսկ հանգեցնելով մրցունակության բարձրացմանը,
- ՄԺՀ զարգացման նպատակով կառավարությունից խթաններ ձեռք բերելու համար,
- խթանման և տարածման համար բարձր տեխնոլոգիաների, վեբ լուծումների, ինչպիսիք են վիրտուալ շրջագայությունները, արտադրանքի թվայնացումը, և առցանց հարթակների ու սոցիալական լրատվամիջոցների ինտենսիվ օգտագործումը ապահովելու համար:



ՏԱՐԱԾԱՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ՝ ԿՐԱՍՏԱԼ

Սույն փաստաթուղթը ներկայացնում է տարածաբազանի գործողությունների ծրագրի հիմնական ուղեցույցը, որտեղ սահմանված են ՍԱԵ-ի ավագանի երկրներում (ՍԱԵ) ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության (ՄԺՅՓՉ) առաջարկների կատարելագործման պրակտիկան և գործընթացները: Այն ներառում է ՄԺՅՓՉ ոլորտում գործող շահառուների առաջարկություններով սահմանված գործողությունները, որոնք միտված են խթանելու կայունությունը և բիզնես հնարավորությունները:

Նախքան գործողությունների ծրագրի մշակումը անց է կացվել ՄԺՅՓՉ ՈՒԹՅՎ վերլուծություն, որի ժամանակ բացահայտվել են զարգացման հիմնական խնդրահարույց հարցերն ու դժվարությունները: Վերլուծությունը ներկայացնում է հիմնարար տեղեկատվություն ռազմավարական նպատակների ու գործողությունների բացահայտման և բիզնեսի մակարդակում իրավիճակի բարելավման համար:

Այս փաստաթղթի մշակմանը նախորդել է նաև ՄԺՅՓՉ առկա հայեցակարգի ըմբռնումը մշակութային զբոսաշրջություն համատեքստում, որտեղ շեշտը դրվում է ժառանգության և մշակույթի վրա՝ որպես ճանաչողության, սովորելու և ընդհանուր առմամբ փորձառություն ձեռք բերելու տարրեր, որոնք ընդհանուր են ՍԱԵ ծրագրի մասնակից բոլոր երկրների համար:

«Ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջությունը (ՄԺՅՓՉ) ճանապարհորդության սոցիալական և էկոլոգիական գործողությունների ու ծառայությունների փաթեթ է, որն առաջարկում է ժառանգության և մշակույթի հիշարժան փորձառություն և մեկնաբանություն, որոնք ճանապարհորդներին հանգեցնում են ինքնաբացահայտման, նոր ներըմբռնման և ոգեշնչման:

ՄԺՅՓՉ-ի շնորհիվ ոչ միայն ճանապարհորդներն են ընկալում տեղանքի պատմությունը, մարդկանց և մշակույթը, այլև տեղի բնակիչներն են գնահատում իրենց մշակութային արժեքները: Յետևաբար, այն նպաստում է ժառանգության և կենդանի մշակույթի պահպանմանը, ռեսուրսների կայուն օգտագործմանը, ունի տարածաբազանային հավելյալ արժեք և օգուտ է բերում հյուրընկալող համայնքին» (PRO EXTOUR, 2021):

Ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության զարգացումը Կրաստանում
Կրաստանը՝ որպես հարուստ մշակույթ ունեցող հնագույն երկիր, ավանդաբար ներկայացնում է մշակութային զբոսաշրջության ոլորտը նրանց համար, ովքեր հետաքրքրված են վավերական և եզակի տեսարժան վայրերով և կենդանի մշակույթով: Երկրի զբոսաշրջության զարգացման ռազմավարության մեջ մշակութային ռեսուրսները վրացական գինու և խոհանոցի հետ միասին, ինչպես նաև ավանդական հյուրընկալության տարրերը զբոսաշրջության այն արժեքներն են, որոնք ամենից շատ են գրավում ժամանակակից ճանապարհորդներին: ՄԺՅՓՉ-ը՝ որպես մշակութային զբոսաշրջության ավանդական (զանգվածային) ձևի նոր (այլընտրանքային) ուղղություն, առաջին անգամ հայտնվեց «Կրացական մշակույթի ազգային ռազմավարության» մեջ (Էջ 40): Սա նոր ալիք է՝ իր նորամուծություններով, համատեղ մասնակցային պլանավորմամբ, անհատական մոտեցումներով, ստեղծարարությամբ և այլն, որտեղ ինտեգրված են կայուն զարգացման սկզբունքները: Յետևաբար, Կրաստանում ավանդական մշակութային զբոսաշրջությունը վերափոխման փուլում պահանջում է համարժեք պլանավորում, գիտելիք և





միջառարկայական մոտեցում, տարբեր մակարդակներում գործակալությունների համագործակցություն և աշխատուժի համախմբում:

Վրաստանի ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության ՈՒԹՅՎ վերլուծություն

ՈՒԹՅՎ վերլուծության հիման վրա աշխատանքային խումբը քննարկել է ՄԺՅՓՉ հիմնական մարտահրավերները՝ առկա սպառնալիքների նվազեցման և խնդիրների համատեղ լուծման մեթոդները գտնելու նպատակով: Մասնավորապես, որոշվել են չորս ուղղություններ, 9 ռազմավարական նպատակներ և 24 ռազմավարական գործողություններ: Արդյունքները ներկայացված են գործողությունների ծրագրի տրամաբանական շրջանակների տեսքով:

Ուժեղ կողմեր

→ Հարուստ և բազմազան ժառանգություն և մշակույթ

Վրաստանի հնագույն և բազմազան մշակույթը երկրում զբոսաշրջության զարգացման ուժեղ կողմերից է: Գոյություն ունեն բազմաթիվ եզակի մշակութային վայրեր, որոնք տեսարժան վայրեր են համարվում միջազգային և տարածաշրջանային զբոսաշրջության շուկայում, օրինակ՝ հին քաղաքակրթությունը՝ մեգալիթյան կառույցների մնացորդներով, նախապատմական քարանձավային նկարչությամբ, վաղ և միջին դարերի քրիստոնեական ճարտարապետության փայլուն օրինակներով: Բացի այդ, երկրում առկա են բազմազան և եզակի բնույթի ոչ նյութական ռեսուրսներ, որոնք արժևորվում են իրենց հարատևությամբ: Կենդանի մշակույթի օրինակները, ինչպիսիք են ժողովրդական պարերը, վրացական բազմաձայնությունը, խոհարարությունը և գաստրոնոմիան, ժառանգության արհեստները և տեսողական արվեստը, սոցիալական գործելակերպը և այլն, Վրաստանի վավերական և բնորոշ մասն են համարվում, իսկ դրանց մի մասը ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին կոնվենցիայով (UNESCO.org, 2019): Հետաքրքիր են նաև երկրի պատմությունը, մասնավորապես, Վրաստանի ծայրամասային շրջաններում կայսրությունների կովկասյան արկածախնդրության հետքերը և այլն:

→ Պետական աջակցություն

Վրաստանում մշակութային երթուղիների զարգացման և եվրոպական խորհրդի Մշակութային երթուղիների ծրագրում արդյունավետ ներգրավման նպատակով Մշակույթի, երիտասարդության և սպորտի նախարարությանը կից Մշակութային երթուղիների գրասենյակը համակարգում է Վրաստանի մշակութային երթուղիների ռազմավարական զարգացման և սերտիֆիկացման միջգերատեսչական խորհրդի գործունեությունը: Խորհուրդը բաղկացած է 13 ներկայացուցիչներից (Cultural Routes of Georgia, 2017).

Վրաստանում այլընտրանքային զբոսաշրջությունը դարձել է բազմաթիվ ոլորտների մաս՝ որպես օժանդակ արդյունաբերություն: Հետևաբար, ծրագրեր են իրականացվում՝ ի աջակցություն փոքր և միջին բիզնեսի: Ակտիվորեն քննարկվում են կայուն զարգացման սկզբունքները, ինչպիսիք են ռեսուրսների կայուն օգտագործման նպատակով ինքնակառավարման համատեղ մասնակցային պրակտիկայի ներդրումը, դեստինացիաների



կառավարման կազմակերպությունների (ԴԿԿ) և տեղական գործողությունների խմբերի (ՏԳԽ) ստեղծումը:

→ Տեղական ռեսուրսների և տաղանդների օգտագործում

Բազմազան և շուկային ուղղված արտադրանք ստեղծելու նպատակով անհրաժեշտ է կազմակերպել զբոսաշրջային ինտեգրված երթուղիներ, որոնք հիմնված են տեղական շուկայում առկա ռեսուրսների վրա:

→ Ինտեգրում մշակութային ուղիների ծրագրին

2016 թվականից Վրաստանը ներգրավված է «Եվրոպայի մշակութային ուղիների հավաստագրման ծրագրում»¹, ինչը ոչ ուրիին է դարձնում մշակութային երթուղիների կազմակերպման և միջազգային ցանցում դրանց ինտեգրման ուղեցույցների ներդրումը: Այս առումով հետաքրքիր են հարցումների հիման վրա երթուղիների հավաստագրումը և դրանց ինտեգրումը Եվրոպայի մշակութային երթուղիներում (Cultural Routes of Georgia, 2017)².

Թույլ կողմեր

→ Պակաս բազմազան և որակյալ զբոսաշրջության արտադրանք

Ներկայումս զբոսաշրջիկները փնտրում են նորույթներ, նոր հույզեր, գիտելիք, որոնք թույլ կտան նրանց ձեռք բերել անմոռանալի փորձառություն: Բացի վավերական տեսարժան վայրերից, հյուրընկալողների և այցելուների միջև սերտ համագործակցության պահանջ կա, ինչը տեղական ավանդույթները հասկանալու յուրօրինակ միջոց է: Միևնույն ժամանակ, ՈԻԹՅՎ վերլուծությունը ցույց տվեց, որ չնայած փորձառության և արկածախնդրության հանդեպ բազմազան և մեծ հետաքրքրությունը, հարցվողների ավելի քան 30%-ը պահանջում է հարմարավետ ճանապարհորդություն և պատրաստ է զոհաբերել սեփական հարմարավետությունը անմոռանալի փորձառություն ձեռք բերելու համար: Այստեղ ցանկալի է ստեղծել պրոֆեսիոնալ և սիրողական զբոսաշրջության առաջարկներ:

Առկա իրավիճակի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ արկածներ, նոր հույզեր, ոգեշնչում և փորձառություն ձեռք բերելը հնարավոր չէ միայն մեկ արտադրանք և հարմարավետություն առաջարկելով: Բացի վավերական միջավայրից, հաճախորդները պահանջում են ֆիզիկական ակտիվություն, ինչպիսիք են քայլելը, ձիասպորտը, հեծանվային շրջայցերը իրենց դեստինացիայում, մշակութային լանդշաֆտում, ինչպես նաև բնական անաղարտ

1 Ծրագրի շրջանակներում մշակվել են հինգ մշակութային շրջագայություններ՝ «Գինու երթուղի», «Յրեական ժառանգության եվրոպական երթուղի», «Պատմական տաք ջրերի քաղաքների եվրոպական երթուղի», «Նախապատմական քարանձավային նկարչություն» և «Պատմական այգիների եվրոպական երթուղի»:

2 Այս փուլում հավաստագրված երթուղիներն են՝ «Գերմանական բնակավայրեր և հնագիտական ժառանգություն», «Վրաստանում Ալեքսանդր Դյումայի հետքերով»: Հարցումներ են անցկացվել հետևյալ թեմաներով՝ «Հայտնի և անհայտ մշակութային երթուղիները Արևմտյան Վրաստանում», «Ժամանակակից ոճի ճարտարապետական ժառանգության ուսումնասիրությունը Վրաստանում», «Հին քաղաքակրթությունների հետքերով», «Ես գնում եմ Գուրիա, բայց», «Վրացական կերամիկայի երթուղին», «Պատմական ժառանգության վրացական երթուղին», «Նախապատմական քարանձավային նկարչության երթուղին Վրաստանում», «Բերդեր՝ ապագայի պահակներ»:



միջավայրում զբոսնելը, ագրոտուրիստական տնտեսություններ շրջայցերի առաջարկները և այլն:

→ Աշխատակազմի ոչ բավարար որակավորում և գիտելիք

ՈԻԹՅՎ վերլուծությունը ցույց տվեց, որ աշխատաշուկայում առկա մարդկային ռեսուրսների որակավորման և համապատասխան գիտելիքի պակաս կա: Ցանկը պատրաստվել է փորձագետների և հյուրանոցների/ռեստորանների կառավարիչների հետ քննարկման հիման վրա:

→ Աշխատունակ տարիքի բնակչության միգրացիայի աճի միտում

Ցավոք, երիտասարդները չեն հետաքրքրվում իրենց ծնողների պատմված լեգենդներով և չեն ցանկանում սովորել այն, ինչ անցյալը պահպանել է իրենց համար: Վերլուծությունը ցույց է տվել, որ զբոսաշրջիկների հույզերն ու հուզմունքը ուժեղացրել են վրացի տանտերերի մոտիվացիան, ինքնության զգացումը, հպարտությունը իրենց երկրի մշակույթի և ազգային արժեքների նկատմամբ, սեփական ստեղծագործական հմտությունների/տաղանդների ճանաչումը և նրանց դերը գիտելիքների փոխանցման և ռեսուրսների պահպանման գործում:

→ Թույլ համագործակցություն մարզային և պետական մակարդակում

Չբոսաշրջային շուկայում կարևոր են զբոսաշրջային օբյեկտները՝ հիմնական ենթակառուցվածքը, որն ապահովում է սարքավորումները և դեստինացիայի հարմարությունները: Ջրի և գազի մատակարարումը մարզերում դեռ խնդիր է: Չբոսաշրջային տեղանքի և ճանապարհների ազդանշաններն անբավարար են, որոնք հնարավոր չէ տրամադրել առանց տեղական ինքնակառավարման մարմինների աջակցության:

→ Թույլ ցանցային համագործակցություն ծառայությունների մատակարարների միջև (ինչը խոչընդոտում է վարպետների ներգրավմանը զբոսաշրջության շուկայում)

Ներկայումս այցելուներին չեն կարող զարմացնել միայն հարմարավետ կացարանն ու միօրինակ առաջարկները: Ստեղծագործական մոտեցումը և ստեղծագործական տարրերի ներառումը հնարավոր է միայն տարբեր մատակարարների համագործակցության և ինտեգրված զբոսաշրջության արտադրանքի ստեղծման շնորհիվ:

→ ՄԺՅՓՉ զբոսաշրջության արտադրանքի անբավարար մեկնաբանություն և մարքեթինգ

Չբոսաշրջիկներին հաճախ ավելի շատ հետաքրքրում են ոչ թե փաստերը, այլ կոնկրետ պատմություններն ու լեգենդները: Չգացմունքային շփման համար զբոսաշրջիկին անհրաժեշտ է կենդանի պատմած պատմություն: Առաջարկվում է հանրայնացնել տեղական միջոցառումները, ինչպիսիք են էթնո փառատոները, համայնքային փառատոները և այլն: Անհրաժեշտ է ակտիվորեն կիրառել այսպես կոչված «պատմելու» տեխնիկան՝ փորձով



կիսվելու համար և պրոցեսի նկարագրության համար ունենալ այնպիսի հմտություններ, որոնք այցելուներին ցույց կտան երկրի հին ավանդույթները:

Վրացական ավանդույթների եզակի փորձառությունների ներկայացումը պահանջում է ավելի ճկուն մոտեցում և նորարարական հարթակներ, ինչպիսին է Airbnb.com պորտալը տրանսֆորմացիոն ճանապարհորդական փորձառության մասին: Վրաստանում գոյություն ունեցող առցանց հարթակներին անհրաժեշտ են մատակարարների ակտիվացում, թվային մարքեթինգի և սոցիալական ցանցերի կառավարման համապատասխան գիտելիք/հմտություններ, հավանական հաճախորդների հետ բարձրորակ հաղորդակցություն:

Չնարավորություններ

→ Շահավետ դիրք Կովկասյան տարածաշրջանում

Վրաստանը մրցունակ երկիր է միջազգային և տարածաշրջանային զբոսաշրջիկների հյուրընկալման տեսանկյունից: Բոլոր երեք երկրների շրջագայությունները միջազգային շուկաներում ներկայացնում են վրաց տուրօպերատորները:

→ Եվրոպայի խորհրդի և միջազգային կազմակերպությունների աջակցություն

2021 թվականին Քուբաիսի քաղաքում տեղի կունենա Եվրոպական խորհրդի մշակութային երթուղիների 10-րդ խորհրդատվական ֆորումը (սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը):

→ Միջազգային թեմատիկ շրջագայությունների ստեղծում

Թեմատիկ զբոսաշրջության արտադրանքի ստեղծման տեսանկյունից Վրաստանը կարող է ստեղծել Մետաքսի ճանապարհին և Եվրոպական մշակութային ուղիներին վերաբերող թեմաներ: Մետաքսի (առևտրային) ճանապարհի վերակենդանացման ծրագրին աջակցում է ՄԱԿ-ի Չբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը, որի նպատակն է զբոսաշրջության միջոցով հանրայնացնել ոչ նյութական մշակութային ժառանգությունը³:

Չետաքսի է նաև Վրաստանում կերամիկայի երթուղու հանրայնացումը, որը կնպաստի տեղում կերամիկական ապրանքներ պատրաստելուն (Associazione Strada Europea della Ceramica, 2018)⁴.

→ Կանոնակարգեր և հեղինակային իրավունքի պաշտպանություն

3 Մետաքսի ճանապարհի թեման հաջողությամբ օգտագործվում է Ուզբեկստանում, և Բուխարայում տարեկան անցկացվում է Մետաքսի և համեմունքների փառատոն: Փառատոնին ներկայացվում է շուր ծրագիր, որում ցուցադրվում են Ուզբեկստանի և հարևան երկրների մշակույթի ավանդական ապրանքներն ու սովորույթները: Այցելուները համոտեսում են քաղցրավենիք, ինչպիսիք են հալվան, հաճախում են ներկայացումների, մասնակցում են ձեռագործ իրերի պատրաստմանը: Երանք նաև հնարավորություն ունեն մասնակցելու ուզբեկական նշանակալի ուտեստի՝ փլավի, պատրաստմանը և համոտեսին:

4 Կերամիկայի եվրոպական երթուղին (2012 թվականից Եվրոպական խորհրդի կողմից ճանաչված մշակութային երթուղին) նախատեսում է մշակութային ժառանգության արժեքի շնորհում, որը կապված է կերամիկայի արտադրության և դրա հին ավանդույթի հետ, ստեղծում է կայուն և մրցունակ զբոսաշրջության առաջարկ, ոչ միայն նմուշների և հավաքածուներ, այլ մի ամբողջ կենդանի մշակույթ, որը պահպանվել է այս արդյունաբերության կողմից տարիներ շարունակ:



Ավանդական արտադրանքը կառավարության պաշտպանության կարիքն ունի՝ կանոնակարգերի մշակման, ապրանքների ինքնության պահպանման, դրանց մակնշման և բրենդավորման առումով: Ավանդական արտադրանքի հանրայնացման և պաշտպանության մեկ այլ մեխանիզմ է հեղինակային իրավունքի պաշտպանությունը, որն աջակցություն է տրամադրում այդ իրավունքներն ունեցող համայնքներին և նախապայման է ստեղծում նրանց արտադրանքի պաշտպանության համար: Կարևոր է նաև հասկանալ ամբողջ համակարգը և տարրերը, որոնք մասնակցում են այս գործընթացի արժեշտային:

Վտանգներ (Սպառնալիքներ)

- Տարածաշրջանում քաղաքական անկայուն իրավիճակ
- Ետ-COVID-19-ի համաճարակային շրջան

Ըստ փորձագետների և ոլորտի մասնագետների՝ զբոսաշրջային շուկայում առկա մարտահրավերների ֆոնին նոր հնարավորություններ են ի հայտ եկել: Այս առումով, վեր են հանվել երեք խնդիրներ՝

- Կրթական զբոսաշրջությունը փոխարինել կոնկրետ փորձառությունների հեռավար տարածման առցանց պրակտիկայով,
- Ստեղծել ներքին զբոսաշրջության զարգացման ներուժ,
- Սահմանել կարճաժամկետ նպատակներ և փոփոխություններ կատարել առկա զբոսաշրջության ռազմավարության մեջ:

Քաղաքականության հնարավոր տարբերակները

Վերոնշյալ բոլոր արդյունքների վելուծության համար, մասնավորապես, թե ինչ կարելի է անել ուժեղ կողմերը/հնարավորությունները օգտագործելու և թույլ կողմերը/սպառնալիքները նվազեցնելու համար, օգտագործվում է ՎՅԹՈՒ մեթոդը, որն արդյունավետ է մարտահրավերները/միջամտության ոլորտները և ռազմավարական նպատակները բացահայտելու համար:

Աղյուսակ 1 ՎՅԹՈՒ

Բացահայտված ոլորտներ	Մարտահրավեր / միջամտության ոլորտներ
Ուժեղ կողմեր և հնարավորություններ	Չհարավոր միջոցառումները
<ul style="list-style-type: none"> • Հարուստ և բազմազան ժառանգություն և մշակույթ, պահպանված սոցիալական գործելակերպեր և այլ ավանդույթներ 	<ul style="list-style-type: none"> ⇒ • Չբոսաշրջության շուկայում մրցակցային, վավերական արտադրանքի ստեղծումը
<ul style="list-style-type: none"> • Տեղական ռեսուրսներ և տաղանդներ, գիտելիք 	<ul style="list-style-type: none"> ⇒ • Ինտեգրված թեմատիկ զբոսաշրջության երթուղիների կազմակերպումը և մեկնաբանումը:
<ul style="list-style-type: none"> • Մշակութային երթուղիների բաժնի ստեղծում 	<ul style="list-style-type: none"> ⇒ • Թեմատիկ երթուղիների ստեղծումը և դրանց ինտեգրումը եվրոպական մշակութային երթուղիներին
<ul style="list-style-type: none"> • ԴԿԿ-ների և ՏԳԽ-ների ստեղծում 	<ul style="list-style-type: none"> ⇒ • Ինքնակառավարման մասնակցային պրակտիկայի և համայնքների վրա հիմնված գործողությունների կատարելագործումը
<ul style="list-style-type: none"> • Շահավետ դիրքը Կովկասյան տարածաշրջանում 	<ul style="list-style-type: none"> ⇒ • Համակցված, միջսահմանային զբոսաշրջության արտադրանքի ստեղծումը
	<ul style="list-style-type: none"> ⇒ • Թեմատիկ երթուղիների հանրայնացումը և դրանց ինտեգրումը միջազգային և եվրոպական թեմատիկ երթուղիներում


<ul style="list-style-type: none"> • Միջսահմանային և միջազգային թեմատիկ ՄԺՅՓՁ երթուղիների կազմակերպում • Ավանդականությունը և ծագման վայրը արտահայտող նշանների տեղադրումը, կանոնակարգերը և հեղինակային իրավունքի պաշտպանությունը • 2021 թ.-ին նախատեսված խորհրդատվական ֆորումը • COVID-19-ի համաճարակից հետո մարզեր մեկնելու տեղական պահանջարկի ավելացում 	⇒	<ul style="list-style-type: none"> • Թեմատիկ փառատոների և այլ միջոցառումների կազմակերպումը և դրանց ընդգրկում միջազգային փառատոնի ծրագրում • Ավանդականության և մտավոր սեփականության ուղեցույցների ինտեգրումը ՄԺՅՓՁ զբոսաշրջության արտադրանքի մեջ • Մասնակցությունը Եվրոպական Խորհրդատվական ֆորումին և միջազգային այլ միջոցառումներին, փորձառական և ստեղծագործական մշակութային երթուղիների հանրայնացումը • Տեղական շուկայի առաջարկների մշակումը
<p>Թույլ կողմեր և սպառնալիքներ</p>		<p>Հնարավոր միջոցառումները</p>
<ul style="list-style-type: none"> • Պակաս դիվերսիֆիկացված որակյալ արտադրանք • Աշխատակազմի ոչ համարժեք/անբավարար որակավորում և գիտելիք • Ոլորտի նորոշյալ և պակաս իրազեկվածությունը • Անբավարար զբոսաշրջային ենթակառուցվածքներ • Աշխատունակ տարիքի բնակչության միգրացիայի աճի միտում և տեղական գիտելիքի կորուստ • Բնակչության ցածր վճարունակություն • Թույլ համագործակցություն մարզային և պետական մակարդակներում • Անբավարար հիմնական ենթակառուցվածքներ • Ցանցային թույլ համագործակցություն տեղական, ազգային և միջազգային մակարդակներում • Հետ-COVID-19-ի համաճարակային շրջան • Անկայուն միջավայր 	<p>⇒</p> <p>⇒</p> <p>⇒</p> <p>⇒</p> <p>⇒</p> <p>⇒</p> <p>⇒</p> <p>⇒</p>	<ul style="list-style-type: none"> • Թիրախային, որակյալ զբոսաշրջության արտադրանքի ստեղծում, ներառյալ քայլարշավային և հեծանվային տուրերի մշակումը • Դասընթացների կազմակերպում • Չբոսաշրջության արտադրանքի մեջ ռեսուրսների և բազմազանության պաշտպանության համար պարզաբանումների մշակում, ուղենիշների ինտեգրում, ՄԺՅՓՁ սեմինարների կազմակերպում, մասնագիտական ասոցիացիաներ հիմնելու, գիտելիքի և պրակտիկայի փոխանակման համար կենտրոնների ստեղծում: • ՄԺՅՓՁ արտադրանքի համար անհրաժեշտ ենթակառուցվածքի բարելավում, ներառյալ հուշանվերների և ժառանգության արհեստների ստուդիաների կազմակերպման դյուրացումը: • Երիտասարդների ներգրավում զբոսաշրջության գործողությունների մեջ և տեղական գիտելիքի պահպանում • Տեղական շուկայի համար այլընտրանքային առաջարկների ստեղծում • Բազմոլորտային համագործակցության խորացում • Չբոսաշրջային պայմանների բարելավման և հարմարությունների ապահովման համայնքային ծրագրերի աջակցություն • Նորարարական հարթակներում զբոսաշրջության ստեղծագործական արտադրանքի առաջարկ, արտադրողի հմտությունների/գիտելիքի խորացում թվային մարքեթինգի և սոցիալական ցանցի կառավարման ոլորտում: • Հատուկ փորձառությունների հեռավար փոխանակման առցանց պրակտիկային անցնելու դյուրացում



Ռազմավարական տեսլականը, նպատակները և գործողությունների ծրագիրը

Մինչև 2030 թվականը Կրաստանը կդառնա Կովկասյան տարածաշրջանում ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության մրցակցային դեստինացիա՝ հիմնվելով հարուստ կենսամշակույթի և բարձրորակ ծառայությունների վրա: Երկիրը պայմաններ է ստեղծում զբոսաշրջիկների գործնական մասնակցության և վավերական փորձառություններ ձեռք բերելու համար, ինչպես նաև տեղական համայնքների սոցիալական և տնտեսական օգուտները մեծացնելու համար: Միևնույն ժամանակ, այն ապահովում է մշակութային ժառանգության պահպանումը, զբոսաշրջիկների և տեղական բնակչության իրազեկության բարձրացումը և երկրի զբոսաշրջության եկամուտների ավելացումը:

Ռազմավարական ուղղությունները՝



Ռազմավարության նպատակները՝

- ➔ **Վավերական, մրցունակ ՄԺՖՁ արտադրանքներն ու ծառայությունները մշակվում են երկրի բազմազան և հարուստ կենսամշակույթի հիման վրա:**
- ➔ **Երկրի ժառանգությունը և կենդանի մշակույթը պահպանվում են երկարաժամկետ հեռանկարում: Մարքեթինգը և հաղորդակցությունը բավարարում են թիրախային շուկայի պահանջները և ներկայացնում են երկիրը միջազգային ստեղծագործական և փորձառական զբոսաշրջության շուկայում:**
- ➔ **ՄԺՖՁ արտադրանքներն ու ծառայությունները մշակվում են երկրի բազմազան և հարուստ կենսամշակույթի հիման վրա:**
- ➔ **ՄԺՖՁ կառավարումը համապատասխանում է զարգացման բազմաճյուղային և համամասնակցային զարգացման մոտեցումներին, որտեղ նախատեսվում է տեղական համայնքի ներգրավում և համագործակցություն տարբեր մակարդակներում:**

Աղյուսակ 2 ՄԺՖՁ զարգացման գործողությունների ծրագիրը

Ռազմավարական գործողություն	Ռազմավարական գործողության նպատակ(ներ)ը	Ռազմավարական գործողության հնարավոր վերջնարդյունք(ներ)ը	Հնարավոր պատասխանատու շահառու(ներ)ը
1. Վավերական, մրցակցային ՄԺՖՁ արտադրանքի և ծառայությունների ստեղծում՝ երկրի բազմազան և հարուստ	1.1 Բարձրորակ ՄԺՖՁ արտադրանքի ստեղծում, որում ինտեգրված են տեղական ռեսուրսներն ու կենսամշակույթի տարրերը	1.1.1. Քաղաքապետարաններում իրականացվել է նյութական և ոչ նյութական մշակութային ռեսուրսների գույքագրում:	ՎՁԱԿ, Մշակութային երթուղիների գրասենյակ, Կրաստանի մշակութային ժառանգության պահպանության ազգային
		1.1.2 Չբոսաշրջային տարածքներում մշակվել և	

կենսամշակույթի հիման վրա		գծանշվել են կրթական թեմատիկ երթուղիները:	գործակալություն, Ազգային թանգարան, տեղական քաղաքապետարաններ, ԴԿԿ-ներ, ՏԳԽ-ներ, Չբուսաշրջության դաշինքի անդամ կազմակերպություններ, Համալսարանական հետազոտական կենտրոններ, ԵՄ, USAID-ի տնտեսական անվտանգության ծրագիր
		1.1.3 Ստեղծվել և գործում են մարզերը, այդ թվում՝ Եվրոպան ՍԱԵ-ին կապող զբոսաշրջության (միջսահմանային) ծրագրեր:	
		1.1.4. Ընտրվել և ներկայացվել է առնվազն մեկ ժողովրդական խաղի/ծիսական կամ բանահյուսական միջոցառման կոստյումային իմպրովիզացիա:	
		1.1.5. Սեզոնայնությունը կրճատվել է: Ստեղծվել են ձմեռային առաջարկներ և տեղում կարճ տուրիստական ծրագրեր:	
1.2. Մշակութային արժեքների հարմարեցված տուրիստական ենթակառուցվածքների ստեղծում և կառավարում,		1.2.1. ՄԺՅՓՁ նոր երթուղիների զարգացման, կազմակերպման և կառավարման ուղենիշային սկզբունքները ներդրվել են շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ ԴԿԿ-ների հետ համաձայնեցման հիման վրա:	ՎՉԱԿ, Մշակութային երթուղիների գրասենյակ, Վրաստանի մշակութային ժառանգության պահպանության ազգային գործակալություն, Ազգային թանգարան, տեղական քաղաքապետարաններ, ԴԿԿ-ներ, ՏԳԽ-ներ, Չբուսաշրջության դաշինքի անդամ կազմակերպություններ, միջոցառումների կառավարման կազմակերպություններ
		1.2.2. Նորարարական և ենթակառուցվածքային ծրագրերը/ գործողություններն իրականացվել են միջնորդների (ԴԿԿ-ներ, տուրօպերատորներ, բիզնես ասոցիացիաներ և այլն) հետ փոխադարձ համաձայնագրերի հիման վրա:	
		1.2.3 ՄԺՅՓՁ արտադրանքը/ ծառայությունները բարելավվել են՝ այցելուներ ընդունելու և ապրանքի ցուցադրման համար անհրաժեշտ տարածքների/ վայրերի գույքագրմամբ:	
1.3 Նորարարական և շահավետ առաջարկներ անելու նպատակով տեղական և տարածաշրջանային		1.3.1 Մշակվել են անհրաժեշտ ակադեմիական նյութեր և անց են կացվել վերապատրաստման դասընթացներ ՄԺՅՓՁ արտադրանքի մշակման,	ՎՉԱԿ, տեղական քաղաքապետարաններ, ԴԿԿ-ներ, ՏԳԽ-ներ, Չբուսաշրջության դաշինքի անդամ

	<p>հնարավորությունների մեծացում</p>	<p>մեկնաբանման և կառավարման գործնական հմտություններ ձեռք բերելու համար:</p>	<p>կազմակերպություններ, միջոցառումների կառավարման կազմակերպություններ, airbnb.com, Expogo.ge</p>
		<p>1.3.2 Արտադրողների հմտությունները բարելավվել են այցելուների ընդունման, ապրանքների և ծառայությունների որակի ստանդարտների, սննդի անվտանգության և կառավարման, մարքեթինգի և սոցիալական ցանցերի կառավարման տեսանկյունից:</p>	
		<p>1.3.3. Ավանդույթների արտադրությունը տեղում ավելացել է (ձեռագործ իրեր, ապրանքներ, տեղական ժողովրդական կառույցներ):</p>	
<p>2. Նյութական և ոչ նյութական մշակութային ռեսուրսների կայուն օգտագործում և պահպանում</p>	<p>2.1 Բարձրացնել ժառանգության և մշակութային ռեսուրսների մասին տեղեկացվածությունը</p>	<p>2.1.1. Մշակվել են HCBET սահմանումները, անց են կացվել հարցումներ, արդյունքները ցուցադրվել են սեմինարներում և ֆորումներում:</p>	<p>Տեղական բաղաբազմատարաններ, ԴԿԿ-ներ, ՏԳԽ-ներ, Չբոսաշրջության դաշինքի անդամ կազմակերպություններ, ԵՄ, USAID-ի տնտեսական անվտանգության ծրագիր</p>
		<p>2.1.2. Մշակութային ինքնության բարձրացման, գիտելիքի փոխանակման արդյունավետության և սերնդից սերունդ տեղեկատվության փոխանցման, ինչպես նաև մասնագիտական շփումների համար ստեղծվել և գործում են ժամանակակից պլատֆորմ և կենտրոններ:</p>	
		<p>2.1.3. Միջոցառումների կազմակերպմանը երիտասարդներին ներգրավելը մեծացրել է ՄԺՅՓՉ գործունեության մեջ նրանց ներգրավվելու շարժառիթը:</p>	
	<p>2.2 Կանխել մշակութային ռեսուրսների կորուստը</p>	<p>2.2.1 Ավանդականության և գույքի ուղեցույցները ինտեգրվել են ՄԺՅՓՉ արտադրանքի մեջ, նրանց շնորհվել է համապատասխան որակի նշան:</p>	

<p>3. ՄԺՓՉ արտադրանքի տեսանելիության և զբոսաշրջության շուկա դրանց մուտքի բարելավում, ինչպես նաև միջազգային շուկայում երկրի ՄԺՓՉ-ի հանրայնացման բարձրացում</p>	<p>3.1. Արդյունավետ թիրախի կազմակերպչական և մարքեթինգային միջոցառումների մշակում և իրականացում</p>	<p>3.1.1. Որակյալ և մրցակցային ապրանքները/առաջարկները հայտնվել են նորարարական հարթակներում, ծրագրերն ու առցանց հարթակները օգտագործվում են ՄԺՓՉ արտադրանքի վաճառքի և գործնական տեղեկատվության տարածման համար:</p>	<p>Տեղական քաղաքապետարաններ, ԴԿԿ-ներ, ՏԳԽ-ներ, Ստեղծարար Վրաստան, Չբոսաշրջության դաշինքի անդամ կազմակերպություններ, ԵՄ, USAID-ի տնտեսական անվտանգության ծրագիր</p>
		<p>3.1.2 Մշակվել և կազմակերպվել են ՄԺՓՉ ծրագրեր, որոնցում ներգրավված են ստեղծագործ հյուրընկալողներ Վրաստանից:</p>	
		<p>3.1.3. Պատրաստվել են գովազդային նյութեր ԴԿԿ-ներում/ՃՏԿ-ներում և միջոցառումների ժամանակ տարածելու համար:</p>	
		<p>3.1.4. Կազմակերպվել և ներկայացվել են ՄԺՓՉ արտադրանքի գովազդային միջոցառումներ (օրինակ՝ «Ստեղծագործ հյուրընկալող» մրցանակաբաշխությունը), որոնք պետք է ներկայացվեն տարբեր միջոցառումների ժամանակ, այդ թվում՝ Չբոսաշրջության մրցանակաբաշխությունը:</p>	
	<p>3.2 Տեղական, ազգային և միջազգային մակարդակներում ցանցային համագործակցության ընդլայնում</p>	<p>3.2.1. Չբոսաշրջության շուկայում աճել է վարպետների ներգրավվածությունն ու ժողովրդականությունը:</p>	
		<p>3.2.2. Ներդրվել է վաուչերային համակարգ (օրինակ՝ անվճար տոմս դեպի թանգարան հյուրանոցում մնալով) վայրերի այցելությունների և տեղացիների հետ համագործակցության տևողությունը մեծացնելու համար:</p>	
<p>3.2.3. Ներդրվել է կանոնավոր փառատոների կազմակերպման գործելակերպը և դրանք</p>			



		ներառվել են միջազգային ցանցերում՝ զբոսաշրջության ծրագրերի հետ միասին:	
4. Ոլորտի արդյունավետ կառավարում՝ բազմոլորտային համագործակցության ընդլայնում, ՄԺՀՓՁ արդյունավետ համակարգեր և համամասնակցային մոտեցումներ:	4.1. Ինքնակառավարման համամասնակցային գործելակերպի կատարելագործում՝ համայնքային գործունեություն	4.1.1. Կայունության, բազմազանության և տեղական համագործակցության համար իրականացվել են համայնքային նախագծեր	Ստեղծարար Վրաստան, Մշակութային երթուղիների գրասենյակ, ՎՁԱԿ, Տեղական քաղաքապետարաններ, ԴԿԿ-ներ, Չբոսաշրջության դաշինքի անդամ կազմակերպություններ, ԵՄ, USAID-ի տնտեսական անվտանգության ծրագիր
	4.2. Խորհրդատվական խորհրդի/հարթակի համակարգում	4.2.2. Իրականացվում է գործողությունների ծրագրի մոնիտորինգ միջառարկայական և բազմոլորտային համագործակցությամբ	

Եզրակացություններ

Վրաստանում կայուն զարգացման ընդհանուր նպատակին հասնելու համար իրականացվող գործողությունների ծրագիրը պահանջում է մի շարք հաստատությունների և անձանց համագործակցություն: Այնուամենայնիվ, զբոսաշրջության ոլորտի հիմնական պատասխանատվությունը կրում է Վրաստանի զբոսաշրջության ազգային վարչությունը, ուստի նա է ապահովում գործունեության համագործակցությունը: Միևնույն ժամանակ, ռազմավարության արդյունավետ իրականացման նպատակով ցանկալի է սերտ համագործակցություն Մշակութային երթուղիների գրասենյակի և Մշակույթի նախարարությանն առընթեր Ստեղծարար Վրաստան վարչության հետ:

Ռազմավարության իրականացման համար կարևոր է նաև մշակել ինտեգրված մոտեցում, որն ապահովում է շահառուների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում (հատկապես՝ օգտագործելով «վարից վեր» մոտեցումը): Այդ նպատակով Վրաստանի զբոսաշրջության ազգային վարչությունը կհամագործակցի տեղական ինքնակառավարման մարմինների, Դեստինացիաների կառավարման կազմակերպությունների (ԴԿԿ), քաղաքացիական հատվածի, տեղական գործողությունների խմբերի (ՏԳԽ), ակտիվ քաղաքացիների տեղական ասոցիացիաների և այլ շահառուների հետ:

Ռազմավարության գնահատման համար պետք է որոշվեն չափելի ցուցանիշներ՝ դրանց վրա ռազմավարության ազդեցությունը գնահատելու համար: Նախանշված նպատակի իրականացման մոնիտորինգի համար առաջարկվում է ստեղծել Խորհրդատվական խորհուրդ՝ կողմերի կողմից իրականացվող փուլի մշտական, համաժամանակյա վերահսկման նպատակով: Խորհրդատվական խորհուրդը տարեկան երկու անգամ նիստեր կանցկացնի՝ դեմ առ դեմ կամ վիրտուալ ֆորմատով:



ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ՝ ՀՈՒՆԱՍՏԱՆ

Տարածաշրջանային գործողությունների ծրագիրը (ՏԳԾ) հիմնարար փաստաթուղթ է, որը բացահայտում է ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության ծառայությունները խթանելու գործելակերպերը և գործընթացները Հունաստանի Սևծովյան ավազանի երկու մարզերում՝ Կենտրոնական Մակեդոնիայում և Արևելյան Մակեդոնիայում ու Թրակիայում (այսուհետ՝ ՍԱԵ-Հ տարածաշրջան): Այստեղ ներկայացված են մի շարք առաջարկություններ, որոնք պետք է իրականացվեն զբոսաշրջության մասնավոր և պետական հատվածի հիմնական շահառուների կողմից՝ փորձառական զբոսաշրջության ընձեռած հնարավորությունները խթանելու համար:

Ժամանակակից վիճակը՝ ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները (սպառնալիքները)

Ամբողջ ՍԱԵ-Հ տարածաշրջանն ունի ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական հարուստ և բազմազան ժառանգություն, որ գալիս է նախապատմական դարաշրջանից մինչև մեր օրերը: ՍԱԵ-Հ տարածաշրջանի երկու վարչական շրջաններն էլ, և՛ Կենտրոնական Մակեդոնիան, և՛ Արևելյան Մակեդոնիան ու Թրակիան, ունեն արդեն լավ զարգացած զբոսաշրջության նկարագիր:

Ինչ վերաբերում է նյութական մշակութային ռեսուրսներին, ՍԱԵ-Հ տարածաշրջանն ընդգրկում է Հին Մակեդոնիայի տարածքների մեծ մասը, և այստեղ են գտնվում Հունաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի 18 համաշխարհային ժառանգության վայրերից 4-ը և կարևոր հնագույն քաղաքներ: Շրջանի մայրաքաղաք Սալոնիկը գրավչության կարևոր բևեռ է՝ փորձառական զբոսաշրջության աճի հատուկ ներուժով: Այլ փոքր քաղաքները, ինչպիսիք են Վերիան՝ բյուզանդական դարաշրջանի զգալի թվով հուշարձաններով և Քսանթին՝ իր յուրահատուկ ճարտարապետությամբ, նույնպես ունեն փորձառական զբոսաշրջության աճի ներուժ: Հիմնական բնական ռեսուրսները, ինչպիսիք են Օլիմպոսը՝ Հունաստանի ամենաբարձր լեռը, որն աշխարհում հայտնի է որպես հունական աստվածների տուն և Աթոս լեռը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի երրորդ ժառանգությունը, նույնպես փորձառական զբոսաշրջության առանձնահատուկ վայրեր են:

Ինչ վերաբերում է ոչ նյութական ռեսուրսներին, ՍԱԵ-Հ տարածաշրջանն ունի սովորույթների և ավանդույթների շատ հարուստ բազմազանություն, որոնք կերտում են ուշագրավ և բազմազան տեղական մշակույթ: Որոշ գյուղերում պահպանվել են նաև հայտնի ծեսեր իրենց նախնական ձևով, որոնք նման են Բուլղարիայում պահպանված ծեսերին: ՍԱԵ-Հ երկու շրջանների տարբեր վայրերի հայտնի տեղական խոհանոցը և գաստրոնոմիական դեստինացիաների աճող ներուժը ևս կարող են նպաստել փորձառական զբոսաշրջության վերափոխմանը:

Ինչպես պարզվել է սպառողների հարցման արդյունքում, նրանց մեծ մասը հիմնականում ճանապարհորդում է նոր տարածքներ հայտնաբերելու և վայրի կենսամշակույթը ուսումնասիրելու համար, կա նաև ժառանգություն և մշակութային վայրեր այցելելու մեծ հետաքրքրություն: Ճանապարհորդները, կարծես, պատրաստ են ավելի շատ գումար վճարել բովանդակալից և հարուստ տուրիստական փորձառություն ձեռք բերելու համար, ինչպես

Common borders. Common solutions.



նաև պատրաստ են զոհաբերել հարմարավետությունն ու հարմարությունները՝ հիշարժան և հարուստ փորձառություն ձեռք բերելու համար:

Չետագոտությունները բացահայտել են փորձառական զբոսաշրջության հստակ բովանդակության սահմանման բացակայություն, որը կամ հակասություն է առաջացնում որպես «ընդհանուր տերմին», կամ ամբողջովին հասկանալի չէ: Ավելին, նկատվել է բացթողում զբոսաշրջության ձեռնարկությունների և փորձառությունների առկա և ավանդական դասակարգումների միջև, քանի որ փորձառական հատվածում գործող որոշ բիզնեսներ չեն կարող դասակարգվել առկա զբոսաշրջության կատեգորիաների մեջ: Սա կարելի է մեկնաբանել որպես գոյություն ունեցող զբոսաշրջության մոդելի, համատեքստի և բովանդակության սահմանման վերանայման անհրաժեշտություն՝ արդիականացնելով զբոսաշրջությանը և դրա այլընտրանքային ձևերին վերաբերող օրենսդրությունը:

Փորձառական զբոսաշրջության զարգացումը հեշտացնելու համար օրենսդրական դաշտի վերանայումը կարևոր անհրաժեշտություն է թվում: Փորձառական զբոսաշրջության զարգացմանը նպաստելիք կարևոր գործոններից են տուրիստական ընկերությունների և տեղական արտադրողների համագործակցությունը՝ տեղական համայնքին աջակցելու նպատակով, և միջսահմանային համագործակցությունը: Թվային տեխնոլոգիաները նոր ոլորտներ են ընձեռում փորձառական զբոսաշրջությանը, թույլ են տալիս տարբերակել զբոսաշրջային արտադրանքը և հարստացնել այցելուների փորձառությունը՝ օգտագործելով վիրտուալ գործիքներ: COVID-19-ի համաճարակը, չնայած սովորաբար դիտվում է որպես խնդիր, կարող է նաև վերածվել փորձառական զբոսաշրջության զարգացման հնարավորության:

Փորձառական մշակութային զբոսաշրջության ռազմավարության խթանման և իրականացման համար անհրաժեշտ է ինտեգրված քաղաքականություն բոլոր մակարդակներում: Չբոսաշրջության ոչ ադեկվատ և անբավարար օրենսդրությունը, որը զուգորդվում է ռազմավարական պլանավորման և բովանդակության հստակ սահմանման բացակայության հետ, խոչընդոտում է փորձառական զբոսաշրջության գործունեության և բիզնեսների զարգացմանը: Դա մասամբ պայմանավորված է նրանով, որ զանգվածային զբոսաշրջությունը շարունակում է գերակշռել ոլորտում ամբողջ Յունաստանում, ներառյալ երկու ՍԱԵ-Յ շրջաններում: Ազգային կառավարությունը պետք է մշակի գործողությունների ինտեգրված ծրագիր զբոսաշրջության այլընտրանքային ձևերի, այդ թվում՝ փորձառական զբոսաշրջության համար:

Երկու ՍԱԵ-Յ շրջանների մարզային կառավարություններն էլ չունեն ռազմավարական պլանավորում մշակութային և տրանսպորտային ենթակառուցվածքների համար՝ ֆունկցիոնալ խնդիրների, ինչպես նաև մատչելիության հետ կապված խնդիրների նկատառումներով: Տրանսպորտի տարբեր ձևերի և հեռավոր աշխարհագրական տարածքների և կենտրոնական տարածքների միջև կապի բավարար փոխգործունակության անհրաժեշտություն կա: Երկարաժամկետ ռազմավարական շրջանակն ու պլանավորումը, որոնք սահմանում են պարտականությունները, կառավարման և մարքեթինգային գործելակերպերը, պետական և մասնավոր հատվածի համագործակցությունը, կարևոր նշանակություն ունեն փորձառական զբոսաշրջության զարգացման համար: Կարևոր է նաև աշխարհագրական տարածքներին ցուցաբերել տարբերակված մոտեցում և կառավարում՝ կախված դրանց տարբերակիչ յուրահատկություններից և առանձնահատկություններից: Դա կարող են հաջողությամբ կատարել այլընտրանքային գործառնական մարմինները, ինչպիսին

Common borders. Common solutions.



Է Դեստինացիաների կառավարման կազմակերպությունը (ԴԿԿ), որն ունի խորը գիտելիք յուրաքանչյուր դեստինացիայի առավելությունների և առանձնահատկությունների մասին: Այսպիսով, այն տարածքները և դեստինացիաները, որոնք գուցե այդքան էլ հետաքրքիր չեն, կգարգացնեն իրենց համեմատական առավելությունները և կստեղծեն բարձրորակ փորձառական արտադրանք:

Փորձառական զբոսաշրջության ոլորտում համագործակցության պակասը բոլոր մակարդակներում (ազգային, տարածաշրջանային և տեղական) արձանագրվում է որպես կարևորագույն խնդիր: Բարձրորակ փորձառական արտադրանքն ու ծառայությունները պահանջում են զբոսաշրջության ոլորտում ներգրավված բոլոր շահառուների արդյունավետ համագործակցությունը: Հետևաբար, անհրաժեշտ է մեծ ջանքեր ներդնել և մոբիլիզացնել մի շարք պետական և մասնավոր խաղացողների՝ ոլորտի էական մասնակիցների միջև արդյունավետ համագործակցություն և համերաշխություն ձեռք բերելու և գրավիչ, բարձրորակ փորձառական զբոսաշրջության արտադրանք ստեղծելու համար:

Փորձառական զբոսաշրջության բիզնեսն ու արտադրանքը պետք է կայուն լինեն: Սա նշանակում է, որ զբոսաշրջության արտադրանքին անհրաժեշտ է մշտական հետադարձ կապ և հարմարեցում անկանխատեսելի կամ հրատապ պայմաններին, ինչպիսին է Covid-19-ի համաճարակը, կայուն դառնալու և բոլոր մարտահրավերներին դիմակայելու համար: Ստեղծարարությունը անհրաժեշտ բաղադրիչ է զբոսաշրջության փորձառությունը բարելավելու և տուրիստական դեստինացիաներում յուրահատուկ մթնոլորտ ապահովելու համար: Այսպիսով, կարևոր է բարելավել տուրիստական ընկերությունների նորարարական վարքը՝ իրականացնելով ստեղծագործական գաղափարներ կամ փորձառական գործողությունների մեջ ներգրավելով նոր տեխնոլոգիաները: Վերջապես, ցածր որակի պատճառով բիզնեսի զրպարտության ռիսկը նվազեցնելու համար անհրաժեշտ է զբոսաշրջիկային ձեռնարկություններին պարտադրել առաջարկվող արտադրանքի որակի հսկողություն կամ որակի սերտիֆիկացում:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է ՈԻԹՀՎ վերլուծություն, որը կենտրոնանում է ներքին միջավայրի ուժեղ և թույլ կողմերի վրա (ռեսուրսներ, սպառողներ և տեղական բնակիչներ, զբոսաշրջային արտադրանք և ձեռնարկություններ, քաղաքականություն և կառավարում) և արտաքին միջավայրի հնարավորությունների և սպառնալիքների վրա:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p><u>Ռեսուրսներ՝ նյութական և ոչ նյութական ժառանգություն</u></p> <ul style="list-style-type: none"> Երկար պատմություն/ շատ պատմական հուշարձաններ/ համաշխարհային ժառանգություն Սալոնիկ (շրջանի մայրաքաղաքը)՝ Բարձր արժեք ունեցող ժառանգության ռեսուրսներ/ լավ զարգացած քաղաքային տուրիզմ 	<p><u>Քաղաքականություն/կառավարում</u></p> <ul style="list-style-type: none"> Օրենսդրական-իրավական դաշտի բացակայություն Երկարաժամկետ ռազմավարական շրջանակի և պլանավորման բացակայություն Համագործակցության բացակայություն (ազգային, տարածաշրջանային, տեղական մակարդակներում)



- Նշանակալի ճարտարապետությամբ և հուշարձաններով այլ կարևոր քաղաքներ
- Սովորույթների և ավանդույթների բազմազանություն
- Ժողովրդի մշակութային նկարագիրը
- Հայտնի խոհանոց, համերի խճանկար, գաստրոնոմիկական դեստինացիա
- Ժառանգության հետ կապ ունեցող հարուստ բնական ռեսուրսներ (Օլիմպոս լեռ, Աթոս լեռ)

Սպառողներ և տեղական բնակիչներ

- Ակտիվ տուրիստական մասնակցություն
- Տեղական համայնքը դրական է վերաբերվում փորձառական գործողություններին
- Փորձառական զբոսաշրջության հոսքերը, որոնք ուղեկցվում են ոչ միայն պատմական նշանակության վայրեր կամ հիմնական պատմական վայրեր, այլև թաքնված պատմություն ունեցող կետեր:

Արտադրանք/ ձեռնարկություններ

- Լավ զարգացած տուրիստական պրոֆիլ/ինքնություն (ծովային տուրիզմ, Էկոտուրիզմ, ագրոտուրիզմ, գինի, սպորտ, մշակութային, գաստրոնոմիա, կրոնական ուխտագնացություն, ջերմա-բուժական)
- Մարդակենտրոն մոտեցում
- Բազմաչափ պարամետրերի ինտեգրում
- Դեստինացիան որպես ընդհանուր և ինտեգրված փորձառություն
- Բարձրորակ արտադրանք
- Լավ մշակված թվային մարքեթինգի ռազմավարություն
- Լավ զարգացած փորձառական գործողություններ՝ մշակութային (այլընտրանքային էքսկուրսիաներ, թեմատիկ զբոսանքներ, գինու արահետներ), գյուղատնտեսական (գինու արտադրություն և մեղվաբուծություն, եթերայուղերի թորում, սնկի և ավանդական խոտաբույսերի հավաքում), արկածային (ուղևորություն կայակով, ռաֆթինգ, լեռնային հեծանվավազք)
- Մասնավորապես, հաշմանդամների, տարեցների և ավելի քիչ հնարավորություններ ունեցող մարդկանց համար նախատեսված շրջայցեր

- Մշակութային և տրանսպորտային ենթակառուցվածքների/ֆունկցիոնալ մշակութային ենթակառուցվածքների անհաջող կառավարում և տրանսպորտային խնդիրներ
- Անբավարար տուրիստական մոդել և ենթատեքստ

Արտադրանք/ ձեռնարկություններ

- Ֆինանսավորման պակաս
- Տեղական պատրաստված կադրերի պակաս
- Փորձառական զբոսաշրջության բիզնեսների և տուրիստական գործակալությունների տարբեր գնային քաղաքականություն
- Համագործակցության բացակայություն պետական և մասնավոր հատվածում
- Չբոսաշրջիկների սեզոնային և աշխարհագրական կենտրոնացումներ
- Չանգվածային զբոսաշրջության պատճառով առաջացած ափամերձ ռեսուրսների վրա ճնշումներ
- Փորձառական զբոսաշրջության ոլորտում ռեստորանային արդյունաբերության ներգրավվածության պակաս
- Շահառուների մոտ տարբեր փիլիսոփայություն
- Չբոսաշրջության ոլորտի հետ կապված քիչ ձեռնարկություններ են ծավալել փորձառական գործունեություն
- Փորձառական զբոսաշրջության սահմանման և չափսերի սահմանափակ ըմբռնում



<ul style="list-style-type: none"> Մրցանակներ նորարարական փորձառական գործողությունների համար 	
Հնարավորություններ	Վտանգներ (սպառնալիքներ)
<ul style="list-style-type: none"> Covid-19 (քաղված դասեր) Միջսահմանային համագործակցություն Համատեղի մշակութային ռեսուրսների նշանակում Եվրոպական զբոսաշրջության քաղաքականությունը և ֆինանսավորման գործիքները Տարածքային պլանավորման և կայուն զարգացման նոր հատուկ շրջանակ: Նոր թվային տեխնոլոգիաներ Չբոսաշրջության ոլորտում Էկոլոգիապես հարմար քաղաքականության և ռազմավարության ընդունում Համագործակցություն տուրիստական ընկերությունների և տեղական արտադրողների միջև Նորարարական տեխնոլոգիական պրակտիկայի ներդրում 	<ul style="list-style-type: none"> Covid-19 (ազդեցություն ճանապարհորդության վրա) Համաշխարհային ճգնաժամեր (տնտեսական) Չանվաճային զբոսաշրջության գերակայություն Չբոսաշրջության մրցակցային շուկաներ Չբոսաշրջիկների պահանջարկի կարիքների և միտումների մշտական փոփոխություն Բնական և մշակութային ռեսուրսների գերշահագործում

Ռազմավարական գերակայությունները, նպատակները և գործողությունները

ՍԱԵ-3 տարածաշրջանում ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջությունը խրախուսելու տարածաշրջանային գործողությունների ծրագիրը կազմված է 4 ռազմավարական գերակայությունների (S) շուրջ՝

- S.1. Մշակութային ռեսուրսների կատարելագործում և օգտագործում
- S.2. Բարձրորակ և նորարարական փորձառական զբոսաշրջության արտադրանքի մշակում
- S.3. Կարողությունների զարգացում և աջակցություն ՓՄՁ-ներին փորձառական զբոսաշրջությանը անցում կատարելուն
- S.4. Փորձառական զբոսաշրջության զարգացման համար պետական և մասնավոր գործընկերության խթանում

Յուրաքանչյուր ռազմավարական գերակայություն մարմնավորում է հատուկ նպատակներ (Գծապատկերը՝ ստորև), որոնք մատնանշված են ռազմավարական բնույթի գործողությունների մեջ:



Ռազմավարական գերակայություն S.1. Մշակույթային ռեսուրսների կատարելագործում և օգտագործում

ՍԱԵ-Յ տարածաշրջանը շատ հայտնի է իր նյութական և ոչ նյութական ռեսուրսներով և կարող է դառնալ փորձառական զբոսաշրջության արժեքավոր ուղղություն: Տեղական մշակույթը պատկերացում է տալիս հունական, բալկանյան և միջերկրածովյան մշակույթների ազդեցության տակ գտնվող տարբեր գործելակերպերի մասին, ներառյալ որոշ հնագույն, բյուզանդական կամ օսմանյան անցյալից եկած գործելակերպեր: ՍԱԵ-Յ տարածաշրջանում համատեղվում են հզոր պատմությունն ու մեծ թվով տարբեր պատմական հուշարձանները, և այստեղ բնակվում են խորը մշակույթային ծագմամբ մարդիկ: Հաշվի առնելով հարուստ բնական ռեսուրսները՝ տարածաշրջանը կարող է կարևոր դեր ունենալ փորձառական զբոսաշրջության զարգացման գործում ինչպես երկրի ներսում, այնպես էլ ավելի լայն Սևծովյան ավազանի տարածքում: Բացահայտվել են երեք հիմնական նպատակներ, որոնք կարող են ծառայել ՍԱԵ-Յ շրջանների մշակույթային (և՛ նյութական և՛ ոչ նյութական) և բնական ռեսուրսների օգտագործման բարելավմանը, ինչպես նաև թվարկված են մի շարք հնարավոր գործողություններ և համապատասխան արդյունքներ:

Նպատակ S1.01. ՍԱԵ-Յ շրջանների ռեսուրսների բացահայտումը

Շրջանների ռեսուրսների մանրամասն բացահայտումը պետք է լինի այն հիմնական նպատակը, որի վերաբերյալ հետագայում կարող են մշակվել փորձառական զբոսաշրջության առաջարկներ: Կարևոր է նշել, որ չօգտագործվող ռեսուրսները հնարավոր չէ պահպանել: Այս նպատակի մեկ այլ թիրախ պետք է լինի տարածքում նյութական և ոչ նյութական ռեսուրսների մշակումը, որը թույլ կտա ռեսուրսների համադրմամբ տեղական և տեղեկացված արտադրանք առաջարկել, ինչը թույլ կտա մոբիլիզացնել մշակույթային, բնական և բնապահպանական ռեսուրսներն ընդհանրապես:



Գործողություններ	Հնարավոր վերջնարդյունքներ
<p>Առկա ռեսուրսների ֆարտեզագրում և դասակարգում (նյութական/ուչ նյութական, մշակութային/բնական, ֆաղաֆային/գյուղական և այլն) Տարածական ինքնությունների իլուստրացիա (տեսողության տախտակ) (ռեսուրսների, հնարավոր երթուղիների, վայրի բնույթը և արտաքին տեսքը կառուցող ռեսուրսների տեսակների տարածական կենտրոնացում) Տարբեր տեսակի ռեսուրսների ինտեգրում փորձառական զբոսաշրջության ռազմավարության մեջ</p>	<ul style="list-style-type: none"> - Պատկերացում ռեսուրսների առկայության և տեսակների մասին / ռեսուրսների պաշտպանություն - Տարածաշրջանային/տեղական տնտեսությունների և տեղական համայնքների հետ կապերի զարգացում - Տեղական ռեսուրսների մոբիլիզացիա՝ տարածաշրջանային և տեղական կայուն զարգացման համար

Նպատակ S1.O2. Ռեսուրսների տեսանելիության և գրավչության բարելավում

Ռեսուրսների տեսանելիության և գրավչության բարելավումը դեստինացիայի պրոֆիլի ստեղծման հիմնարար տարրն է, որը կխրախուսի այցելուներին ընտրել որոշակի տարածաշրջաններ:

Գործողություններ	Հնարավոր վերջնարդյունքներ
<p>Զբոսաշրջության դեստինացիաների մատչելիություն և տրանսպորտային ենթակառուցվածքներ Կարիք ունեցող ռեսուրսների վերականգնում / նորոգում / պաշտպանություն Այցելուների տեղեկատվական առցանց հարթակի ստեղծում՝ նորարարական մեթոդների կիրառմամբ բազմաթեմատիկ տեսանկյունից ռեսուրսների բաշխմամբ Հնագիտական վայրերի և թանգարանների խթանում և օգտագործում և ինտեգրված հնագիտական երթուղիների ստեղծում Գոյություն ունեցող տուրիստական արտադրանքի փոխկապակցում տեղական մշակութային գործողությունների փորձառության հետ</p>	<ul style="list-style-type: none"> - Ռեսուրսների և փորձառական արտադրանքի որակի և գրավչության կատարելագործում / մուտքի հատուկ կարիք ունեցող անձանց համար դրանց հասանելիության ընդլայնում - Ռեսուրսների տեսանելիության բարելավում / փորձառական զբոսաշրջության պահանջարկի բարձրացում - Տեղական մշակութային գործողությունների տեսանելիության ու մատչելիության բարելավում՝ օգտագործելով առկա զբոսաշրջության պահանջարկը



Նպատակ S1.O3. Ռեսուրսների կայուն օգտագործումը

Ռեսուրսների կայուն օգտագործումը կարևոր է շրջանների ռեսուրսների ինչպես ներկա, այնպես էլ ապագա պահպանման համար: Առավել կարևոր է հատկապես ոչ նյութական ռեսուրսների պահպանումը, քանի որ այդ ռեսուրսները պետք է օգտագործվեն (բեմադրվեն), որպեսզի պահպանվեն՝ ելնելով իրենց բնույթից: Այսպիսով, ի տարբերություն ընդունված տեսակետի, փորձառական զբոսաշրջությունը կարող է ավելի շատ օգնել դրանց պահպանման հարցում դրանք սպառելու փոխարեն: Այս ամենը պետք է լինի կայուն զարգացման մոտեցման քննարկման առարկա, որպեսզի տեղական պայմանները, համայնքները և սովորույթները հարգվեն, և այցեր կատարող զբոսաշրջիկների թիվը չզերագանցի տեղական վայրերի և համայնքների հոգատարության կարողությունը:

Գործողություններ	Հնարավոր վերջնարդյունքներ
<p>Փոքր / տեղական / ընտանեկան ընկերությունների ներուժի ընդլայնում</p> <p>Կայուն բնական ռեսուրսներից պատրաստված տեղական արտադրանքի օգտագործման խթանում</p> <p>Աջակցել և զարգացնել տեղական ռեսուրսների / արտադրանքի նորարարական օգտագործումը՝ տեղական գիտելիքի և պրակտիկայի կիրառմամբ Կլոր տարվա այցերի առաջարկների մշակում</p>	<ul style="list-style-type: none"> – Տարածել աճը՝ տեղական տնտեսությանը և հասարակությանը աջակցելու համար – Ապահովել շրջակա միջավայրի կայուն օգտագործումը – Պաշտպանել տեղական մշակույթը, գիտելիքն ու փորձը – Ամբողջ տարվա ընթացքում մատակարարել զբոսաշրջությանը, լուծել սեզոնայնության խնդիրը և պահպանել կայուն զարգացումը: – Ապահովել ռեսուրսների կայուն օգտագործումը
<p>Հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ-ներ) համակարգի մշակում ռեսուրսների կայուն կառավարումը վերահսկելու համար</p>	

Ռազմավարական գերակայություն 5.2. Բարձրորակ և նորարարական փորձառական զբոսաշրջության արտադրանքի մշակում

Զբոսաշրջության ոլորտում այսօրվա մարտահրավերներն ավելի ու ավելի են կապված բարձր որակի, կայունության և նորարարության հետ, որոնք դառնում են յուրօրինակ տուրիստական փորձառությունների ստեղծման կարևոր գործոնները: ՍԱԵ-Հ տարածաշրջանում փորձառական զբոսաշրջության արտադրանքը տարբեր բարձր տարրերի դինամիկ համադրություն է: Միևնույն ժամանակ, զբոսաշրջության ծառայության կամ արտադրանքի նորարարությունը, ըստ սահմանման, բազմաչափ է: Զբոսաշրջության արտադրանքի նորարարությունը հիմնականում մի գործընթաց է, որը ներառում է երկու բաղադրիչ՝



- ոչ տեխնոլոգիական, որը կախված է նյութական և ոչ նյութական մարդկային ռեսուրսներից, կազմակերպության կառուցվածքից և գործոններից, որոնք կարող են ավելացնել հաճախորդների ծառայության արժեքը (մարքեթինգ և այլն),
- տեխնոլոգիական, որը կախված է տեխնոլոգիաներից, հատկապես տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներից (S3S):

Նպատակ S2.01. ՍԱԵ-3 տարածաշրջանի զբոսաշրջության մոդելի վերակազմավորում

«Արև և ծով» մոդելի տեսանկյունից զբոսաշրջության զարգացման ավանդական մոտեցման պատասխանն ուղղված է դեստինացիայի գաղափարին՝ որպես գերակշռողից դուրս նոր ձևերով և ծառայություններով, ինչպես նաև գործող զբոսաշրջության արդյունքների որակի բարելավմանն ուղղված ռազմավարության կենտրոնական առանցքով կայունության և նորարարության միջոցով ինտեգրված փորձառություն: Չնայած զանգվածային զբոսաշրջությունը, կարծես, շարունակում է անվիճելիորեն կարևոր նշանակություն ունենալ Զուլնաստանում զբոսաշրջության արդյունաբերության զարգացման համար, ներկայիս տուրիստական պահանջարկը և մոդելը մեծ վերափոխման է ենթարկվում՝ փորձառությունը դարձնելով ճանապարհորդության կարևոր մաս՝ շրջակա միջավայրի այնպիսի բազմաչափ պարամետրերի, ինչպիսիք են մշակույթը, գաստրոնոմիան և ընդհանուր կայունությունը, ինտեգրման միջոցով: Մշակույթն ու տեղական ավանդույթները բնական ռեսուրսների և սպորտի հետ ինտեգրվելով՝ զբոսաշրջիկները զգում են, որ իրենք ընկղմված են տեղի կյանքի մեջ փորձառական ձևով և ստանում են դրական պատկեր այցելած դեստինացիայից: Շատ կարևոր է դիվերսիֆիկացնել զբոսաշրջության արտադրանքը՝ խթանելով սիներգիաներ զբոսաշրջության տարբեր ձևերի միջև՝ մշակութային, գաստրոնոմիական, սպորտային, կրոնական տուրիզմ, ագրոտուրիզմ, գյուղական տուրիզմ և այլն: Ամեն դեպքում, տեղական համայնքի բոլոր մասերի ակտիվացումը և մասնակցությունը շատ կարևոր է: Բացի այդ, զբոսաշրջության հատուկ ձևերի վրա շեշտը դնող ինտեգրված զբոսաշրջային փաթեթներ ստեղծելու ավելի լավ եղանակներից մեկը կլաստերների կամ ցանցերի խրախուսումն է: Ցանցերը կարող են աշխարհագրական կամ թեմատիկ հիմք ունենալ, ինչպես նաև ամրապնդել զբոսաշրջության արտադրանքի կայունության խնդիրները լուծելու ունակությունը:

Գործողություններ	Հնարավոր վերջնարդյունքներ
<p>Խրախուսել զբոսաշրջության տարբեր ձևերի ռազմավարությունների ինտեգրումը զբոսաշրջության մեջ</p> <p>Առկա զբոսաշրջության արտադրանքը փոխկապակցել տեղական արտադրության գործողությունների փորձառության հետ, հիմնականում առաջնային հատվածում</p>	<ul style="list-style-type: none"> – Ստեղծել զբոսաշրջության բազմաչափ փորձառություններ – Բարելավել փորձառական զբոսաշրջության արտադրանքի և ծառայությունների տեսականին – Մեղմել զբոսաշրջության սեզոնայնությունը
<p>Չբոսաշրջության ցանցերի (կլաստերների) ստեղծում և շահագործում</p>	





Նպատակ S2.O2. Չբնաշրջության ոլորտում փորձառական արտադրանքի որակի բարձրացում

Մտերմիկ, որակյալ և բազմազան զբոսաշրջության արտադրանք և փորձառություն ապահովելը լիարժեք, հաճելի և հիշարժան փորձառություն ստեղծելու կարևոր մասն է, որն ի վերջո ազդում է այցելուների բավարարվածության վրա և խրախուսում է կրկնվող այցելությունները: Ըստ սահմանման, զբոսաշրջությունը պահանջում է մարդկանց տեղաշարժը ՍԱԵ-Հ երկու շրջաններում և դրանց շրջակայքում: Երկաթուղով, ինքնաթիռով, լաստանավով, ավտոբուսով, հեծանիվով կամ մեքենայով ճանապարհորդությունը կարող է լինել զբոսաշրջիկների (և բնակիչների) փորձառության կարևորագույն մասը: Այսպիսով, տեղի բնակիչներին և ուղևորներին ուղղված ենթակառուցվածքների բարելավումը ճանապարհորդներին հնարավորություն է տալիս այցելել պակաս հայտնի տարածքներ և օգտագործել այլընտրանքային տրանսպորտային ձևեր: Տեղական և միջազգային ճանապարհորդներին աճող պահանջարկը բավարարելու համար տրանսպորտային ենթակառուցվածքը պետք է լինի հուսալի, անվտանգ և արդյունավետ: Չբոսաշրջության արտադրանքի նորարարական տեղեկատվական հարթակները և կայունության ցուցանիշների համակարգը կարևոր նշանակություն ունեն ինչպես հաճախորդների գոհունակությունը, այնպես էլ ծառայությունների որակը, կայուն կերպով բարելավելու համար: Կայունության տեսանկյունից կարևոր է ամրապնդել զբոսաշրջության արտադրանքի որակը և կարողությունները՝ արդիականացնելով զբոսաշրջության ընթացակարգերը և ներգրավելով դրանք որակի սերտիֆիկացման սխեմաների մեջ:

Գործողություններ

Հնարավոր վերջնարդյունքներ

<p>Բարելավել հասանելիությունը և ենթակառուցվածքները կանոնավոր և անվտանգ փոխադրումներով</p>	<ul style="list-style-type: none"> – Ամրապնդել փորձառական արտադրանքի որակը – Մեղմել զբոսաշրջության սեզոնայնությունը
<p>Ստեղծել այցելուների տեղեկատվական հարթակ, որը բարձրորակ տեղեկատվություն է տրամադրում և օգտագործում է նորարարական մեթոդներ</p>	
<p>Չբոսաշրջային ծառայությունների սերտիֆիկացման ընթացակարգերի և բնութագրերի արդիականացում</p>	
<p>Մշակել փորձառական արտադրանքի կայուն կառավարման ցուցանիշների համակարգ</p>	





Նպատակ S2.03. Մարբեթինգի և բրենդինգի գործելակերպերի ինտեգրում փորձառական արտադրանքի մեջ

Կարևոր է ստեղծել հարատև փորձառական ինքնություն և բարձրացնել ՍԱԵ-Յ տարածաշրջանի զբոսաշրջության փորձառությունների ներուժի վերաբերյալ տեղեկացվածությունը: Մարբեթինգի և բրենդինգի համակարգված ջանքերն անհրաժեշտ են մրցակցային առավելությունների կայունությունն ու ընդլայնումն այնպես ապահովելու համար, որ ՍԱԵ-Յ տարածաշրջանը տարբերվի այլ ազգային և միջազգային դեստինացիաներից: Փորձառական բրենդինգի և մարբեթինգի նպատակը ոչ միայն արտադրանքի վրա կենտրոնանալն է, այլ նաև նրա վրա, թե ինչ է ներկայացնում փորձառությունը հաճախորդի համար:

Գործողություններ	Հնարավոր վերջնարդյունքներ
Կիրառել ՍԱԵ-Յ տարածաշրջանին բնորոշ իսկական փորձառական ապրանքանիշ	– Ստեղծել ամուր փորձառական ինքնություն
Ընդլայնել մարբեթինգը թվային ալիքներով	– Տարբերակել ՍԱԵ-Յ տարածաշրջանը ազգային և միջազգային այլ դեստինացիաներից

Ռազմավարական գերակայություն S.3. Կարողությունների զարգացում և աջակցություն ՓՄՁ-ներին փորձառական զբոսաշրջությանը անցում կատարելուն

Չնայած փորձառական զբոսաշրջության նկատմամբ միջազգային ուշադրությունն աճում է, զբոսաշրջության ձեռնարկությունների միայն մի փոքր տոկոսն է փորձառական գործունեություն ծավալում ՍԱԵ-Յ տարածաշրջանում: Հետևաբար, այս ռազմավարական գերակայությունը նպատակ ունի զգալիորեն մեծացնել ՓՄՁ-ների քանակը, որոնք զբաղվում են փորձառական զբոսաշրջությանն առնչվող կայուն բիզնեսով՝ խրախուսելով համակարգված նորարարական նախաձեռնություններ:

Նպատակ S3.01. Բարձրացնել փորձառական զբոսաշրջության ձեռնարկությունների որակը

Փորձառական զբոսաշրջության ձեռնարկությունների որակը բարելավելու և կրկնակի այցելությունները խթանելու կարևոր գործոններն են բազմաբնույթ գործողությունների համադրությունը, որոնք հասանելի են տարատեսակ միջավայրերում, մտերմիկ և պրոֆեսիոնալ աշխատակիցները և տեղական և ազգային գործընկերների ցանցերը: Այս բոլոր տարրերը օգնում են բիզնեսին մատուցել փորձառական զբոսաշրջության բարձրորակ արտադրանք և դառնալ ավելի կայուն և մրցունակ համաշխարհային մասշտաբով: Չբոսաշրջության տարբեր փոքր ձեռնարկությունների միջև համագործակցության ցանցը կբարելավի նրանց կայունությունը համակարգված, համահունչ և շահավետ զբոսաշրջության արդյունաբերության մեջ հորիզոնական ինտեգրման միջոցով: Որակի և կայունության պոտենցիալ չափորոշիչներն օգնում են ընկերություններին աճել, խոշորանալ և լինել մրցունակ, դիմացկուն և կայուն: Չբոսաշրջային ձեռնարկություններին խրախուսելը կենտրոնանալ որոշակի խմբերի վրա, ինչպիսիք են տարեցները, նվազ շարժունակություն ունեցող մարդիկ և ցածր եկամուտ ունեցող ընտանիքները, ընդլայնում է զբոսաշրջության մատչելիությունը և լուծում սեզոնայնության խնդիրները: Մտերմիկ, բարձրորակ





ծառայությունը և անձնական հաճելի փոխհարաբերությունները շատ կարևոր են զբոսաշրջության բիզնեսի կամ դեստինացիայի հաջողության համար:

Գործողություններ	Հնարավոր վերջնարդյունքներ
Տեղական գյուղատնտեսական արտադրողների և հյուրանոցների և ռեստորանների միջև ցանցեր ստեղծել, որոնք կօգտագործվեն տեղական արտադրության որակյալ արտադրանքի համար	<ul style="list-style-type: none"> – Մեծացնել զբոսաշրջության ձեռնարկությունների հորիզոնական ինտեգրումից և զբոսաշրջության բիզնեսների համագործակցությունից ստացված օգուտները – Բարելավել ձեռնարկությունների որակը՝ կրկնվող այցելությունները խթանելու նպատակով – Ապահովել ուժեղ, կենսունակ, արդյունավետ և լավ կրթված զբոսաշրջային աշխատուժ – Բարելավել մատչելիությունը – Լուծել սեզոնայնության խնդիրները
Սահմանել նվազագույն չափանիշներ և խթանել զբոսաշրջության միայն այն ձեռնարկություններին, որոնք համապատասխանում են նվազագույն չափանիշներին	
Մշակել ուսուցման նորարարական ծրագրեր՝ աշխատուժի կրթությունն ու հմտությունները բարելավելու համար	
Խրախուսել զբոսաշրջության բիզնեսներին դառնալ ավելի մատչելի հատուկ սոցիալական խմբերի և հատուկ կարիքներ ունեցող անձանց համար	

Նպատակ S3.02. Խթանել ՓՄՁ-ներում նորարարության ներկայությունը և ամրապնդել դրանց կայունությունը

ՍԱԵ-Յ տարածաշրջանում փորձառական զբոսաշրջության մրցունակության բարելավումը կարևոր դեր է խաղում ոլորտի ամրապնդման գործում՝ դինամիկ և կայուն աճի տեսանկյունից: Չբոսաշրջության փոքր և միջին ձեռնարկությունների նորարարության խթանումը և կայունության չափերի ամրապնդումը կարևոր նշանակություն ունի: Նորարարությունն ու նոր տեղեկատվական տեխնոլոգիաները դարձել են զբոսաշրջության արդյունաբերության մրցունակության և դրան առնչվող այլ ոլորտների հետ փոխադարձ շփումների ամրապնդման որոշիչ գործոնները: Որպեսզի ՍԱԵ-Յ տարածաշրջանն ունենա նորարարական, ճկուն և համապարփակ զբոսաշրջային արդյունաբերություն, անհրաժեշտ է զբոսաշրջության բիզնեսում ընդլայնել նոր տեխնոլոգիաների և նոր լրատվամիջոցների օգտագործումը, ինչպես նաև թվայնացնել զբոսաշրջության ընթացակարգերը, որով հնարավոր կլինի այցելուների անհատականացված տեղեկատվությունը տրամադրել և երկխոսություններ խթանել: Չբոսաշրջության ձեռնարկությունների էկոլոգիապես կայուն աճը և շրջակա միջավայրի կառավարման բարձր չափանիշներին համապատասխանությունն ապահովելու համար կարևոր է զբոսաշրջության բիզնեսների համար կանաչ հավաստագրեր ստեղծել, որոնք համապատասխանեցված են



զբոսաշրջության գործողություններում բնապահպանական պատասխանատվության սահմանված չափանիշներին:

Գործողություններ	Չնարավոր վերջնարդյունքներ
Չբոսաշրջության ձեռնարկությունների ռեգիստրի արդիականացում	<ul style="list-style-type: none"> – Չբոսաշրջության արդյունաբերության մեջ նորարարությունների զարգացում – Բարելավել զբոսաշրջության ձեռնարկությունների կայունության և բնապահպանական կատարողականը
Չբոսաշրջության ձեռնարկությունների և ներդրողների սպասարկման ընթացակարգերի թվայնացում	
Ընդգրկել նոր տեխնոլոգիաներ և նոր լրատվամիջոցներ ՓՄՁ-ների փորձառական գործողությունների մեջ	
Չբոսաշրջության բիզնեսների համար սահմանել և զարգացնել կանաչ և նորարարական սերտիֆիկացման և/կամ պարզևատրման ծրագրեր	
Խորհրդատվական գործիքակազմ այն մասին, թե ինչպես կարող են զբոսաշրջության բիզնեսները բարելավել իրենց բնապահպանական կատարողականը	

Ռազմավարական գերակայություն S.4. Փորձառական զբոսաշրջության զարգացման համար պետական և մասնավոր գործընկերության խթանում

Չբոսաշրջությանը կայուն և նորարարական լուծումներ տալու անհրաժեշտությունը խթանում է մասնակցային կառավարման սխեմաների ձևավորումը: Գործընկերությունները կարող են ավելի արդյունավետ մոբիլիզացնել փորձառական զբոսաշրջության ռազմավարությունները, քանի որ դրանք գործում են որպես հարթակներ, որոնց վրա յուրաքանչյուր շահառու ներգրավվում է համակարգված բազմաշահառու գործընթացում և ռազմավարության իրականացման ծախսերն ու օգուտները բաժանելու շրջանակի մեջ:

Նպատակ S4.01. Փորձառական զբոսաշրջության կառավարում դեստինացիաների կառավարման կազմակերպության (ԴԿԿ) միջոցով

Դեստինացիաների կառավարման կազմակերպության (ԴԿԿ) ստեղծումը՝ որպես հանրային և մասնավոր գործընկերություն, կարող է լինել կենտրոնական տարր՝ համոզվելու համար, որ ճիշտ որոշումներ են ընդունվում կապված փորձառական զբոսաշրջության ռազմավարությունների մշակման, կառավարման և իրականացման հետ: Այդ նպատակով կարող են ձևավորվել շրջանային ԴԿԿ-ներ՝ տեղական խոշոր շահառուների մասնակցությամբ, որոնք կներառեն ծառայությունների (մշակութային տուրօպերատորների,

Common borders. Common solutions.



հյուրանոցների, սննդի ոլորտի և այլնի ներկայացուցիչներ) և բովանդակության մատակարարներ (մշակութային մարմինների ներկայացուցիչներ, ինչպիսիք են թանգարանները, վայրերը և տեղական մշակութային ասոցիացիաները): Շրջանային ԴԿԿ-ն գործելու է որպես տեղական շահառուների համագործակցության հարթակ՝ նրանց վերածելով զբոսաշրջության ռազմավարության գործընկերների: Այս խորհուրդներում շրջանային կառավարությունը պետք է համակարգող դեր ստանձնի՝ կապելով շրջանային և տեղական ռազմավարությունները ազգային նկատառումների հետ:

Գործողություններ	Հնարավոր վերջնարդյունքներ
<p>Հիմնադրել ԴԿԿ-ներ՝ որպես հանրային մասնավոր համագործակցության դրսևորում շրջանային մակարդակում հիթանել այլ հանրային մասնավոր գործընկերությունները՝ որպես հորիզոնական հարթակներ տեղի փորձառական զբոսաշրջության ռազմավարությունների իրականացման համար</p>	<ul style="list-style-type: none"> – Մոբիլիզացնել տեղական ինստիտուցիոնալ կապիտալը / մեծացնել փորձառական զբոսաշրջության կառավարման համագործակցությունը – Բաշխել փորձառական զբոսաշրջության ռազմավարությունների իրականացման ծախսերն ու օգուտները

Նպատակ S4.O2. Բրենդավորման և դեստինացիաների բրենդի ինքնության խթանում

Բրենդինգը կարելի է համարել շարունակական և, թերևս, անվերջանալի գործընթաց՝ փորձելով հասնել հավաքական գաղափարի, որն իսկապես ներկայացնում է այն մարդկանց շահերը, որոնք դա իրականացնում են: Այն պետք է հիմնված լինի անհատական շահերը ներկայացնող և յուրաքանչյուր անդամի գործունեությունը խթանող միասնական ինքնություն ստեղծելու գաղափարի վրա:

Գործողություններ	Հնարավոր վերջնարդյունքներ
<p>Ստեղծել ապրանքանիշի ինքնություն շրջանի դեստինացիաների համար և փորձառական ՍԱԵ-Յ-տարածաշրջանային ապրանքանիշ</p>	<ul style="list-style-type: none"> – Բարձրացնել դեստինացիաների տեսանելիությունը և փորձառական զբոսաշրջության հնարավորությունները – Համակարգված մարքեթինգային ջանքեր, որը կապահովի, որ մրցակցային առավելությունները պահպանվեն և ընդլայնվեն:
<p>Տեխնոլոգիայի օգտագործումը ՍԱԵ-Յ տարածաշրջանի ապրանքանիշը շուկայահանելու / խթանելու համար</p>	
<p>Գործարկել վեբ հարթակ՝ որպես վերջնական սպառողների / այցելուների մարքեթինգային գործիք՝ արտադրանքի, ռեսուրսների, այդ թվում՝ քարտեզների վերաբերյալ տեղեկատվությամբ:</p>	





Նպատակ S4.03. Տեղական շահառուների ցանցային համագործակցություն

Չբոսաշրջության արդյունաբերության համար ուժեղ թիրախներ ստեղծելու ներուժ ունեցող լայնածավալ և տևական նորամուծությունները պահանջում են մի շարք շահառուների ներգրավում, որոնք ժամանակի ընթացքում կարող են էական ներդրում ունենալ Չբոսաշրջության նոր արտադրանքի մեջ: Տեղական համագործակցությունը կարևոր է բավարար զանգված ստեղծելու համար, մինչդեռ համաշխարհային համագործակցությունը նպաստում է i) լրացուցիչ գիտելիքի և ռեսուրսների հասանելիությանը, ii) միջազգային շուկաներ մուտք գործելուն և ներթափանցելուն, iii) այցելուների համար Չբոսաշրջության գրավիչ արտադրանք առաջարկելուն: Բացի այդ, պետք է խրախուսել, որ նոր մասնակիցներ և հմտություններ ներգրավվեն նորարարական նախագծերում: Սա կներմուծի նոր գաղափարներ, տարբեր աշխարհայացքներ, լրացուցիչ գիտելիք և ռեսուրսներ, և այդպիսով կբարձրացնի խիստ նորարարական նորամուծությունների ստեղծման հնարավորությունը: Այս ամենի նպատակն է ընդլայնել ուսուցման և նորարարության գործընթացները Չբոսաշրջության արդյունաբերության նեղ սահմանված գործընթացներից դուրս և ավելացնել այլ համապատասխան հմտություններ, օրինակ՝ SS ոլորտի, նոր լրատվամիջոցների, մշակույթի և արվեստի, հնագիտության, ծովային կենսաբանության, բժշկության և այլ ոլորտների:

Գործողություններ	Չնարավոր վերջնարդյունքներ
<p>Տեղական տուրիստական ցանցերի (կլաստերների) ստեղծում և շահագործում</p> <p>Խրախուսել, որ նոր «խաղացողներ» և հմտություններ ներգրավվեն նորարարական նախագծերում:</p> <p>Չամատեղ բրենդինգի ստեղծում հատուկ թեմատիկ երթուղիների խթանման համար (օրինակ՝ գինու երթուղիներ, բալի երթուղիներ, գաստրոնոմիայի երթուղիներ և այլն)</p>	<ul style="list-style-type: none"> – Փորձառական Չբոսաշրջության ոլորտում ստեղծել տեղական Էկոհամակարգ – Բարելավել տեղական Էկոհամակարգի նորարարությունը – Բարելավել դեստինացիաների տեսանելիությունը

Նպատակ S4.04. Միջսահմանային համագործակցություն՝ փորձառական Չբոսաշրջության խթանման նպատակով

Միջսահմանային համագործակցությունը մասնավոր և պետական հատվածների, բիզնեսի և հետազոտության միջև, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներգրավումը խթանում են նորարարությունը ընդհանուր առմամբ Չբոսաշրջության մեջ՝ կամ որոշակի տարածաշրջանում, կամ որոշակի թեմատիկ ոլորտի հետ կապված: Սա էապես կնպաստի միջամտությունների ազդեցությանը և կայունությանը:



Գործողություններ

Հնարավոր վերջնարդյունքներ

<p>Մշակել երկկողմ համաձայնագրեր, որոնք կստեղծեն անհրաժեշտ սիներգիաներ միջսահմանային տարածաշրջանների համատեղ զարգացման համար: Կազմակերպել շահառուների ցանցային համագործակցության կանոնավոր միջոցառումներ</p>	<ul style="list-style-type: none"> – Ստեղծել անհրաժեշտ հարթակ, որը հնարավորություն կտա զարգացնել տնտեսական հարաբերությունները, ապահովել զբոսաշրջիկների հոսքը սահմաններից դուրս և առաջարկել համատեղ զբոսաշրջության արտադրանք – Բարելավել շահառուների միջսահմանային փոխգործակցությունը և առաջարկել կանոնավոր փոխգործակցության հարթակ
---	--

**Հնարավոր ֆինանսական ռեսուրսներ և շահառուներ
Ֆինանսական ռեսուրսներ**

Սույն տարածաշրջանային գործողությունների ծրագրում ներառված գործողությունների ֆինանսավորման երկու հիմնական ռեսուրսներն են՝ ա) 2021-2027թթ. Չարգացման շրջանակի նոր գործընկերության համաձայնագիրն ու 2021-27թթ. Տարածաշրջանային գործառնական ծրագրերը (ՏԳԾ-ներ) և բ) Հունաստանի վերականգնման և կայունության ծրագիրը: Չարգացման շրջանակի գործընկերության համաձայնագիրը համարվում է Հունաստանի աճի հիմնական ռազմավարական ծրագիրը՝ եվրոպական կառուցվածքային և ներդրումային ֆոնդերից բխող նշանակալի ռեսուրսների ներդրմամբ: Ներկայումս ԳՀ-ն վերջնական տեսքի չի բերվել: ՏԳԾ-ները շրջանային և տեղական մասշտաբի գործողությունների և միջամտությունների հիմնական ֆինանսական ծրագրերն են: Երկու շրջանների՝ Կենտրոնական Մակեդոնիայի և Արևելյան Մակեդոնիայի ու Թրակիայի ՏԳԾ-ները գտնվում են խորհրդատվության փուլում, և դրանց քաղաքականության տարբերակները դեռ չեն հրապարակվել: Հունաստանի վերականգնման և կայունության ծրագիրը բաղկացած է չորս հենասյուներից՝ Կանաչի վերափոխում, թվային վերափոխում, զբաղվածության, հմտությունների և սոցիալական համախմբում, մասնավոր ներդրումներ և տնտեսական և ինստիտուցիոնալ վերափոխում: Քննարկվող տարածաշրջանային գործողությունների ծրագրին վերաբերող քաղաքականության տարբերակները և գործողությունները նկարագրված են ստորև:

2021-2027թթ. Չարգացման շրջանակի գործընկերության համաձայնագիր

Քաղաքակ10անության նպատակներ	Քաղաքականության տարբերակներ
<p>ՔՆ 1 «Ավելի խելացի Եվրոպա՝ խթանելով նորարար և խելացի տնտեսական վերափոխում»</p>	<ul style="list-style-type: none"> • Աջակցություն ոչ տեխնոլոգիական նորարարությունների զարգացմանը / ընդունմանը (օրինակ՝ զբոսաշրջության և մշակույթի ոլորտում), նորարարական ձեռնարկատիրությանն աջակցելու մեխանիզմների ստեղծում (Նորարարության գործակալություն),

- Աջակցություն զբոսաշրջության ոլորտին թվային տեխնոլոգիայի միջոցով ստեղծված նոր պայմաններում,
- ՓՄՁ-ների (օրինակ՝ կլաստերների) և / կամ ավելի մեծ ընկերությունների միջև գործընկերային հարաբերությունների խրախուսում՝ համաշխարհային շուկաներ և արժեքային շղթաներ մուտք գործելը մատչելի դարձնելու համար (միջազգայնացում):

ՔՆ 5 «Իր քաղաքացիներին ավելի մոտ եվրոպա՝ խթանելով քաղաքային, գյուղական և ափամերձ տարածքների կայուն և ինտեգրված զարգացումը և աջակցելով տեղական նախաձեռնություններին»

- Քաղաքային կայուն զարգացման ինտեգրված ռազմավարություն
- Առափնյա, գյուղական, կղզիների, լեռնային տարածքների զարգացման ինտեգրված ռազմավարություն՝ ա) միջամտություններ, որոնք նպաստում են կայուն զարգացմանը, մատչելիությանը և մշակութային ժառանգության խթանմանը, բ) միջամտություն տարածական և թեմատիկ հարատևություն ցուցաբերող տարածքներում՝ տեղական հատկանիշների օգտագործման հնարավորությամբ, ինչպիսիք են մշակութային և զբոսաշրջային գործունեությունը
- Ինտեգրված տարածական ռազմավարությունը կիրականացվի՝ օգտագործելով տարածական գործիքներ՝ Ինտեգրված տարածքային ներդրումներ (ԻՏՆ) և Տեղական զարգացում տեղական նախաձեռնող համայնքների հետ (TAPTOK):

Հունաստանի վերականգնման և կայունության ծրագիր

Առանցք	Գործողություններ
<p>Առանցք 1.4 «Ռեսուրսների կայուն օգտագործում, դիմացկունություն կլիմայի փոփոխության և կենսաբազմազանության պահպանման հանդեպ» (Հենասյուն 1)</p>	<ul style="list-style-type: none"> • Նպաստել Հունաստանի տնտեսության և հասարակության բարգավաճմանը / բարեկեցությանը և դիմացկունությանը: • Շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պահպանությանն առնչվող ենթակառուցվածքների կատարելագործում: • Ակնկալվում է, որ առաջարկվող ներդրումները զգալի թվով նոր աշխատատեղեր կստեղծեն և կխթանեն կայուն զարգացումը գյուղական վայրերում, ի թիվս այլոց, Էկոտուրիզմի խթանման միջոցով:
<p>Առանցք 2.2 «Պետության թվային վերափոխում» և Առանցք 2.3 «Թվային բիզնեսի վերափոխում»</p>	<ul style="list-style-type: none"> • Հիմնական ոլորտների թվայնացում, ինչպիսիք են զբոսաշրջությունը և մշակույթը: • Բարձրացնել ընկերությունների կողմից թվային տեխնոլոգիաների ընդունումը՝ նվազեցնելով Հունաստանի և Եվրոպայի ՓՄՁ-ների միջև թվային անջրպետը:



Առանցք 4.6 «Երկրի հիմնական տնտեսական հատվածների արդիականացում և դիմացկունության բարելավում» (Հենասյուն 4)

- Բարելավել հիմնական տնտեսական հատվածների մրցունակությունը, արտադրողականությունն ու դիմացկունությունը, որոնցում Հունաստանը մրցակցային առավելություն ունի և որոնց վրա համամասնորեն ազդել է համաճարակը, ինչպիսիք են զբոսաշրջությունն ու մշակույթը:
- Մշակույթի և զբոսաշրջության և «արժարժեք» զբոսաշրջության միջև կապերի խթանում
- Չբոսաշրջության թեմատիկ և այլընտրանքային ձևերի խթանումը, ինչպիսիք են լեռնային, կրոնական և ծովային տուրիզմը, կնպաստի Հունաստանի զբոսաշրջության դիվերսիֆիկացմանը, սեզոնայնության նվազեցմանը և եկամուտների ավելացմանը:

Հիմնական շահառուները

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է զբոսաշրջության և մշակութային ժառանգության ավելի լայն ոլորտներում ներգրավված շահառուներին: Դրանք ներկայացված են ըստ պատկանելության մակարդակի (ազգային, շրջանային, տեղական) և սեփականության կարգավիճակի (պետական, մասնավոր):

	Պետական	Մասնավոր
Ազգային մակարդակ	<ul style="list-style-type: none"> • Չբոսաշրջության ազգային կազմակերպություն (EOT) • Չբոսաշրջության նախարարություն • Մշակույթի նախարարություն • Հունական բանահյուսության հետազոտությունների կենտրոն, Աթենքի ակադեմիա 	<ul style="list-style-type: none"> • Հունաստանի հյուրանոցատերերի ֆեդերացիա • Հունաստանի հյուրանոցների պալատ / Չբոսաշրջության հետազոտական ինստիտուտ • Հունաստանի զբոսաշրջության համադաշնություն (SETE) • Հասարակական կազմակերպություններ, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում մշակութային ժառանգության պահպանման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում • Հունաստանի ագրոտուրիզմի ասոցիացիա • Հունաստանի տուրիստական և ճանապարհորդական գործակալությունների ասոցիացիա



Շրջանային մակարդակ

- Կենտրոնական Մակեդոնիայի շրջանի Չբոսաշրջության վարչություն
- Արևելյան Մակեդոնիայի և Թրակիայի շրջանի Չբոսաշրջության վարչություն
- Մակեդոնիայի ժողովրդական և էթնոլոգիական թանգարան - Թրակիա
- Հնությունների տեղական էֆորատներ
- Մարզային շրջանների զբոսաշրջության գրասենյակներ

- Մակեդոնիայի հետազոտությունների ընկերություն

Տեղական մակարդակ

- Տեղական համայնքապետարաններ
- Հնությունների, բյուզանդական հնությունների և ժամանակակից հուշարձանների տեղական էֆորատներ
- Տեղական հնագիտական և տեղական այլ թեմատիկ թանգարաններ (ներառյալ քաղաքային թանգարանները, ազգագրական, ժողովրդի կյանքը պատկերող թանգարանները և այլն)
- Պաշտպանված տարածքների կառավարման մարմիններ
- Տեղական իշխանությունների զբոսաշրջության գրասենյակներ
- Մշակույթի տեղական կենտրոններ
- Տեղական համալսարաններ և կրթական այլ հաստատություններ
- Տեղական տուրիստական գրասենյակներ

- Տեղական մշակութային ասոցիացիաներ
- Չբոսաշրջության ոլորտում ակտիվ մասնավոր ձեռնարկություններ, որոնք առնչվում են`
 - Գիշերակացին
 - Փորձառությանը
 - Հեծանվային տուրերին
 - Թեմատիկ տուրերին և առհասարակ տուրօպերատորներին
 - Ռեստորաններին / գաստրոնոմիային
- Տեղական հասարակական կազմակերպություններ, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում մշակութային ժառանգության պահպանման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում
- Տեղական բիզնեսի աջակցման կազմակերպություններ
- Տեղական փառատոների կազմակերպիչ մարմիններ



ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ՝ ՍԵՎԾՈՎՅԱԼ ԱՎԱԶԱՆԻ ԵՐԿՐՆԵՐ

Ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջությունը ՍԱԵ տարածաշրջանում:

ՍԱԵ տարածաշրջանը հայտնի է իր ուշագրավ մշակութային և պատմական ժառանգությամբ, որը զուգորդվում է էթնիկ բազմազանության հետ, և առանձնահատուկ աշխարհայացքներ, ծեսեր և ավանդույթներ ունեցող իր եզակի համայնքներով (ENI CBC Black Sea Basin Programme 2014-2020, 2020): Այս հարստությունը, զուգորդված գեղեցիկ լանդշաֆտների և մեղմ, հաճելի եղանակի հետ, զբոսաշրջային գործունեության բազմաթիվ հնարավորություններ է ընձեռում և տարածաշրջանը դարձնում աշխարհի լավագույն զբոսաշրջային դեստինացիաներից մեկը:

Ինչպես ցույց է տալիս կարիքների գնահատման զեկույցը, զբոսաշրջությունն ու հյուրընկալությունը ՍԱԵ երկրների մեծ մասի համար առանցքային ոլորտներ են, որոնք նպաստում են նրանց տնտեսական բարգավաճմանն ու զբաղվածությանը: Չբոսաշրջության արդյունաբերությունը 2019 թ.-ին ՍԱ-ի 12 երկրներում (ներառյալ՝ Հայաստանը, Ադրբեջանը, Բուլղարիան, Վրաստանը, Մոլդովան, Ռումինիան, Ռուսաստանի Դաշնությունը, Ուկրաինան, Ալբանիան, Հունաստանը, Սերբիան և Թուրքիան) կազմել է 78,39 մլն ԱՄՆ դոլար, կամ Եվրոպայի մուտքերի 13,6%-ը (UNWTO, 2020) և գրանցել է կայուն աճ վերջին տարիներին (UNWTO, 2018): Ցավոք, 2020 թվականը տարածաշրջանի համար բազմաթիվ մարտահրավերներ բերեց: Ժամանողների թիվը կտրուկ ընկավ (Եվրոպայի համար գրանցվեց 70% անկում, իսկ ամբողջ աշխարհում՝ 74% անկում), և ոլորտը դեռ դիմակայում է ճանապարհորդության սահմանափակումներին և սահմանափակ շարժունակության դժվարություններին (UNWTO, 2021): Բնականաբար, ՍԱԵ տարածաշրջանի ուշադրության կենտրոնում որոշակիորեն կլինեն Covid-19-ի համաճարակի հետևանքների վերականգնման չափումները: Որոշումներ կայացնողների օրակարգի մյուս կարևոր նպատակներն են կայունության հասնելը և տարածաշրջանային զարգացումը:

Փորձառական զբոսաշրջությունը՝ որպես նորարարական, ներառական և Էկոլոգիապես անվնաս հայեցակարգ, բնականաբար համընկնում է ՍԱԵ զբոսաշրջության քաղաքականության ռազմավարական ուղիների հետ: Այն հնարավորություն է տալիս ստեղծել նոր տեսակի առաջարկների և տարածաշրջանը տեղակայել զբոսաշրջության շուկայում: Փորձառական զբոսաշրջությունը միջազգային այցելուներին ստիպում է վերագտնել նոր ռեսուրսներ և մշակութային գանձեր, որոնք քիչ հայտնի են աշխարհում: Այն ունի զբոսաշրջիկներին և հյուրընկալող համայնքներին մի շարք օգուտներ բերելու ներուժ և ապահովում է տարածաշրջանի տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրի կայունությունը:

Ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջությունը (ՄԺՅՓԶ) գտնվում է հայեցակարգի ձևավորման և ՍԱԵ տարածաշրջանում, ինչպես նաև համաշխարհային մասշտաբով ներդրման սկզբնական փուլում: Ուստի այն չի նշվում որպես առանձնահատուկ թեմատիկ ուղղություն ԵՄ քաղաքականության մշակման մեջ կամ ազգային իշխանությունների օրակարգում: Ոլորտի զարգացման մարտահրավերներից է նաև Եվրոպական երկրների համար զբոսաշրջության կայուն և համահունչ քաղաքականության բացակայությունը, քանի որ ՍԱԵ յուրաքանչյուր պետություն ունի տարբեր կանոնակարգ:

Common borders. Common solutions.





Այնուամենայնիվ, օպերատորներին հասանելի են մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգության պահպանման, պաշտպանության և խթանման տարբեր խրախուսական գործիքներ: Ավելին, ԵՄ-ն և զարգացման ազգային ծրագրերը ողջունում են բիզնեսի և ծառայությունների նորարարությունները և զգալի ֆինանսավորում են հատկացնում, որը կարող է օգտագործվել նաև ՄԺՀՓԶ կարիքների համար:

ՍԱԵ տարածաշրջանում ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության ՈւԻՅՎ վերլուծություն

Ուժեղ կողմեր

ՍԱԵ տարածաշրջանում փորձառական զբոսաշրջությունը զարգացման մեծ ներուժ ունի հետևյալ գործոնների շնորհիվ՝

- ՍԱԵ-ն հանգստի խոշոր դեստինացիա է՝ զբոսաշրջային շուկայում ամուր ապրանքանշային դիրքով, որը հարմար է այցելությունների և գործողությունների համար ամբողջ տարվա ընթացքում:
- Պատմական և հնագիտական բազում վայրերը և արտեֆակտերը, հսկայական և բազմազան մշակութային ռեսուրսները: Բազմազան ոչ նյութական էթնիկ ժառանգությունը, ինչպիսիք են բանահյուսությունը, խոհանոցը, ծեսերն ու ավանդույթները և այլն:
- Աշխարհի խոշոր ժառանգության գանձերի զգալի մասը գտնվում է այս տարածաշրջանում (UNESCO, 1992-2021) (ՍԱԵ երկրների 75 մշակութային վայրեր ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի ժառանգության ցանկում (դրանցից 19-ը իրավասու տարածքում են)):
- Զօգտագործված ստորջրյա հնագիտական ժառանգությունը (HERAS, 2014) (156 ստորջրյա վայրեր) (ENI CBC Black Sea Basin Programme 2014-2020, 2020): Ստորջրյա թանգարանների կառուցման ներուժը, ինչպես օրինակ Էնեզում (Թուրքիա) (TESIM, 2018):
- Մշակութային ժառանգության վրա կենտրոնացված զբոսաշրջային երթուղիները արդեն մշակված են ՍԱԵ երկրների մեծ մասում (Ադրբեջան, Ղազախստան, Բուլղարիա, Վրաստան, Ռումինիա և Թուրքիա) (Aliyeva & Rzayeva, 2020):
- Հարուստ մշակութային օրացույցը: Երկրների մեծ մասը կազմակերպում է առաջատար փառատոններ և մշակութային միջոցառումներ (օրինակ՝ DescOpera-ն (USAID, 2018)):
- Գների և ծառայությունների որակի գերազանց հարաբերակցությունը, բարձր գնային մրցունակությունը:
- Զբոսաշրջությունը կարևոր ոլորտ է ՍԱԵ երկրների մեծ մասի տնտեսությունների համար: Սևծովյան տարածաշրջանն ունի հյուրընկալության և ծառայությունների ավանդույթներ:
- Կլիմայական բարենպաստ պայմանները (մեղմ եղանակ ցածր ջերմաստիճանային ամպլիտուդներով), բնական աղետների ցածր հավանականությունը:



- Փոփոխական ռեյիեֆը և գեղեցիկ տեսարանները, որոնք նպաստում են հարուստ և բազմազան զբոսաշրջային արտադրանքին և զվարճալի տարբեր միջոցառումներ համատեղելու հնարավորությանը:
- ՍԱԵ տարածաշրջանի ռազմավարական աշխարհագրական դիրքը՝ երկու մայրցամաքների և հիմնական տրանսպորտային ուղիների խաչմերուկում: Մոտիկություն և հարմարավետ մուտք արտադրող շուկաների մեծ մասի համար:
- Մարզը մասնագիտացված է զբոսաշրջության առաջարկների ոլորտում: Այն ժամանակի ընթացքում կառուցել է զբոսաշրջության զգալի վերնաշենքեր (հյուրանոցներ, ռեստորաններ, տուրիստական տեղեկատվական կենտրոններ, պատկերասրահներ, թանգարաններ և այլ տեսարժան վայրեր): Երկրների մեծ մասն ունի լավ զարգացած օդային տրանսպորտի և երկաթուղային համակարգ:
- Ստամբուլի օդանավակայանը շատ հարմար դիրք ունի որպես գլոբալ տրանսպորտային հանգույց, որը կապակցող թռիչքներ է ապահովում համարյա թե աշխարհի ցանկացած ուղղությամբ:
- Չբոսաշրջությունը որպես ոլորտ լրջորեն աջակցվում է կառավարության կողմից ՍԱ երկրների մեծ մասում (Akova & Baynazoğlu, 2012): Փորձառական զբոսաշրջության ոլորտում ձեռնարկատիրության ֆինանսավորման բազմաթիվ տարբերակներ կան, այդ թվում՝ ԵՄ միջոցները և զբոսաշրջության զարգացման ծրագրերը, որոնք նախաձեռնել են զբոսաշրջության ազգային իշխանությունները:
- Հատուկ զբոսաշրջությունը (ներառյալ մշակութային զբոսաշրջությունը) ՍԱԵ երկրների զբոսաշրջային քաղաքականության գերակայություններից է (օրինակ՝ Մոլդովայում (Ecological Counseling Center Cahul, 2012), Բուլղարիայում, Ռումինիայում, Ադրբեջանում (Anon., 2016):
- Բավարար տեխնոլոգիական առաջխաղացման մակարդակը, ներառյալ ինտերնետի տրամադրումը և առցանց առևտուրը ՍԱ երկրների մեծ մասում (Adrian, 2017):
- Շահավետ աշխատաշուկան և ոլորտում բարձր աշխատունակության լավ հեռանկարները: Օրինակ, Թուրքիան հայտնում է, որ երիտասարդների բարձր տոկոս է ուղղորդվելու դեպի այս ոլորտ (Ozdemir & Demirel, 2018):

Թույլ կողմեր

ՍԱԵ տարածաշրջանում փորձառական զբոսաշրջություն զարգացման առաջ ծառայած հիմնական մարտահրավերները հետևյալն են՝

- «Փորձառական» կամ «ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջություն» հայեցակարգի ընդհանուր ընկալման բացակայություն
- Չբոսաշրջության պլանավորման և ՄԺՖՓՉ հետագա զարգացման ռազմավարական ճանապարհային քարտեզների բացակայություն կամ պակաս
- Արդյունավետ մարքեթինգային քաղաքականության բացակայություն (Մոլդովայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Ադրբեջանի և Ուկրաինայի դեպքում)



- Մեծ ուշադրություն ծովային հանգստի զբոսաշրջության վրա (օրինակներ՝ Թուրքիա և Բուլղարիա), ինչը խոչընդոտում է զբոսաշրջության այլընտրանքային ձևերի (ներառյալ ՄՃՅՓՉ) զարգացումը:
- Տարածաշրջանը կարող է ասոսացվել Եժան և ցածրորակ զբոսաշրջային դեստինացիայի ոչ շահավետ իմիջի հետ: Երկրներից մի քանիսը կրում են հետկոմունիստական (Ուկրաինա, Բուլղարիա, Մոլդովա) կամ հետպատերազմյան բեռը (Ուկրաինա, Սերբիա, Չայաստան) կամ առողջական ռիսկի հետ կապված մտահոգություններ են առաջացնում հնարավոր բարձր ռադիոակտիվության մակարդակի պատճառով (Ուկրաինա) (Karabaza, et al., 2020)
- Չբոսաշրջության և հյուրընկալության ոլորտներում ստվերային տնտեսության մեծ բաժնեմասն ու
- Ահազնալի կոռուպցիան որոշում կայացնող մարմինների շրջանում (Ozdemir & Demirel, 2018) որոնք խաթարում են առաջարկի որակը
- Թերի զարգացած ծառայությունների ոլորտը այնպիսի երկրներում ինչպիսիք են Մոլդովան, Ուկրաինան, Ալբանիան, Ռումինիան (Muresan & Popa, 2019)
- Չյուրընկալության հմուտ աշխատակիցների պակաս (Ռումինիայի և Բուլղարիայի պարագայում խնդիրը դեռևս առկա է):
- Ենթակառուցվածքային թերություններ: Դեպի որոշ ավելի քիչ հայտնի զբոսաշրջային վայրեր տանող բարձրորակ ճանապարհներ չկան (Բուլղարիա, Ռումինիա, Մոլդովա, Ուկրաինա)
- Որոշ երկրներ, ինչպիսիք են Ռումինիան և Մոլդովան, հայտնում են զբոսաշրջության ոլորտում ցածր ներդրումների մասին (Adrian, 2017)
- Անբավարար ինստիտուցիոնալ կարողություն, պետական և հասարակական կառույցների բացակայություն, ներառյալ տեղական, տարածաշրջանային կամ ազգային իշխանությունները ՄՃՅ զբոսաշրջության ոլորտում
- Ծառայությունների մատակարարների, իշխանությունների, տեղական համայնքների և այլ շահառուների միջև արդյունավետ փոխգործակցության բացակայություն ՄՃՅՓՉ բարեհաջող զարգացման ուղղությամբ համատեղ գործողությունների համար
- Մշակութային և ժառանգության վրա հիմնված ռեսուրսների թվայնացման ցածր մակարդակ
- ՄՃՅՓՉ կրթությունը պահանջում է բազմամասնագիտական մոտեցում՝ զուգորդված ծառայությունների հմտությունների հետ, որոնք կարող են խնդիր լինել ՍԱ-ի երկրների մեծ մասում: Ավելին, հյուրընկալության և զբոսաշրջության առկա դասընթացները չեն կենտրոնանում գործնական կողմի վրա (Բուլղարիայի, Ռումինիայի, Չայաստանի դեպքում):
- ՍԱ երկրների մեծ մասում զբոսաշրջության առաջարկի սեզոնայնությունը
- Գիտելիքների անարդյունավետ փոխանցում բիզնեսի նորարարություններին և գործնական լուծումներին
- Մուտքի արտոնագրերի սահմանափակումներ, որոնք սահմանափակում են ներտարածաշրջանային պահանջարկի աճը (հիմնականում գործում է ոչ ԵՄ անդամ երկրների համար)
- Կախվածության բարձր մակարդակ միջազգային խոշոր տուրօպերատորներից, որոնք ճնշում են տեղական բիզնեսը և հանգեցնում ֆինանսական արտահոսքի, (տուրիզմի եկամուտները օգուտ չեն տալիս տեղական տնտեսություններին)



- ՄԺՀՓՁ և ընդհանրապես զբոսաշրջության ոլորտի վերաբերյալ հոսսայի և արդի տեղեկատվության և վիճակագրական տվյալների պակաս:

Հնարավորություններ

- ՍԱ երկրների միջսահմանային համագործակցություն՝ ընդհանուր մշակութային ժառանգության զբոսաշրջային երթուղիներ և արտադրանք ստեղծելու համար
- Ընդհանուր տարածաշրջանային ապրանքանիշի ռազմավարություն և համատեղ մարքեթինգային ջանքեր: ՍԱԵ-ն որպես տարբերակիչ և ճանաչելի դեստինացիա խթանելու նպատակով տարածաշրջանային ՄԺՀՓՁ դաշինք ստեղծելու հնարավորություն
- Հանրային հետաքրքրության բարձրացում և մշակութային ժառանգության պահեստների առցանց ռեսուրսների հասանելիության ոլորտինացում:
- Չբոսաշրջության նոր միտումներ, որոնք կենտրոնացած են փորձի հարստացման, եզակի և իմաստալից փորձառության, տեղական համայնքների հետ փոխգործակցության և կայուն սպառման վրա
- Ներտարածաշրջանային պահանջարկի բարձրացում՝ Covid-19-ի համաճարակի պատճառով հրահրված միջազգային ուղևորությունների նվազման արդյունքում
- Բաժնետիրական տնտեսության աճ, ինչը հնարավորություն է տալիս ավելի փոքր, մասնավոր գիշերակացի և այլ ծառայությունների մատակարարներին մոտք գործել շուկա
- Տարածաշրջանային և միջազգային ներդրումներ ՄԺՀՓՁ հետ առնչվող բիզնես գործունեության մեջ
- Տեխնոլոգիական առաջխաղացումը հնարավորություն է տալիս ստեղծել նոր ինտերակտիվ, վիրտուալ և թվային արտադրանք, բարձրացնել առցանց մարքեթինգի և վաճառքի արդյունավետությունը
- Սոցիալական ձեռնարկատիրության և համայնքների ներգրավման նախաձեռնությունների, այդ թվում՝ ՄԺՀՓՁ հետ կապված նախաձեռնությունների հանրայնացում
- Արտերկրում գոյություն ունեցող մեծ սփյուռք, որն ամուր կապեր ունի հայրենիքի հետ (Հայաստան, Հունաստան, Բուլղարիա, Թուրքիա): Այցելության դրդապատճառ կարող է լինել ընկերներին և հարազատներին այցելելը, «արմատներին վերադառնալը» և կարոտը
- Եվրամիության հնարավոր ընդլայնումը՝ ներառելով այնպիսի երկրներ, ինչպիսիք են Թուրքիան, Սերբիան և Ալբանիան (European Commission, 2021), ինչը կհանգեցնի արտոնագրերի սահմանափակման մեղմացմանը և ճանապարհորդության ավելի մեծ շարժունակությանը
- Հնարավոր անդամակցություն միջազգային ՄԺՀՓՁ կազմակերպությանը

Վտանգներ (Սպառնալիքներ)

- Covid-19-ի համաճարակը՝ որպես համընդհանուր սպառնալիք և՛ հյուրընկալող բնակչության և՛ տարածաշրջան այցելողների առողջության և անվտանգության համար

- Սահմանափակ միջազգային շարժունակությունը, որի պատճառներից են Covid-19-ի համաճարակը, ճանապարհորդության կոշտ սահմանափակումները և այցի համար լրացուցիչ անկանխատեսելի միջոցներ սահմանելը, ինչպիսիք են ՊՇՌ պարտադիր թեստավորումը, կարանտինները և պատվաստումները
- Սպասվող համաշխարհային տնտեսական ճգնաժամերը
- Չքոսաշրջության համաշխարհային պահանջարկի աննախադեպ նվազումը (2020 թ.-ին աշխարհի մակարդակով 74% միջին ցուցանիշով) (UNTWO, 2021), որի պատճառով ոլորտում ի հայտ են եկել գործազրկություն, զբաղվածության ցածր մակարդակ, ցածր եկամուտներ, հնարավոր սնանկություններ, ինչպես նաև իջել է արդյունաբերության պահանջվածությունը որպես երիտասարդության համար կարիերայի ընտրություն:
- Եվրոպական մակարդակի ռազմավարական փաստաթղթերում ՄԺՅՓԶ-ը որպես թեմատիկ նպատակ ներկայացնելու բացակայություն:
- Կլիմայական փոփոխությունները, որոնք կապված են ավելի հաճախակի բնական աղետների և խստաշունչ եղանակի հետ
- Շրջակա միջավայրի աղտոտումը, գլոբալ տաքացումը, ջրերի և ջրուղրտի աղտոտումը, որոնք սպառնում են ՍԱԵ բուսական և կենդանական աշխարհների ոչնչացմանը
- Քաղաքական և տնտեսական անկայունությունը, այդ թվում՝ տարածաշրջանային հակամարտությունների և լարվածության առկայությունը
- Ուժեղ մրցակցությունը մերձավոր Միջերկրածովյան երկրների և Հարավային Եվրոպայի և Հյուսիսային Աֆրիկայի այլ երկրների հետ
- Չքոսաշրջության զարգացումը սպառնում է Էկոլոգիապես փխրուն գոտիներում գտնվող բնական միջավայրին: Այս խնդիրն առկա է ՍԱ-ի երկրների մեծ մասում, այդ թվում՝ Թուրքիայում, Բուլղարիայում, Ռումինիայում և Հունաստանում
- Այցելուների ընկալումների, նախասիրությունների, կարիքների, ճաշակի և գնման վարքագծի փոփոխությունները, որոնք դժվար է կանխատեսել
- Հմուտ աշխատուժի միգրացիան դեպի ԵՄ արևմտյան երկրներ
- Ահաբեկչության սպառնալիքը և զբոսաշրջության ոլորտի զգայունությունը
- Չքոսաշրջության արտադրանքի և ծառայությունների հարկումը (ինչպիսիք են ԱԱՀ-ն, վաճառքի հարկը, բնակության հարկը, ավիոհովի ակցիզային հարկը և այլն), որը կարող է վնասել տարածաշրջանային տուրիստական առաջարկների գների մրցունակությանը
- Մշակութային և էթնիկ ռեսուրսների առևտրայնացումը և վավերականության կորուստը: Ժառանգությունն ընկալվում է որպես վաճառքի ապրանք և փոփոխվում է, որպեսզի համապատասխանի զբոսաշրջիկների կարիքներին և սպասելիքներին: Վատագույն դեպքում տեղի կունենա ազգային մշակութային ինքնության կորուստ:
- Տեղական համայնքները կարող են թշնամաբար վերաբերվել այցելուներին: Մշակութային բախումներ կարող են առաջանալ հյուրընկալող բնակչության և զբոսաշրջիկների միջև նկատելի մշակութային տարբերությունների դեպքում:



Ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության զարգացման և աճի հնարավոր ռազմավարական գործողությունները ՍԱԵ տարածաշրջանում

Կարիքների գնահատման զեկույցում ներկայացված և վերը բերված ՈԻԹՅՎ բաժնում ամփոփված վերլուծությունը բացահայտում է Սևծովյան ավազանի երկրների ընդհանուր մարտահրավերներն ու խնդիրները՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, օրենսդրական, տեխնոլոգիական և բնապահպանական տեսանկյունից, ինչպես նաև ՍԱ երկրների առկա միտումներն ու գերակայությունները (ENI CBC Black Sea Basin Programme 2014-2020, 2020), որոնք են՝

- ✓ հետճգնաժամային վերականգնումը,
- ✓ կայունության վրա կենտրոնանալը,
- ✓ կապույտ տնտեսությունը,
- ✓ խելացի նորարարությունները և թվայնացումը,
- ✓ կլիմայի գլոբալ փոփոխությունը

Հաշվի առնելով ռազմավարական ավելի լայն շրջանակը և համապատասխան քաղաքականության համատեքստը, ինչպիսիք են՝

- ✓ Եվրոպա 2020՝ խելացի, կայուն և ներառական աճի եվրոպական ռազմավարությունը
- ✓ Եվրոպական տարածքային համագործակցության ռազմավարությունը և միջսահմանային համագործակցության դերը
- ✓ Արևելյան գործընկերության նախաձեռնությունները
- ✓ Կապույտ աճի ռազմավարությունը
- ✓ Սևծովյան տնտեսական համագործակցությունը
- ✓ Դանուբի շրջանի ԵՄ ռազմավարությունը

ստորև կազմված է Սևծովյան ավազանի երկրներում ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության զարգացման գործողությունների ծրագրի առաջարկը:



Աղյուսակ 1: ՍԱԵ տարածաշրջանում ՄԺՅՓՉ կայուն աճի խթանմանն ուղղված ցուցիչ քաղաքականության գործողությունների և միջամտությունների ճանապարհային քարտեզ:

No	Ռազմավարական գործողություն	Ռազմավարական գործողության նպատակը/ները	Ռազմավարական գործողության հնարավոր վերջնարդյունքները	Հնարավոր պատասխանատու շահառու/ները
Տարածաշրջանային մակարդակում				
1.	Համատեղ ջանքեր ՄԺՅՓՉ կայուն զարգացման համար	<ul style="list-style-type: none"> ➢ ՄԺՅՓՉ համար տարածաշրջանային քաղաքականության մշակում ➢ Կապի և տարածաշրջանային համագործակցության բարելավում ➢ ՄԺՅՓՉ արտադրանքի առաջարկի և մատակարարման կատարելագործում ➢ Չբուսաշրջության համաշխարհային շուկայում տարածաշրջանի մրցունակության բարձրացում 	<ul style="list-style-type: none"> ➢ ՄԺՅՓՉ ռազմավարության ձևավորում և իրականացում ➢ Բացահայտել շահառուներին և նրանց ներգրավվածությունը, ինչպես նաև գործողությունների ծրագիր և ժամանակացույց ➢ Լավ փորձի տարածում ՍԱ երկրների շրջանում, գիտելիքների և նորարարությունների փոխանցում ➢ Միջսահմանային մշակութային թեմաների երթուղիների ձևավորում, օրինակներ՝ զինուժ, խոհարարական, հնագույն քաղաքակրթությունների, հին ամրոցների և այլն: ➢ Հարկերից ազատումներ և այլ մեղմացնող գործիքներ՝ տարածաշրջանային ՄԺՅՓՉ արտադրանքի գների մրցունակությունն ապահովելու համար ➢ Տարածաշրջանային մշակութային ռեսուրսների թվային պահեստի կազմում, ներառյալ ոչ նյութական ակտիվները, ինչպիսիք են քաղադրատոմսերը, բանահյուսությունը, արվեստը, արհեստները և այլն ➢ Տարածաշրջանային և միջազգային նշանակություն ունեցող մշակութային ժառանգության համատեղ կառավարում 	<p>Կառավարություններ և ազգային իշխանություններ</p> <p>Մարզային և ազգային ասոցիացիաներ</p> <p>Մշակութային հաստատություններ</p> <p>Ծառայություններ և մատակարարներ</p> <p>Ուսումնական և հետազոտական կենտրոններ</p>





Project funded by
EUROPEAN UNION



			<ul style="list-style-type: none"> ➤ Միջսահմանային համատեղ ձեռնարկություններ, ներառյալ սոցիալական նախաձեռնությունները և սփին-օֆֆները ➤ Նորարարական համատեղ ապրանքների և ծառայությունների մշակում՝ ՄԺՅՓՉ և ծովափնյա և ծովային այլ գործողությունների միջև (ստորջրյա հնագիտություն, ջրային կուլտուրաներ և պեսկա-տուրիզմ, SPA, սպորտ և ժամանց և այլն) սիներգիաներ խթանելու համար ➤ Ցանցային շփման միջոցառումներ և զուգընկերային գործողություններ՝ տարբեր երկրների բիզնեսները իրար կապելու համար ➤ ՄԺՅՓՉ տարածաշրջանային ցուցադրության պլանավորում և բեմադրություն 	
2.	ՍԱԵ տարածաշրջանի՝ որպես ՄԺՅՓՉ դեստինացիայի համատեղ խթանում	<ul style="list-style-type: none"> ➤ ՍԱԵ տարածաշրջանի մշակութային ռեսուրսների և ժառանգության վերաբերյալ իրազեկության բարձրացում ➤ Բարելավված բրենդային պատկեր ➤ Եկամուտների և ժամանումների քանակի աճ ➤ Միջսահմանային համագործակցության խթանում 	<ul style="list-style-type: none"> ➤ Դաշինքի կամ տարածաշրջանային ցանցի ստեղծում տարածաշրջանային մակարդակում համատեղ մարքեթինգային ջանքերի նպատակով ➤ ՄԺՅՓՉ բրենդավորման տարածաշրջանային ռազմավարության ձևավորում և իրականացում ➤ Ազգային և միջազգային տեղեկատվական և զովագրային քարոզարշավ տարբեր լրատվամիջոցներով, ներառյալ առցանց կայքերը, սոցիալական լրատվամիջոցները, զանգվածային լրատվամիջոցները, ակադեմիական ամսագրերը ➤ Մասնակցություն զբոսաշրջության միջազգային ցուցահանդեսներին և առևտրային ցուցադրումներին ➤ ՄԺՅՓՉ խթանման համար ՍԱ-ի բոլոր երկրներում մի շարք միջոցառումների, սեմինարների և իրադարձությունների կազմակերպում և ներկայացում 	<p>Զբոսաշրջության և մշակույթի ազգային մարմիններ / նախարարություններ</p> <p>Ազգային ՄԺՅՓՉ արտադրանքի սոցիալիստներ</p> <p>Բիզնես օպերատորներ</p> <p>Հետազոտական ինստիտուտներ</p>

			<ul style="list-style-type: none"> ➤ Ներտարածաշրջանային զբոսաշրջության խրախուսումն հատուկ գովազդային արշավներով՝ ուղղված ՍԱԵ գործընկերների մշակութային տեսարժան վայրերի և առաջարկների ներկայացմանը ➤ Սևծովյան տարածաշրջանի ՄԺՅՓՉ-ին նվիրված վեբ կայքի ձևավորում և սպասարկում 	Գովազդային գործակալություններ
3.	ՄԺՅՓՉ ոլորտում համատեղ հետազոտական, կրթական և ուսուցողական նախաձեռնություններ	<ul style="list-style-type: none"> ➤ Խրախուսել ՍԱԵ մշակութային ժառանգության հետազոտական և տարածաշրջանային ուսումնասիրությունները ➤ ՄԺՅՓՉ որակավորման բարձրացում ➤ Գիտելիքների փոխանցում և լավագույն փորձի տարածում ➤ Ընդլայնված աշխատաշուկա՝ բարելավված աշխատունակությամբ, փորձագիտությամբ, ծրագրային հմտություններով և ՄԺՅՓՉ առնչվող հմտություններով ➤ ՍԱ երկրների միջև միջմշակութային փոխանակումներ ➤ Օտար լեզվի, այդ թվում՝ ՍԱ երկրների մայրենի լեզուների բարելավված գրագիտություն 	<ul style="list-style-type: none"> ➤ Համագործակցություն ՍԱ երկրների հետազոտական և ուսումնական հաստատությունների միջև մշակութային, ազգագրական և խոհարարական ժառանգության, արվեստի և պրակտիկայի համատեղ նախագծերի և ուսումնասիրությունների համար ➤ Համատեղ հետազոտական ենթակառուցվածքի ստեղծում: Միջսահմանային կենդանի լաբորատորիայի և տեխնոլոգիական կենտրոնների ստեղծում ՄԺՅՓՉ առնչվող հետազոտություններին և զարգացմանն աջակցելու համար ➤ Միջազգային հրավիրյալ դասախոսների և գործնական մասնագետների մասնակցությամբ սեմինարների և միջոցառումների կազմակերպում ՍԱ երկրներում՝ քննարկումների, գիտելիքի տարածման և ՄԺՅՓՉ գործողությունների և արտադրանքի հետ կապված լավ փորձի փոխանցման նպատակով ➤ ՍԱ երկրների միջև ՄԺՅՓՉ ոլորտում սովորելու փոխանակման նախաձեռնություններ և պրակտիկա ➤ Լեզվի դասընթացներ և լեզուն կատարելագործելու արձակուրդներ՝ լեզվակիր միջավայրում պրակտիկայի հնարավորությամբ ➤ ՍԱԵ ազգերի խոհարարական պրակտիկայի, բանահյուսության, արվեստի և արհեստների փոխանակում հատուկ մշակված վեբ հարթակներում, 	<p>Ակադեմիական և հետազոտական հաստատություններ</p> <p>Կառավարություններ, ազգային և տեղական իշխանություններ</p> <p>Մասնագիտական ուսուցման կենտրոններ</p> <p>Մարդկային ռեսուրսների գործակալություններ</p> <p>Բիզնես օպերատորներ</p>



		<ul style="list-style-type: none"> ➤ Միջազգային աշխատանքային փորձի հնարավորություն 	<p>կազմակերպված վերապատրաստման դասընթացներ և կարճաժամկետ ուսումնական ուղևորություններ</p> <ul style="list-style-type: none"> ➤ ՄԺՖՉ տարածաշրջանային հետազոտական գիտաժողովի կազմակերպում ➤ ՄԺՖՉ փորձագետների մասնագիտական որակավորման ձևավորում 	
Ազգային մակարդակում				
1.	Ռազմավարական պլանավորում և ազգային քաղաքականություն ՄԺՖՉ վերաբերյալ	<ul style="list-style-type: none"> ➤ ՄԺՖՉ-ը նույնականացնել, ճանաչել և գերակայություն սահմանել՝ որպես կայուն զարգացման գործիք ➤ Ապահովել շահառուների ներգրավվածությունը, ձեռնարկվելիք գործողությունները և պարտականությունների շրջանակները ➤ Համապատասխան հաստատություններին և կառավարական մարմիններին ներգրավել ՄԺՖՉ քաղաքականության պլանավորման և մշակման գործընթացներում ➤ Ազգային կարգավորիչ դաշտը համահունչ դարձնել միջազգային նորմերին 	<ul style="list-style-type: none"> ➤ ՄԺՖՉ առնչվող քաղաքականությունների իրականացման համար անհրաժեշտ ռազմավարությունների, գործողությունների ծրագրերի, համապատասխան կանոնակարգերի և օրենսդրական գործիքների ձևավորում և մշակում ➤ Շահառուների, նրանց պարտականությունների և ՄԺՖՉ զարգացման գործում նրանց ներգրավվածության հստակեցում ➤ ՄԺՖՉ ընդգրկումը և նույնականացումը համապատասխան օրենսդրության մեջ (օրինակ՝ Չբոսաշրջության մասին օրենքում) ➤ Ազգային օրենսդրության ներդաշնակեցում ԵՄ նորմերին և կանոնակարգերին 	<p>Ազգային կառավարություններ</p> <p>Չբոսաշրջության խորհուրդներ կամ խորհրդատվական խորհուրդներ՝ բոլոր համապատասխան շահառուների ներկայացուցիչներով</p>



Project funded by
EUROPEAN UNION



2.	Աջակցել ՄԺՅՁ զարգացմանը՝ ստեղծելով բարենպաստ գործարար և սոցիալական միջավայր	<ul style="list-style-type: none"> ➢ Խրախուսել բիզնեսի գործունեությունը ՄԺՅՁ ոլորտում ➢ Խրախուսել համայնքի մասնակցությունը փորձառական զբոսաշրջություն արտադրանքի ստեղծման գործում ➢ ՄԺՅՁ զարգացման ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ դրույթներ ➢ Խթանել ՄԺՅՁ առնչվող հետազոտական և զարգացման նորարարությունները և խելացի լուծումները ➢ Բարձրացնել ՄԺՅՁ աշխատողների աշխատունակությունը և որակավորումը 	<ul style="list-style-type: none"> ➢ Սկսնակ բիզնեսների ֆինանսավորում, տեխնիկական աջակցություն և խորհրդատվություն ➢ Դրամաշնորհների, մրցանակների, վարկերի և ֆինանսավորման այլ գործիքների մատչելիության ապահովում: ՄԺՅՁ մեջ ներդրումների խթանում: ➢ ՄԺՅՁ արտադրանքի և ծառայությունների հարկային մեղմացումներ ➢ Նորարարությունների խրախուսում ➢ Տրանսպորտային, կոմունալ և կապի ենթակառուցվածքների կառուցում և սպասարկում: Մշակութային վայրերի մատչելիության, էլեկտրականության և ջրամատակարարման, գերարագ ինտերնետի և այլնի ապահովում: ➢ Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում (զբոսաշրջության տեղեկատվական կենտրոններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, արտադրանքի ասոցիացիաներ և այլն) ➢ Համագործակցություն համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ ➢ Բիզնես գործունեության ավելի կոշտ մոնիտորինգ և վերահսկողություն՝ որպես միջոց «ստվերային», չդիտարկվող տնտեսության դեմ ➢ Ուսուցում և տեղեկատվություն ՄԺՅՁ մասնագետների համար ➢ Իրազեկման քարոզարշավներ տեղական համայնքների շրջանում ՄԺՅՁ խթանելու նպատակով և մշակութային փոխանակման մեջ և այցելուների հետ անձնական փոխգործակցության մեջ կամավորների մասնակցության մոտիվացում: 	<p>Ազգային կառավարություններ / համապատասխան մարմիններ</p> <p>Ծառայություններ և մատակարարներ</p> <p>Արտադրանքի ասոցիացիաներ</p>
----	---	---	--	--



3.	Դեպի ուժեղ ՄԺՖՓՁ առաջարկ	<ul style="list-style-type: none"> ➢ Ապահովել ՄԺՖՓՁ-ի աճը և տնտեսական կայունությունը ➢ Բարձրացնել ՄԺՖՓՁ մրցունակությունը ➢ Պաշտպանել և պահպանել մշակութային ժառանգությունը 	<ul style="list-style-type: none"> ➢ Ընդլայնված արտադրանքի պորտֆոլիո, ներառյալ մի շարք փորձառական զբոսաշրջության վրա կենտրոնացած փաթեթներ ➢ Բարձրորակ ծառայությունների ապահովում: Սոնիտորինգի և վերահսկողության ապահովում ➢ Անհրաժեշտ զբոսաշրջային ենթակառուցվածքի և վերնաշենքերի կառուցում, ինչպիսիք են կացարաններն ու սննդի հաստատությունները, թանգարանները, պատկերասրահները, թատրոնները, արվեստի և մշակույթի կենտրոնները և այլն ➢ Ավելի շատ նպատակային մշակութային գրավչությունների և իրադարձությունների ստեղծում ➢ Արտադրանքի նորարարությունների խրախուսում և լավագույն փորձի փոխանցում ➢ ՄԺՖՓՁ արտադրանքի թվայնացում և վիրտուալ փորձառությունների առցանց առաջարկների ստեղծում ➢ Որակի ապահովման նպատակով սերտիֆիկացման և պիտակավորման խրախուսում ➢ ՄԺՖՓՁ մատակարարների, հաստատությունների և տեղական համայնքների միջև համագործակցության և սիներգիաների ուժեղացում: ➢ Մշակույթի և ժառանգության վրա հիմնված նյութական և ոչ նյութական ակտիվների արժևորում ➢ Մշակութային միջոցառումների կազմակերպում 	<p>Ազգային իշխանություններ / Չբոսաշրջության նախարարություն / Մշակույթի նախարարություն</p> <p>Չբոսաշրջային ասոցիացիաներ / այլ ոչ առևտրային կազմակերպություններ</p> <p>Բիզնեսներ և ծառայությունների մատակարարներ</p> <p>Տեղական համայնքներ</p>
4.	ՄԺՖՓՁ-ի խթանում	<ul style="list-style-type: none"> ➢ ՄԺՖՓՁ իրազեկվածության մակարդակի բարձրացում 	<ul style="list-style-type: none"> ➢ Ազգային արտադրանքի ՄԺՖՓՁ ասոցիացիայի ստեղծում, որին անդամակցում են տարբեր շահառուներ, ովքեր 	<p>Ազգային կառավարություններ և</p>



Project funded by
EUROPEAN UNION



		<ul style="list-style-type: none"> ➤ Բարձրացնել ՍԱ երկրների միջազգային իմիջը՝ որպես ՄԺՖՉ ղեստինացիաներ ➤ Ներքին ՄԺՖՉ-ի խթանում ➤ ՄԺՖՉ ղեստինացիաների մարբերինգը և կառավարումը 	<p>մասնակցում են ՄԺՖՉ արտադրանքի ստեղծմանը, խթանմանը, բաշխմանը կամ կառավարմանը</p> <ul style="list-style-type: none"> ➤ Գովազդ և ազգային գովազդային քարոզարշավ՝ ուղղված միջազգային և ներքին շուկաներին թիրախավորող ՄԺՖՉ-ին ➤ Այցելուների վերահսկում ՄԺՖՉ տեսարժան վայրերում՝ ապահովելով դրանց կայուն օգտագործումը և պահպանումը ➤ ՄԺՖՉ փաթեթների տարածում առցանց վաճառքի և միջնորդների միջոցով (տեղական և միջազգային) 	<p>իշխանություններ / Չբուսաշրջության նախարարություն</p> <p>Տեղական իշխանություններ</p> <p>ՄԺՖՉ ազգային ասոցիացիաներ</p>
--	--	--	---	---



Եզրակացություններ

ՄԺՀՓՉ-ը ապագա զարգացման հսկայական ներուժ ունի և պետք է դիտարկվի որպես գերակա ոլորտ ՍԱԵ տարածաշրջանի համար: Այն ապահովում է կայուն զբոսաշրջության զարգացում, տնտեսական աճ և համայնքների ներգրավում: ՍԱԵ տարածաշրջանում գտնվող երկրները պետք է միավորեն ուժերը՝ տարածաշրջանային մակարդակում ՄԺՀՓՉ խթանելու և դրա զարգացման ուղղությամբ համակարգված քաղաքականություն որդեգրելու համար: Ռազմավարական նշանակության հիմնական քայլերն են՝

- Խթանել ՍԱԵ տարածաշրջանը՝ որպես ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության ընդհանուր դեստինացիա
- Ստեղծել ՄԺՀՓՉ ուժեղ առաջարկ, ներառյալ միջսահմանային թեմատիկ երթուղիները և մշակութային արտադրանքը
- Բարձրացնել ոլորտի մրցունակությունը՝ ապահովելով գնի և արժեքի հիանալի հարաբերակցություն
- Պաշտպանել, պահպանել և արժևորել մշակույթի և ժառանգության վրա հիմնված ակտիվները
- Ձեռնարկատիրական սոցիալական և բիզնես նախաձեռնությունների համար ապահովել ֆինանսական խթաններ, տեխնիկական օժանդակություն և աջակցություն
- Խրախուսել տեխնոլոգիական լուծումները, վեբ հավելվածները և ՄԺՀՓՉ առաջարկի, վաճառքի և խթանման թվայնացումը
- Խթանել միջսահմանային համագործակցությունը, ներառյալ համատեղ բիզնես ձեռնարկությունները, հետազոտական, զարգացման, կրթական և վերապատրաստողական գործողությունները:



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- Adrian, Ş. C., 2017. SWOT Analysis of the Romanian Tourism Market Component of the Marketing Plan. *“Ovidius” University Annals, Economic Sciences Series*, XVII(2).
- Akova, O. & Baynazoğlu, M. E., 2012. *Congress Tourism in Turkey: SWOT Analysis and Related Strategies*.
- Aliyeva, L. & Rzayeva, S. M., 2020. *The Main Directions of the Development of Tourism in the Economy of Azerbaijan*.
- Anon., 2016. *Strategic Roadmap for the Development of Specialized Tourism Industry in the Republic of Azerbaijan*.
- Associazione Strada Europea della Ceramica, 2018. *European Route of Ceramics*. [Ungwüŕ] Available at: <https://www.europeanrouteofceramics.eu/>
- Cultural Routes of Georgia, 2017. *Cultural Routes of Georgia*. [Ungwüŕ] Available at: <http://culturalroutes.gov.ge/Contact.aspx>
- Ecological Counseling Center Cahul, 2012. *Assessment of National Tourism Development Strategy - Republic of Moldova*.
- ENI CBC Black Sea Basin Programme 2014-2020, 2020. *Territorial Analysis Interreg NEXT Black Sea Basin Programme*.
- European Commission, 2021. *European Neighbourhood Policy And Enlargement Negotiations*. Available at: https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/countries/check-current-status_en
- HERAS, 2014. *Submarine Archeological Heritage of the Western Black Sea Shelf*.
- Ivanov, S. & Dimitrova, M., 2013. Managing Tourism in Bulgaria, between Mission Impossible and New Hope. In: *European Tourism Planning and Organisation System*:Channel View Publications.
- Karabaza, I., Kozhukhova, T. & Ivanova, N., 2020. Development of Tourism in Ukraine: Trends and Factors that Create the Negative Image. *Scientific Conference on Economics and Entrepreneurship Proceedings*.
- Ministry of Tourism of the Republic of Bulgaria, 2014-2020. *Bulgaria: A Discovery to Share*. Available at: <https://bulgariatravel.org>
- Ministry of Tourism of the Republic of Bulgaria, 2014-2020. *Register of the Tourist Festivals and Events*. Available at: <http://rta.tourism.government.bg/>
- Ministry of Tourism of the Republic of Bulgaria, 2015. *National Strategy for Sustainable Tourism Development of the Republic of Bulgaria, 2014-2030*.
- Ministry of Tourism of the Republic of Bulgaria, 2021. Available at: <https://www.tourism.government.bg/>
- Muresan, M. L. & Popa, R. A., 2019. Tourism Industry Evolution in Case of Bulgaria and Romania. *Studia Universitatis Babeş-Bolyai Negotia*, Հասարակ 64, էջ 51-78.
- Ozdemir, Y. & Demirel, T., 2018. Prioritization of Tourism Strategies in Turkey Using a SWOT-AHP Analysis. *International Journal of Business and Industrial Marketing*, 3(2), էջ 34-45.



PRO EXTOUR, 2021. *Needs Assessment Report: Setting Strategic Goals for Heritage- and Culture-based Experiential Tourism in the BSB.*

TESIM, 2018. *TESIM ENI CBC.*

UNESCO, 1992-2021. *World Heritage List.*

UNWTO, 2021. *World Tourism Barometer and Statistical Annex.*

Available at: <https://www.e-unwto.org/loi/wtobarometereng>

UNWTO, 2018. *Tourism in the BSEC Region.* s.l.:s.n.

UNWTO, 2020. *International Tourism Highlights, 2020 Edition.*

UNWTO, 2021. *World Tourism Barometer and Statistical Annex.*

USAID, 2018. <https://www.usaid.gov>.

Available at: <https://www.usaid.gov/moldova/fact-sheets/fact-sheet-moldova-competitiveness-project-tourism-industry-0>



The editor of the material: Yerevan State University

Address: Armenia, 0025 Yerevan, 1 Alex Manoogian str.

Phone: +374 460 710000

E-mail: info@ysu.am

Website: www.ysu.am

Joint Operational Programme Black Sea Basin 2014-2020

Yerevan State University

March 2021

Joint Operational Programme Black Sea Basin 2014-2020 is co-financed by the European Union through the European Neighbourhood Instrument and by the participating countries: Armenia, Bulgaria, Georgia, Greece, Republic of Moldova, Romania, Turkey and Ukraine. This publication was produced with the financial support of the European Union. Its contents are the sole responsibility of Yerevan State University and do not necessarily reflect the views of the European Union.